ՀԹ. ՏԵՐԻ

Բանալի

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄԱՆԱԻԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Հոկտեմբեր

2022

Ա. ԷՋՄԻԱԾԻՆ



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«ԷՋՄԻԱԾԻՆ»
կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրակազմ

Գլխաւոր խմբագիր՝ **Գէորգ Մադոյեան**

Լեզուաոճական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,**
Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոզոեան,
Խաչիկ Ռաֆֆի Գազէր,
Վարդան Դեւրիկեան,
Աբրահամ Տէրեան,
Գէորգ Տէր-Վարդանեան

“Etchmiadzin”
Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,**
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer,
Vardan Devrikyan,
Abraham Terian,
Gevorg Ter-Vardanyan

«Эчмиадзин»
Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

Главный редактор **Геворк Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,**
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Вардан Деврикян,
Абраам Терян
Геворк Тер-Варданян

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«... չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու...»
(Մատթ. Ի. 28)։

Ազգային պատմության ցանկացած շրջափուլում Հայոց Կաթողիկոսները եղել են քրիստոսավանդ հավատքի անսասանության ու հայ ժողովրդի հոգեւոր-ազգային անվտանգության նվիրյալ պահապանները։ Հատկապես վերջին երկու հարյուրամյակներում, երբ մարդկային եւ հայ ազգային-եկեղեցական կյանքը ժամանակ առ ժամանակ փոթորկում են տարաբնույթ մարտահրավերներն ու հիմնախնդիրները, Հայոց Հայրապետները բազմաչարչար տքնությամբ շարունակել եւ շարունակում են իրենց առաքելաշավիղ ծառայությունը։ Հայ Եկեղեցու շնորհալի ու բազմաբեղուն գահակալների առաջին շարքերում է նաեւ ներկայիս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի քահանայական ձեռնադրության եւ օծման 50-ամյակը բոլորեց այս տարվա հոկտեմբերի 15-ին։

Հիսուն տարի առաջ եկեղեցական անդաստանում իր հաստատուն քայլերն անող երիտասարդ նորաօծ կուսակրոն քահանան շատ կարճ ժամանակում դարձավ Իր ուսուցչի՝ երջանկահիշատակ Վազգեն Ա. Հայրապետի գաղափարակիցն ու եռանդուն լծակիցը։ Համակված լինելով իր նախորդների ազգային-եկեղեցական տեսլականով՝ այն ժամանակ Գարեգին աբեղա Ներսիսյանն անմիջապես նվիրվեց հայ երիտասարդների կրթության եւ հայ հոգեւորականների մատաղ սերնդի պատրաստության առաքելությանը, որը նախանձախնդիր Հայրապետը շարունակում է իրագործել մինչ օրս։ Իր ողջ ծառայության ընթացքում Վեհափառ Հայրապետը ծավալել է բազմաբովանդակ գործունեություն, որն ընդգրկում է կրթական-քարոզչական, գիտահրատարակչական, եկեղեցաշինարարական, ընկերային, համազգանվեր, միջեկեղեցական ու միջկրոնական

եւ բազմաթիվ այլ՝ հոգեւոր ու հայրենանվեր կյանքին առնչվող ոլորտներ։ Աստվածային շնորհներով՝ իմաստությամբ, աստվածաբանական, եկեղեցաքաղաքական սրատեսությամբ, անբեկանելի ու անկոտրում կամքով ու նախանձախնդրությամբ, անսպառ եռանդով եւ կազմակերպչական մեծ կարողություններով զարդարված Վեհափառ Հայրապետը անցյալ դարավերջի եւ ԻԱ. դարասկզբի հայ եկեղեցականի կատարելատիպ է երիտասարդ հոգեւորականների համար։ Իր հայրենասիրական, եկեղեցասիրական, մարդասիրական հայացքներով ու բարոյախրատական ուսուցումներով նա խանդավառում է հայ զավակց սրտերը, նոր շունչ ու երանգ հաղորդելով ազգային-եկեղեցական մեր կյանքին։ Հայ Եկեղեցու Հովվապետի համբավը, ճեղքելով նեղ ազգային սահմանը, տարածվել է նաեւ արտերկրում, քրիստոնեական ավանդական մյուս եկեղեցիներում ու միջազգային տարաբնույթ կազմակերպություններում։ Ասվածի լավագույն վկայությունը այն շքանշաններն ու կոչումներն են, որոնց արժանացել է Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետը։

Մանրադիտակի տակ հետեւելով Վեհափառ Հայրապետի կենաց ընթացքին՝ կարելի է աներկբա ու պնդել, որ նրա բովանդակ կյանքը անձնազոհության մի խտացում է՝ համաձայն Ավետարանական այն խոսքի, որ «եթե ցորենի հատիկը հողի մեջ չընկնի ու չմեռնի, միայն ինքը կմնա, բայց եթե մեռնի, շատ արդյունք կտա» (Հովհ. ԻԲ. 24). ներկա սերունդներն արդեն իսկ Վեհափառ Հայրապետի հաստատակամությունից ու վճռականությունից ծնված պտուղների կենդանի վկաներն են։

Վստահ ենք, որ Ամենայն Հայոց Հայրապետի լայնածավալ եւ արդյունավոր աշխատանքի պտուղները դեռ երկար տարիներ զորացնելու են հավատացյալ հայորդիներին։ Ամենողորմ եւ գթառատ Տիրոջից հայցում ենք, որ Նորին Սրբությանը շնորհի երկար տարիների քաջառողջ կյանք, անկոտրում կամք եւ անսպառ եռանդ՝ քրիստոսառաք Հայրապետական տեսլականը կյանքի կոչելու համար։

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ս. Էջմիածնի մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՄՆԻ «ՎԱՉԵ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

(6 հոկտեմբերի 2022 թ.)

Պատվարժա՛ն հոգեւոր հայրեր,

Գիտաժողովի՛ պատվարժան մասնակիցներ,

Սիրելի՛ ներկաներ,

Ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ բերում Հայրապետական Մեր օրհնությունը։

Աստծու բարեխնամ կամոք տասը տարի առաջ Մայր Աթոռում հիմնադրվեց մատենադարան՝ մեր Եկեղեցու արժանավոր զավակներ մեծահարգ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյանների սրտաբուխ նվիրատվությամբ։ Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ ազգիս եւ Մայր Աթոռի մեծանուն բարերարների անունով կոչված այս կարեւոր հաստատությունն այսօր հանդիսանում է հայ տպագիր ժառանգության պահպանման եւ դպրության ու գիտական մտքի զարգացումը խթանող կաճառ։

Գիրքը եւ գիրը առանձնակի կարեւոր դերակատարություն են ունեցել ազգային մեր կյանքում՝ սերունդներին փոխանցելով եւ ի պահ տալով նախնյաց հոգեմտավոր ձեռքբերումները, գիտական նվաճումները, գրական-գեղարվեստական աշխատությունները, հայոց բազմադարյա պատմության վկայությունները։

Առաքելական մեր Եկեղեցին, որի ծոցում սկզբնավորվել է հայկական դպրությունը, մշտապես հոգացել է մեր գրական ժառանգության պահ-

պանման ու հարստացման համար։ Մեր վանքերում ու եկեղեցիներում շարունակ ընդօրինակվել են ձեռագրեր, կատարվել թարգմանություններ, ծնունդ առել ոչ միայն սուրբգրական, աստվածաբանական, այլեւ գիտական ուսումնասիրություններ ու գեղարվեստական գործեր՝ համոզումով, որ գիրքը, գիտությունն ու լուսավորությունը երաշխիքներն են զարգացման ու առաջընթացի։ Հայ գրական ժառանգությունը փորձություններով լի մեր պատմության մեջ մեր ժողովրդի համար եղել է նաեւ հայ քրիստոնեական հոգու կենսունակության ավիշ եւ ինքնության պահպանման զրահ ու հենարան։ Այս գիտակցումով տպագրության գյուտի սկզբնավորումից կարճ ժամանակ անց հայ հոգեւորականները հետամուտ եղան ազգային գրատպության սկզբնավորմանն ու զարգացմանը։ Տեւական մի շրջան գրեթե բոլոր հայ տպագրիչները եղել են եկեղեցականներ։

Մեր ժողովրդի կյանքում գրատպության ասպարեզում վճռորոշ եղավ 1771 թվականը, երբ երջանկահիշատակ Սիմեոն Ա. Երեւանցի Կաթողիկոսի ջանքերով հաստատվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանը։ Հայրենիքում հիմնված առաջին տպարանը կարեւոր առաքելություն ստանձնեց հայ գրատպության բնագավառում, որով հետագայում Հայաստանում ծավալվեց ու զարգացավ գրատպությունը եւ գրադարանների ստեղծումը։ Այս առումով բնորոշ է նաեւ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի կառուցումը եւ տասնամյա գործունեությունը՝ որպես լավագույն վկայություն, որ մեր Եկեղեցին շարունակելու է նպաստ բերել մեր դարավոր գրական ժառանգության պահպանմանը եւ մեր ժողովրդի գիտամշակութային կյանքի առաջընթացին։

«Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի 10-ամյակին նվիրված այս գիտաժողովի առիթով Հայրապետական Մեր օրհնությունը եւ բարձր գնահատանքն ենք հղում ազգային մեծազնիվ բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյաններին, որոնց աստվածահաճո նախաձեռնության եւ հոգածության արդյունքում Մայր Աթոռի սրտում իր կարեւոր առաքելությունն է բերում այս հանրօգուտ կառույցը, որի գործունեության պտուղները վայելում են մեր ժողովուրդը, գիտության անդաստանի մշակները, ուսանողությունը, եկեղեցականներն ու ճեմարանականները։ Մեր օրհնությունն ենք բերում «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրենին եւ բոլոր աշխատակիցներին, որոնց ամենօրյա ծառայության արդյուն-

քում մատենադարանի առաքելությունը զարդարվում է նորանոր հաջողություններով։

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր Զորավոր Աջի ներքո պահի ու պահպանի մեր ժողովրդին ի Հայրենիս եւ ի Սփյուռս եւ առատ դարձնի հոգեւոր ու մտավոր արգասիքները մեր ազգային կյանքում։

Բարի ընթացք ու աշխատանք ենք մաղթում գիտաժողովին։

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ 92-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 7 հոկտեմբերի 2022 թ.)

Մեծարգո՛ նախագահ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության տիար Պերճ Սեդրակյան,

Բարեգործականի՛ պատվարժան անդամներ,

Ուրախ եմ ողջունելու ամենքիդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում։

Դուք այցելել եք ձեր հարազատ հայրենական տուն, որի պայծառության ու շինության մեջ մեծ ու անգնահատելի է ձեր վաստակը։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության անունը եւ գործունեությունը իր սկզբնավորման օրվանից անքակտելիորեն կապված է մեր Սուրբ Եկեղեցու եւ ի մասնավորի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը։

Գոհունակությամբ եմ արձանագրում, որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության համագումարները որոշակի պարբերականությամբ կազմակերպվում են Հայաստանում, ինչը եւս մեկ ցայտուն վկայություն է Միության հայաստանակենտրոն գործունեության։ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը մշտապես իր զորակցությունն է բերել հայրենի անկախ պետականության վերակերտմանը՝ առաջին օրերից գործուն մասնակցություն ունենալով պետականաշինության սրբազան առաքելության մեջ։ Զափազանց խոսուն է իրողությունը, որ Հայաստանի Հանրապետության առաջին Ազգային հերոսներից է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության երախտարժան նախագահ տիար Ալեք Մանուկյանը, ով իր ազնիվ տիկնոջ՝ Մարի Մանուկյանի հետ, հանգչում է Վեհարանի այս պատմական տարածքում։ Եվ մենք միասին այս հանդիպումից առաջ երախտագետ սրտով մեր աղոթքը բարձրացրեցինք նրանց, նրանց մեծանուն դստեր՝ լուսահոգի Լուիզ Մանուկյան Սիմոնի եւ Հայկական Բարեգործական ազգանվեր հաստատության երախտավորների հոգիների հանգստության ու խաղաղության համար։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը այսօր էլ նույն նախանձախնդրությամբ եւ ուժականությամբ շարունակում է իր գործունեությունը մեր հայրենիքում եւ ողջ հայ կյանքում։ Միության գործունեության առանցքում մեր ժողովրդի անվտանգության ապահովումն է, ինքնության անաղարտ պահպանությունը, նրա հոգեւոր, բարոյական զորացումը եւ համազգային միաբանության ամրապնդումը։ Բազմաթիվ են բարեգործականի հայրենաշեն եւ ազգանվեր գործունեության վկայությունները՝ ինչպես Հայաստանում, այնպես եւ Սփյուռքում։ Շնորհիվ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության եւ նրան անդամակցող ազնիվ բարերարների՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո վերակառուցվել են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, եկեղեցական կառույցներ ու շինություններ՝ կենսունակ պահելու մեր ժողովրդի հավատքի ապրումն ու աստվածասեր ոգին։ Բարեգործականի ազնիվ հովանավորության շնորհիվ բազմաթիվ երեխաներ հայեցի կրթություն ու դաստիարակություն են ստանում Հայորդյաց տներում, իսկ կարիքավոր բազմաթիվ հայորդիներ սնունդ են ստանում բարեգործական ճաշարաններում։

Սիրելիներ, այս օրերին, երբ մեր ժողովուրդը դիմակայում է ծանրագույն մարտահրավերներ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 92-րդ համագումարի կազմակերպումը մայր հայրենիքում՝ հայրենաբնակ մեր ժողովրդին զորակցության ու քաջալերանքի եւս մեկ կարեւոր ուղերձ է։ Օրեր առաջ էր, ինչպես գիտեք, երբ Ադրբեջանը ոտնահարելով միջազգային իրավունքի բոլոր նորմերը՝ հատելով բարոյականության եւ մարդասիրության հնարավոր բոլոր սահմանները, վերստին ագրեսիա ու ռազմական գործողություններ իրականացրեց մեր ժողովրդի նկատմամբ Հայաստանի բուն տարածքում։ Հրապարակային տարբեր հարթակներում արդեն իսկ ցուցադրվել են այդ օրերին Ադրբեջանի զինված ուժերի վայրագ գործողությունները՝ մեր զինվորներին, այդ թվում նաեւ կանանց անդամահատելու եւ անզեն գերեվարվածներին գնդակահարելու զարհուրելի տեսարաններով։ Այդ անմարդկային ու նվաստացուցիչ տեսարանները չեն կարող անտարբեր թողնել եւ ոչ մեկ անձի։

Այսօր առավել մեծ սրությամբ է ծառացած մեր ժողովրդի ապահովության եւ անվտանգության խնդիրը։ Մարդկային, տարածքային ու նյութական մեր կորուստները շարունակվում են նաեւ 44-օրյա ողբերգական պատերազմից հետո։ Հայրենիքում գտնվելով՝ դուք ականատես եք

Հայաստանի ու Արցախի ծանր իրավիճակին, անմիջականորեն եք ծանոթանում այն դժվարություններին, որոնց դիմակայում է հայրենաբնակ մեր ժողովուրդը՝ ձեր քույրերն ու եղբայրները։ Վստահաբար այս օրերի ձեր քննարկումներում կարեւոր անդրադարձ պիտի կատարեք այնպիսի խնդիրների, որոնք առնչվում են մեր ժողովրդի առջեւ ծառացած անվտանգային մարտահրավերներին։ Վստահ եմ նաեւ, որ իր կոչմանը հավատարիմ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը եւ նրա անդամները պիտի շարունակեն նոր հանձնառությամբ լծվել հայրենաշեն ու ազգապահպան ծրագրերի իրականացմանը։

Մեր ժողովրդի գոյատեւման եւ առաջընթացի միակ ճանապարհը ազգային ու հոգեւոր առողջ ուժերի համախմբումն է պետականությունը պահպանելու եւ ամրացնելու գաղափարի շուրջ։ Անկախ պետությունն է, որ երաշխավորում է մեր ժողովրդի բարեկեցությունը, ապագայատեսիլ ձգտումների իրագործումը, հարատեւությունն ու մեր ազգային, հոգեւոր ինքնության անխաթար պահպանումը։

Միածնաէջ այս սրբավայրից ի սրտե աղոթում եմ, որ Բարձրյալն Աստված պահի ու պահպանի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության երախտավորներիդ, կյանքի քաջառողջ, արեւշող բազում օրեր շնորհի ամենքիդ, բոլոր բարի գործերը եւ ձեռնարկները պսակի հաջողություններով։ Թող Տերը օգնական ու պահապան լինի ազգիս հայոց, այսօր եւ միշտ. ամեն։

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ 92-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԻԹՈՎ

(Երեւան, 8 հոկտեմբերի 2022 թ.)

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Մեծարգո՛ նախագահ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության,

Սիրելի՛ ներկաներ,

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 92-րդ համագումարի առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում ձեզ ամենքիդ։

Այսօր վերստին անդրադառնում ենք Միության ազգաշահ ու եկեղեցանվեր գործունեությանը։ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը ավելի քան իր 100-ամյա գործունեությամբ մնայուն հետք է թողել մեր ժողովրդի նորագույն շրջանի պատմության մեջ։ Աշխարհի տարբեր երկրներում հաստատված կառույցներով Բարեգործականը նախանձախնդրորեն ծառայել է աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ կարեւոր նպաստ բերելով ազգիս զավակների կրթության, ինքնության ճանաչման, հայրենասիրական ոգու զորացման, ազգային եւ հայրենական կյանքի առաջընթացի ու բարօրության համար։

«Մի՛ մոռացեք բարեգործությունը եւ ձեր ունեցած բարիքներին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի՛ պատարագներն են հաճելի Աստծուն»,— ասում է առաքյալը (Եբր. ԺԳ. 16)։ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նվիրյալները այս պատգամով են մշտապես իրենց սպասավորությունը մատուցել ազգային-եկեղեցական անդաստանում։ Խոնարհում ենք բերում եւ աղոթքով հիշում Բարեգործականի մեծանուն նախագահներ Պողոս Նուբար Փաշային, Գալուստ Գյուլբենկյանին, Զարեհ Նուբարին, Արշակ Կարագյոզյանին, Ալեք Մանուկյանին, Լուիզ Մանուկյան Սիմոնին եւ բոլոր լուսահոգի անդամներին, որոնց ուղենշած ճանապարհով ներկայիս նույնպես Հայկական Բարեգործական

Ընդհանուր Միությունը նորանոր հաջողություններ է արձանագրում իր քաջեռանդ նախագահի՝ տիար Պերճ Սեդրակյանի առաջնորդությամբ։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության տարեկան այս համագումարը տեղի է ունենում Հայաստանի եւ Արցախի համար դժվարին ժամանակաշրջանում։ Մեր ժողովուրդը կանգնած է նոր կորուստների վտանգների առջեւ։ Բաղձալի խաղաղության հաստատման շուրջ ընթացող գործընթացները ներկայացվող պարտադրանքներով լուրջ տարակուսանքներ են հարուցում Հայաստանի տարածքային ամբողջականության, Արցախի կարգավիճակի եւ տարածաշրջանում երկարատեւ կայունության հաստատման առնչությամբ։ 44-օրյա պատերազմի, ինչպես նաեւ Հայաստանի դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների արհավիրքները հաղթահարելու համար այսօր Հայաստան ու Արցախ մեր հայրենիքը կարիքն ունի աշխարհասփյուռ մեր ժողովրդի համախմբման, այլեւ բարեկամ պետությունների շարունակական սատարումի։ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը իր բազմաթիվ մասնաճյուղերով եւ տարբեր երկրներում գործող ազգային հաստատությունները համագործակցաբար աննվազ ջանքեր պիտի ներդնեն գործուն միջոցներով հետապնդելու ազգային մեր շահերը եւ մշտահունչ պահելու կոչը մեր ժողովրդի եւ հայրենիքի հանդեպ արդարության հաստատման։ Ներքին եւ արտաքին մարտահրավերների դիմագրավման համար անհրաժեշտ եւ հրատապ է աշխարհասփյուռ մեր ժողովրդի միաբանությունը, հայրենիք-սփյուռք հարաբերությունների վերաիմաստավորումն ու զորացումը, ազգային մեր ողջ ներուժի նպատակային մեկտեղումը։

Գոհունակություն է Հայրապետիս համար հաստատել, որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը միշտ եղել է հայրենիքի կողքին՝ ինչպես Առաջին Հանրապետության, այնպես էլ խորհրդային ժամանակներում եւ անկախության տասնամյակներին՝ մշտապես արձագանքելով մեր ժողովրդի կարիքներին ու պահանջներին։ Բարեգործականի գործունեության հիմնական առաջնահերթություններից է եղել ու շարունակում է մնալ զորակցությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությանը։ Մեր Սուրբ Եկեղեցու հետ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության բազմաթիվ իրագործումներով արգասավորված գործակցությունը կրթական, մշակութային, սոցիալական, եկեղեցաշինական բնագավառներում օրհնություն է դարձել հայ կյանքից ներս։ Հայկական Բա-

րեգործական Ընդհանուր Միությունը արցախյան ազատագրական շարժման տարիներին, այդուհետ եւ վերջին պատերազմի ողջ ընթացքում զանազան ծրագրերի միջոցով զորակից եղավ արցախահայությանը, գերեվարված եւ զոհված զինվորների ընտանիքներին, վիրավորներին եւ տեղահանվածներին։ Արցախահայության նկատմամբ Բարեգործականի հոգածության արտահայտությունն էր նաեւ Մեզ հետ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանի այցելությունը Արցախ։

Մեր Սուրբ Եկեղեցին, հավատարիմ հայրենական կյանքի առաջընթացի, պետականության զորացման եւ ազգային իղձերի իրականացման տեսլականին, շարունակելու է կարելի իր նպաստը բերել առկա հիմնախնդիրների հաղթահարմանը, մեր երկրի խաղաղ ու ապահով ապագայի կերտման եւ ազգի բարօրությանն ուղղված ջանքերին։

Հայկակա՛ն Բարեգործական Ընդհանուր Միության մեծարգո նախագահ եւ պատվարժան անդամներ, Աստծու օգնականությունն ու օրհնությունն ենք հայցում ձեզ ազգանպաստ ձեր առաքելության մեջ։ Մեր աղոթքն է, որ Ամենակալն Աստված նորանոր հաջողություններով ու ձեռքբերումներով արդյունավորի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության աստվածահաճո ծառայությունը՝ ի բարօրություն մեր ժողովրդի եւ ի շինություն մեր հայրենիքի։

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերը եւ խաղաղությունը լինեն մեզ ամենքիս հետ, այսօր եւ միշտ. ամեն։

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(16 հոկտեմբերի 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՜ եղբայրներ ու քույրեր, մեր Հիսուս Քրիստոս Իր երկրավոր կյանքի ընթացքին շատ անգամներ էր այցելել Նազարեթի ժողովարան սինագոգը, շատ անգամներ էր լսել թե ինչպես են ընթերցանություն անում այնտեղ, եւ մասնակցել էր արարողություններին: Սակայն սիրելինե՜ր, Տեր Հիսուսի այսօրվա այցը Նազարեթի ժողովարան տարբեր էր բոլոր Իր մնացած այցերից: Այսօր Հիսուս Քրիստոս այցելեց ժողովարան, որտեղ Նրան տվեցին ընթերցարանը, որ կարդա, եւ Սուրբ Գրքից ընթերցեց Եսայու մարգարեության շատ հայտնի մի հատված, որտեղ ասվում է. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու, սրտով բեկյալներին բժշկելու, գերիներին ազատում քարոզելու եւ կույրերին տեսողություն, կեղեքվածներին ազատ արձակելու, Տիրոջն ընդունելու տարին հռչակելու»:

Փաստորեն, սիրելինե՜ր, մեր Տեր Հիսուս Քրիստոս, այսօր ընթերցելով այս հատվածը, ասաց. «Տիրոջ Ավետարանն այլեւս ժողովարանի պատերից հանում եմ դուրս»: Այդ բարի լուրը, Ավետարանը հենց այդպես է թարգմանվում, այդ բարի լուրը այլեւս մեր մեջ չպետք է մնա, այլ այդ բարի լուրը պետք է տանել եւ հասցնել բոլոր աղքատներին, բոլոր սրտով բեկվածներին, կույրերին, գերիներին, կեղեքվածներին, բոլոր նրանց, ովքեր կարիք ունեն, եւ Տերը պիտի հաստատի Իր ընդունելի տարին: Սիրելինե՜ր, բնական է, որ այս ընթերցումը նախ եւ առաջ իրականության եւ ընկերային արդարության տարրեր են մեր աչքի առջեւ բարձրացնում. հատկապես աղքատներին ավետարան քարոզելու: Բնական է, որ մեր Տեր Հիսուս Քրիստոս չի ցանկանում, որ աշխարհում եւ որեւէ մեկն աղքատ լի-

նի, ուստի քրիստոնյայի համար լավագույն եւ մեծագույն առաքելություն է իր կյանքի ընթացքում աղքատների հանդեպ անընդհատ ուշադիր լինելը։ Այստեղ երբ պատարագիչն իր ծածուկ աղոթքներն է կարդում, ծածուկ աղոթքների մեջ մի շարք անգամներ նշվում է, որ պետք բոլորս ոգեւորվենք, եւ բոլորս միմյանց ոգեւորենք՝ աղքատներին հիշելու եւ աղքատներին բաժին հասցնելու համար։ Պողոս առաքյալի ամբողջ քարոզչությունը նաեւ դրա վրա է հիմնված, եւ հետեւաբար ընկերային այս հարցը պետք է լուծվի։ Այո՛, աղքատներին պետք է բաժին հասցնենք, չենք կարող մենք միայն ուրախ-զվարթ վայելել կերակուրները, բայց աղքատներին այդպես էլ չհիշել։ Սակայն, սիրելինե՛ր, բացի ընկերայինից այստեղ կա նաեւ շատ մեծ հոգեւոր իմաստ։ Երբ մեր Տեր Հիսուս Քրիստոս գալիս է աղքատներին ավետարանելու բարի լուրը, դա նաեւ «այլ աղքատներն» են. մեկ բառով ասած՝ ի թիվս այլոց նաեւ մենք ենք, բոլորը, ովքեր աղքատ են ամեն տեսակ շնորհներից, աղքատ են Աստծու՝ ամեն տեսակ երանություններից, սակայն ցանկություն ունեն այդ շնորհներն ու երանություններն ստանալու։ Եւ արժանանում ենք այդ ամենին միայն այն ժամանակ, երբ գիտակցում ունենք, որ կարիք ունենք ստանալու։ Լոկ այդ ժամանակ է, որ Աստված պետք է գա եւ մեր դուռը բախի, այլ ոչ թե՝ պարտադրաբար։ Աստված գալիս է գերիներին ազատում քարոզելու։ Հայոց երկրի, մեր աշխարհի համար սա թերեւս այսօր ամենացավալի թեմաներից է գերիների ազատումը։ Մենք՝ յուրաքանչյուրս, ամեն օր աղոթում ենք, հենց լսում ենք գերիների հետ կապված մի աղոթք, խաչակնքվում ենք եւ խնդրում ենք Տիրոջից, որ վայրկյան առաջ յուրաքանչյուր գերի վերադառնա իր ընտանիք։ Բայց եւ սիրելինե՛ր, այստեղ մեր Տեր Հիսուս Քրիստոս բացի այս գերությունից խոսում է մեղքի գերության մասին եւ հատկապես մեղքի գերության մասին, որովհետեւ յուրաքանչյուր մարդ, որ գերի է ընկած մեղքին, այնպես է՝ ինչպես որ գերի՝ ֆիզիկական թշնամու ձեռքում, խոշտանգվում է եւ ամեն տեսակ ծանրության եւ ամեն տեսակ դաժանության է ենթարկում՝ մեղքի կողմից, չարի կողմից։ Եւ հետեւաբար մեր Տեր Հիսուս Քրիստոս շատ լավ գիտեր, թե ինչ է նշանակում գերի լինել, ու Ինքը պետք է գար, որպեսզի ազատագրեր յուրաքանչյուր գերու։ Մենք, սիրելինե՛ր, նաեւ այսօր լսում ենք, որ Տերը գալիս է ավետարանելու կույրերին տեսողություն։ Այո՛, ամբողջ Ավետարանում շատ եք ընթերցել, թե ինչպես է Տեր Հիսուս Քրիստոս բժշկումներ անում, ինչպես է կույրերին բժշկում, որ տեսնեն, բայց այսօր նաեւ Աստված խոսում է հոգեւոր կուրության մա-

սին եւ հոգեւոր հիվանդության մասին. դա այն է, որ մարդ չի ցանկանում կամ չգիտի էլ՝ ինչ է ճշմարտությունը եւ եթե լսում էլ է այդ ճշմարտության մասին, ինքը կարծում է, թե արդեն գիտի այդ ճշմարտությունը եւ չի փորձում իրեն հնազանդեցնել Աստծու կամքին եւ Աստծու խոսքին: Փաստորեն Տիրոջ այսօրվա Ավետարանը, մեզ է ուղղված, եթե միայն գիտակցենք, թե մենք էլ կույր ենք, եթե միայն գիտակցենք, թե մենք էլ ցանկություն ունենք՝ տեսնելու, հասկանալու, իմանալու ճշմարտությունը, որ գալիս է Տիրոջից: Վերջապես Աստված գալիս է կեղեքվածներին ազատ արձակելու: Նորից ու նորից Աստված խոսում է այստեղ կեղեքվածների մասին, գերիների մասին, բոլոր նրանց, ովքեր որ մեղքի ճիրանների մեջ են. ուրեմն Աստված այսօր բարի լուր է յուրաքանչյուրիս բերում՝ ասելով, որ եկել եմ ձեզ արձակելու, եկել եմ Ավետարանը բերելու: Ինչ է այդ Ավետարանը: Արդյո՞ք միայն պարզ մաղթանք է մեզ Աստծու կողմից, թե մեզ Աստված հույս է տալիս՝ Եկել եմ ձեզ մաքրելու: Այսքա՞ննն է... եւ վերջ: Ո՛չ, Աստծու կողմից այսօրվա խոսքը, որ մեզ է փոխանցվում, սիրելինե՛ր, հաստատում է եւ փաստում՝ եկել է այդ Ավետարանն ընդունելու ժամանակը, եւ մաքրվելու ժամանակը, ու հետեւաբար, եթե ուզում ենք, որ մենք մաքրվենք, եթե ուզում ենք տեսնենք, եւ սրան զուգահեռ, եթե զգում ենք, որ գերի ենք եւ ցանկանում ենք ազատվել, ուրեմն պետք է մեր կամքը միացնենք Աստծու կամքի հետ: Գերբնականն Աստծու՝ մեր բնականի հետ միացնենք: Եւ Աստված անպայման մեզ կօգնի բոլոր հնարավորություններով եւ ամբողջ ուժերով՝ հաղթահարելու մեր սեփական տկարությունները: Ես չէ, որ ձեզ պետք է ասեմ, որ եթե մենք կարողանանք ինքներս մեր տկարությունները՝ անձի տկարությունները հաղթահարել, մեր առջեւ որեւէ բան, որեւէ դժվարություն չի կարող հառնել, ինչպես որ, սիրելինե՛ր, դեռ հին Իսրայելում Աստված խոստում էր տալիս, ասում էր, վստահեցնում էր, որ եթե գնանք եւ նվաճեք այդ մեծ ազգերը, կկարողանաք դա անել, որովհետեւ՝ «Ես ձեզ հետ եմ»: Մենք էլ այսօր, սիրելինե՛ր, ինչպես որ թույլ, տկար հին Իսրայելը, կանգնած ենք Աստծու առջեւ եւ Իրեն ենք վստահում, բայց Աստված ասում է. «Ես ձեզ հետ եմ»: «Միայն պիտի վերցնես քո սուրը, միայն պիտի պատրաստվես, միայն պետք է քո անձը լցնես, եւ բնական է, որ այդ ժամանակ պիտի Իմ գերբնականը քո գերբնականի հետ միավորվի»:

Աստված, սիրելինե՛ր, այսօր մեզ այս մեծ հույսն է տալիս եւ ասում է, որ ամեն բանից առաջ մտածի՛ր մաքրվելու մասին, այլապես անմիջապես

անապատի փորձությունից հետո Հիսուս Քրիստոս հենց այս պատգամը չէր փոխանցի մեզ, որովհետեւ կարեւորում է մաքրվելը։ Եւ եթե մաքրվենք նաեւ Տիրոջ Սուրբ Հոգին կընդունենք, ինչպես որ յուրաքանչյուրս մեր մկրտության ժամանակ, ովքեր որ ծաղիկ հասակում, դեռատի կամ հասուն տարիքում մկրտվել կամ գոնե մասնակցել են արարողությանը, գիտի, որ մկրտվողը Սուրբ Հոգու տաճար է դառնում, այլ խոսքով ասած՝ մկրտության ժամանակ Սուրբ Հոգին իջնում է մեզ վրա, եւ հետեւաբար մենք եւս ունենք Տիրոջ Սուրբ Հոգին մեզ վրա։ Բայց որպեսզի շարունակաբար մենք Տիրոջ Սուրբ Հոգուն տեղ տանք մեր սրտի մեջ, մեր մեղքերը պետք է մաքրենք։ Դրա համար, թերեւս, շատ կարեւոր է, որ նախ եւ առաջ եթե պատկերացնենք մի փոքր արկղ, ապա մի կողմը այդ արկղի մի պատը կլինի մեղքի ճշգրիտ այպես հաստատումը եւ ընկալումը, որպեսզի մենք հասկանանք, թե ինչ է այդ հիվանդությունը. ուրեմն մենք պետք է նախ եւ առաջ հասկանանք, թե որն է մեր մեղքը եւ ինչ է դա իրենից ներկայացնում, եւ ամեն գնով մեկուսացնենք այդ մեղքը մեզանից։ Երկրորդ կողմը գերազանցող ուժի կիրառությունն է. եթե ունենք մտքի տկարություն կամ մեղք, պետք է առավելաբար փորձենք հաղթահարել այդ իրավիճակը, առավել ջանքեր պետք է գործադրեք, որպեսզի հաղթահարենք այդ մեղքը, միայն այդ ձեւով կկարողանանք մեր միջից հանել ցանկացած տկարություն. եթե ծուլության մեղքի մեջ ենք, առավել շատ ժամեր պետք է աղոթենք։ Եթե մենք շատ բամբասող ենք, շատ ժամեր պետք է լուռ մնանք օրվա մեջ եւ Աստծու հետ մտորումների մեջ պետք է լինենք, ուրեմն առավել գերազանցող ուժը արկղի երկրորդ կողմն է։ Երրորդ կողմը զրո հանդուրժողականությունն է. որովհետեւ մենք տկար ենք, երբեմն արդարացնում ենք մեր մեղքը, բայց Աստված ասում է, եթե ուզում ես հաղթահարել, չես կարող որեւէ կերպ հանդուրժել. ինչպես որ քաղցկեղը պետք է հեռացվի ամբողջապես, եւ ոչ թե մի մասը։ Շատ են լինում դեպքեր, երբ քաղցկեղի մի մասն են հեռացնում, իսկ հետո կրկին եւ նորից աճում է։ Բժիշկներն անպայման այնպես են անում, որ ողջ հիվանդությունը մաքրվի, որեւէ տեղ որեւէ մասնիկ չմնա այդ հիվանդությունից մարդու մեջ, եւ անձն ամբողջովին բժշկվի։ Եւ սիրելինե՛ր, չորրորդ կողմն էլ կոչենք բարձրագույն ուժ, այդ արկղի չորրորդ կողմը, որը մեզ կհեռացնի մեղքից, բարձրագույն ուժն է։ Այսօր ե՛ւ հոգեբանության, ե՛ւ ամեն տեսակ գիտության մեջ, որը որ մարդու տկարություններին է վերաբերում, ավելի բարձր ուժի մասին են խոսում՝ մարդկային ուժի մա-

սին, որ իր մեջ պետք է գտնի մարդը եւ հաղթահարի։ Մենք՝ որպես քրիստոնյաներ, պետք է դիմենք եւ ապավինենք բարձրագույն Ուժին։ Այսօր մեր Տեր Հիսուս Քրիստոս եկել է ժողովարան, եւ մեզ՝ ամենքիս, տալիս է այդ բարի լուրը, ավետիսը՝ ասելով, որ եկել եմ առ ձեզ. եթե կեղեքված եք, կույր եք, գերի եք... եկել եմ բժշկելու եւ ազատագրելու։ Իսկ ովքեր որ խավարի մեջ են, խավարն էլ սիրում են, այդ խավարի մեջ էլ կմնան, որովհետեւ նրանց համար լույսը ցանկալի չէ, որովհետեւ չարիք են գործում։ Եւ ինչպես ավետարանիչն է ասում, ատում են լույսը եւ չեն գալիս դեպի լույսը, որպեսզի նրանց գործերը իրենց երեսով չտան։ Սիրելինե՛ր, այո՛, շատ հիվանդություններ գալիս են մանրէներից, որոնք որ մթություն են սիրում, խավար են սիրում, աճում են այդ խավարի մեջ, բայց լույսի տակ չեն դիմանում։ Դրանցից որոշներն էլ միայն հատուկ լույսի ազդեցությամբ են ոչնչանում։ Սիրելինե՛ր, եթե պատկերացնենք մեր անձերը՝ որպես մի գավաթ, որը դատարկ է, եկեք փորձենք դրանից օդը ամբողջապես հանել. ինչպես պետք է այդ օդը հանենք։ Ոմանք կասեն թե պետք է, թերեւս, որեւէ փոշեկուլ դնել եւ քաշել օդը, բայց եթե շատ ուժգին կերպով անես, թերեւս, բաժակը կկոտրվի։ Սիրելինե՛ր, միակ տարբերակը որ օդը դուրս գա, այն է, որ ինչ-որ բանով լցնես այդ բաժակը՝ հատկապես ջրով։ Եթե ամբողջապես ջուր լցնես այդ բաժակի մեջ, այնտեղ, թերեւս, օդ չի մնա։ Քրիստոնյաներս երբեմն սխալմամբ մտածում ենք, թե միայն մեղքից մաքրվելը բավարար է։ Ամբողջացնելու համար քրիստոնյայի կյանքը այդ մեղքը նա պետք է հանի իր միջից, բայց եւ լցնի Սուրբ Հոգով, եւ երբ լցված է Աստծու ներկայությամբ, այլեւս նրան մեղքը հասանելի չէ։ Ուրեմն, սիրելինե՛ր, եկե՛ք աղոթենք, որ այս սուրբ կիրակի օրը մեր Տերը ինչպես որ ցանկանում է սինագոգի ժողովարանից դուրս գալ եւ Ավետարանը տանել բոլոր նրանց, ովքեր կարիքը ունեն՝ աղքատներին, գերիներին, սրտով բեկվածներին, այսօր մենք ասենք, այո՛, Տե՛ր մենք դրանցից մեկն ենք, արի՛ եւ մեր սրտի մեջ թագավորի՛ր եւ Քո Սուրբ Հոգու շնորհներով մեզ լցրո՛ւ, եւ թո՛ղ այս կյանքի ընթացքում Տիրոջ շնորհները եւ ողորմությունը հարատեւ լինեն մեզ՝ ամենքիս հետ, այժմ եւ միշտ հավիտյանս հավիտենից ամեն։

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ
Հայ կոմպոզիտոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ

ԵՐԿԱՐ ՕՐԵՐ ՀԱՅՈՑ ՀՈՐ

Տասնամյակներ առաջ հազիվ թե ակնկալեի Վեհափառ հոր հետ այն անձնական մտերմությունը, որ այսօր պատիվն ունեմ վայելելու:

Այնպես չէ, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի հետ մարդկային այս գեղեցիկ կապն այս կամ այն չափի ու ձեւի արգելքներ հաղթահարելու ճանապարհով է գոյացել:

Հիշում եմ այն լուսավոր օրերից մեկը, երբ Վեհափառ հոր հետ Վեհարանի մուտքին համեստ մի թեյասեղանի շուրջ խաղաղ ու գեղեցիկ զրույցի մեջ էինք: Երբեմն իմ հայացքն ուղղում էի ծաղկաշատ պարտեզի խորքը՝ այդ կողմերում փնտրելով Կոմիտաս վարդապետի աներեւույթ տեսիլքը, եւ հետո վերադառնում էինք լռություն գունազարդող թեթեւասահ խոսք ու զրույցին:

Իմացա, որ լավագույնս տեղյակ է մեր երաժշտության կարող ուժերի մասին: Այսօր եւս գիտի յուրաքանչյուր խմբավարի, երաժշտատեսաբանի, նվագողի, երգիչ-երգչուհու դերն ու արժեքը: Իմ երաժիշտ ընկերներից շատերի՛ գոհունակության խոսքն եմ լսել Վեհափառի՝ իրենց արվեստի հանդեպ տված գնահատանքի առիթով:

2004 թ. արժանացա Հայ Եկեղեցվո ս. Սահակ—ս. Մեսրոպ շքանշանին: Ավելի ճիշտ՝ արժանացանք: Վեհափառ տերը ինձ հետ միասին տիկնոջս էլ էր նույն շքանշանին արժանացրել՝ առ ի գնահատանք նրա երաժշտական-մանկավարժական երկարատեւ աշխատանքի: Անհամեստություն թող չհամարվի, բայց ինձ թվաց, որ Հայոց Վեհափառը գնահատել էր նաեւ տիկնոջս՝ իմ պահապան հրեշտակը լինելը... որ դրանով ուզում էր արտահայտել, թե ինչքան է գնահատում կնոջս ջանքերն ու զոհողությունները, որոնց շնորհիվ ես կարողանում էի առավել նվիրումով

ծառայել երաժշտությանը։ Այդ օրը մեր ընտանիքի, մեր տան հիշարժան օրերից մեկը դարձավ։

2007 թվին բարեբախտությունն ունեցա Խաչի կնքահայր լինելու հունվարի վեցի սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության եւ Ջրօրհնեքի պատարագին։ Անասելի հուզված էի։ Շապիկ էի հագել, կոշիկներս փոխարինել հողաթափերով ու թոռանս հետ կանգնել խորանի առջեւ։ Իմ դերը միայն խաչը գրկելն էր։ Հնչում էին մեր խնկաբույր աղոթքները, հնչում էր պատարագիչ Վեհափառ հոր ձայնը, իսկ ես մտածում էի, որ ոչ վաղ անցյալին, այս խորանից հնչում էր Կոմիտաս վարդապետի ձայնը... այս կամարների տակ քանի՞ սուրբ Ծնունդ, սուրբ Հարության տոն է երգել Կոմիտաս վարդապետը։ Արդյոք նո՞ւյն խաչն էր այդ ժամանակ էլ... Խաչը ծանր էր։ Վեհափառ հայրապետը գիտեր դա։ Ամեն անգամ, երբ փակվում էր սուրբ Խորանի վարագույրը, անմիջապես դիմում էր դպիրներից կամ սարկավագներից մեկին ու կարգադրում գրկիցս մի կարճ պահով վերցնել խաչը, ու ես մի պահ հանգստանում էի իմ քաղցր բեռից։

Հիշում եմ ինչպիսի՜ հոգու թեթեւություն էր Վեհափառ հոր կողքից խաչը գրկած թափորով դուրս գալը Ս. Էջմիածնի բակ, հավատացյալ ժողովրդի միջով անցնելը։ Մինչեւ վերջ էլ չէի հավատում, որ խաչը իմ տուն էր գալու ու մնալու որոշ ժամանակ։

Պատիվ եմ ունեցել բազում առիթներով Վեհափառ հոր հյուրը լինելու զանազան պաշտոնական ընդունելություններին։ Շատ տպավորված եմ 2015 թ. Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման իր նախաձեռնությամբ։

Բախտ եմ ունեցել Վեհափառ հոր հետ ճանապարհորդելու Վատիկան, իր՝ հերթական, իսկ ինձ համար եզակի պատիվ հանդիսացող մի առաքելությամբ։ Հայտնել էի մեր կաթողիկոսին, որ ս. Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ»-ի հիման վրա գործ էի գրել Հռոմի Պապին նվիրված։ Ի միջի այլոց փափագ էի հայտնել այդ գործի նվագագրությունը Պապին նվիրելու. ու մոռացել այդ մասին։ Վեհափառը չէր մոռացել։ Որոշ ժամանակ անց, մի օր էլ միասին ճանապարհ ընկանք դեպի Իտալիա։

Ասում են, որ լավ ես ճանաչում այն մարդուն, ում հետ կամ ծառայել ես, կամ ճանապարհ գնացել։ Այս ճանապարհորդության ժամանակ ես համոզվեցի, թե մեր բազմակողմանի զարգացած, բազմահմուտ հոգեւորական Վեհափառ տերը նաեւ ճամփի հոգատար ու ուշադիր ընկեր է,

ջերմ ու անմիջական ընկերակից։ Հոգուս ու սրտիս շատ թանկ է հուշը միասին անցկացրած այդ օրերի։ Մեծ պատիվ էր նաեւ Վեհափառ հոր կողքին ու նրա երաշխավորությամբ մեր մյուս հայրապետի ստեղծագործության հիման գրածս գործը նվիրել Պապին։

Տարիների ընթացքում բազմիցս առիթ եմ ունեցել հիանալու Վեհափառ հոր հայագիտական բազմահմուտ գիտելիքների խորությամբ, երիտասարդների կյանքի հետ քայլ պահելու, գիտության, տեխնոլոգիաների, առհասարակ՝ կյանքի հետ քայլ պահելու եւ միշտ տեղյակ լինելու նրա մոտեցումով։ Սակայն ամենից շատ ինձ միշտ հուզել է Վեհափառ հոր վերաբերմունքը հայ մշակույթի, հայոց հողի ու հայ զինվորի հանդեպ։ Ականատես եմ եղել, թե ինչքան ծանր է տարել Հայրապետը արցախյան 44-օրյա պատերազմը, ինչպիսի ջանքեր է ներդրել փրկվելիքի փրկությունը կազմակերպելու։ Ականատես եմ նաեւ՝ ինչպես է իր աղոթքների մեջ միշտ վառ պահում կորուսյալ երկիրն ու նահատակ հայորդիներին։ Մեր ազգի դժվարին օրերին նրա քարոզները եղել են ինձ համար գոտեպնդման ու հոսանքն ի վեր պայքարելու կորովի աղբյուր։

Իմ տունը եկեղեցու մոտ է։ Հաճախ եմ Պատարագը լսում անգամ առանց եկեղեցի գնալու։ Ամեն անգամ երկյուղածություն եմ ապրում, երբ «Պահպանիչի» ժամանակ խնդրում ենք պահել, պահպանել հայ ազգը, Հայաստան աշխարհը, հայ զինվորին։ Եւ ամեն անգամ, ես էլ եմ մտովի աղոթում Տիրոջը, որ «երկար կյանք տա Հայրապետին, երկար օրեր Հայոց Հոր»։

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ, իրավաբանական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՎԵՀԱՓԱՌԻ ԽԱՉԸ...
(Համառոտ ակնարկ)

Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը դեգերումների երկարաձիգ մի շղթա է, որի հազարամյա օղակներն ավելի շատ ողբի, քան բերկրանքի ղողանջներ են հնչեցրել։ Ու այդ ղողանջները դարձել են մի ողջ ժողովրդի հոգու ձայնը, Նարեկյան անգերազանցելի աղոթքով հասցվել են առ Աստված, հույսի ու հավատքի փրկողակ են դարձել՝ մարդկությանն իր ստացածից բազմապատիկը տված մի ողջ ժողովրդի համար։

Հազարամյակների այդ շղթայի անխախտելիության խորհրդանիշն են դարձել Հայոց հարյուրերեսուներկու Վեհափառ Հայրապետները։

Սա է Աստծու կամքը՝ մենք հաստատուն ավելին չունենք։ Չունենք միասնական շղթայի օղակներ դարձած թագավորություններ։ Չունենք հազարամյակներ անխախտ ձգվող պետականության պատմություն։ Չունենք պետական համակեցության մշակույթ ու պետության քաղաքացու անհրաժեշտ որակներ։

Ունենք, սակայն, Աստծուն մատաղացու դարձած անմիաբան մի ժողովուրդ ու մարդու «Հայի» տեսակ, որի լավն ու վատը միախառնված մարդկային քաղաքակրթության զարթոնքից մինչեւ օրս իր անսասան արմատներին կառչած հոգեւոր կատարելության ձգտելու ուղին է ընտրել։

Ու դարեր ի վեր Հայոց բոլոր Վեհափառ Հայրապետերին շատ, անչափ շատ ծանր խաչ է բաժին ընկել՝ պահել ու պահպանել ոչ միայն մեր ազգային տեսակի հոգեւոր անաղարտությունը, այլեւ նրա ֆիզիկական գոյի երաշխավորը դառնալ։

Հազարամյակների ճանապարհ անցած այս խաչը երրորդ հազարամյակի նախաշեմին արժանապատվությամբ ուսեց Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետը։

Ուսեց այն ժամանակներում, երբ Հայոց Սպարապետը խոր համոզումով բարձրաձայնում էր. «Քսանմեկերորդ դարը մերն է լինելու»։

Հավատը մեծ էր, ոգեւորությունը՝ անսահման։

Սակայն այն երկար չտեւեց։

Հայոց 132-րդ Վեհափառ Հայրապետի գահակալությունն ուղեկցվեց մեր իսկ տեսակի ձեռքով ազգային վերազարթոնքի սյուների գլխատմամբ, իսկ հոգեւոր ծառայությունը՝ պատերազմով, արյամբ, Արցախ աշխարհի քառատմամբ, հազարավոր մեր լուսեղեն զավակների կորստով։

Գարեգին Երկրորդ Վեհափառին բաժին ընկած Խաչը տասնապատիկ ու հարյուրապատիկ անգամ ծանրացավ։

Երանի թե մարդիկ շուտ սթափվեին շանթահարումից, ընկալեին այս ամենը, զգային պատասխանատվության այդ բեռը եւ համարժեք վերաբերմունքով իրենց աջակցությունն ու մասնակցությունը բերեին ազգակերտումի դժվարին գործին։

Քչերն են առիթ ունեցել հաղորդակից լինելու Վեհափառի ներքին տագնապներին, ծառացած անասելի մարտահրավերների հաղթահարման անխոնջ փնտրտուքներին։

Ծանրագույն իրավիճակներում Նորին Սուրբ Օծության հետ մեր շարունակական գործակցությունը տասնամյակների պատմություն ունի։

Պատեհություն եմ ունեցել նաեւ Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետի հետ այցելելու Արցախ, այնտեղ նույնպես ժամեր տեւած երկխոսություն ունենալու մեր ժողովրդի աշխարհիկ ու հոգեւոր վերազարթոնքի, պատմությունից դասեր քաղելու ու մեր ազգային լինելիության ապագան շիտակ կերտելու, հայ մարդու ինքնության նոր որակների, մարդու աստվածակերպության մնայուն արժեքների ու պետության քաղաքացու հոգեկերտվածքի մասին։

Դրանք լոկ զրույցներ չեն եղել։ Ծնվել են գաղափարներ, նախանշվել են անելիքներ, ձեռնարկվել են որոշ քայլեր ու մեծ հեռանկարին միտված ծրագրեր, որոնց զգալի մասը, ցավոք, անկատար մնաց։

Պատմության անիվը կրկին տեղապտույտ տվեց։ Ազգակերտումի երազանքը նորից իր տեղը զիջեց ազգապահպանության հրամայականին։ Մի ողջ ժողովրդի լինելիության բարուրը որերորդ անգամ հայտնվեց այլոց ողորմածության նժարին։

Նորից ու կրկին Հայոց Հայրապետը պետք է տագնապի շեփոր հնչեցներ։

2021 թ. ապրիլի 4-ին, Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամում ներքին խոր ապրումներով շեշտադրվեց. «Քրիստոսի Հարությամբ բացվել է օրհնյալ կյանքի, հույսի, սիրո, խաղաղության ու համերաշխության լուսավոր ուղին: Այս կենարար ճանապարհից շեղումը հարության փոխարեն մահ ու ավեր է սփռում, փրկության փոխարեն՝ դատապարտություն եւ կործանում, կյանքը դարձնում ատելության, բաժանումների հորձանուտ՝ լի չարի փորձություններով ու վտանգներով:

Պատերազմի դժոխային հնոցում չարչարանաց գողգոթա անցնելով՝ զոհվեցին հազարավոր մեր սիրասուն զավակներ, կորցրեցինք Արցախի՝ հարազատ հայրենիքի զգալի մասը: Ինչպես պատերազմից առաջ, այնպես եւ հետպատերազմյան շրջանում մեր կյանքում հաստատուն չեղան տերունապատվեր սիրո եւ համերաշխության նախանձախնդրությունը, Աստծու պատգամների համաձայն կենսակերպը:

Պառակտումներն ու սերմանվող ատելությունը, անհանդուրժողության ոգին, շարունակվող քաղաքական ալեկոծումները նոր ցնցումների ու անկումների վտանգի առջեւ են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին՝ ստվերելով նաեւ հայրենանվիրումի ու ազգասիրության վեհ գաղափարները: Իսկ հայրենիքի անվտանգության չփարատվող մտահոգությունը, հայրենական կյանքի տեսլականի բացակայությունը, հիասթափությունն ու հուսախաբությունը անորոշության խավարով են մթագնել ապագայատեսիլ մեր հույսերը:

Ոչ մի հանգամանք, ոչ մի նպատակ, ոչինչ չի կարող արդարացնել ազգի ու հայրենիքի մասնատումն ու տկարացումը, ազգային եւ հոգեւոր մեր արժեքների, նախնյաց ավանդների ոտնահարումը, նոր սերնդի ապազգայնացումն ու բարոյազրկումը, ազգի արժանապատվության ու պատվի նսեմացումը»:

Իսկ 2023-ի հունվարի 6-ին, Տիրոջ Սուրբ Ծննդյան առիթով Նորին Սուրբ Օծությունը պատգամեց. «...Գիտակցե՛նք, որ պատասխանատու ենք Հայրենիքի ու սերունդների առջեւ եւ վտանգի չենթարկենք մեր անկախ պետականությունը»:

Այս տողերը բազում անգամներ ընթերցելիս ականջներումս արձագանքում է 1166-ին համայն հայ ժողովրդին ուղղված «Թուղթ Ընդհանրականում» Ներսես Շնորհալու հնչեցրած պատգամը. թե՝ մարդիկ, դուք սրտով, հոգով, մտքով ու ձեր գործերով ինչպիսին պետք է լինեք, որպեսզի մեր կյանքն այսպիսին չլինի:

Գոնե մեկ անգամ ականջալուր լինենք մեր հոգեւոր Հովվի տագնապաշունչ պատգամին...

Համառոտ ակնարկս ավարտեմ Նարեկյան բարձրաձայնումով.

Եւ արդ, լուսատո՛ւ, գթառատ, ամենատես Արարիչ, ցրի՛ր մշուշը բազմավտանգ մեր ժամանակների, ամենօրյա զորակցությամբ աջակից եղիր Հայրապետին Հայոց՝ առաջնորդելու անմիաբան իր հոտը հույսի, զարթոնքի ու խաղաղ կյանքի ճանապարհով՝ հեռու մնալով չարափառության որոգայթներից ու ժամանակների մեծ դավերից։ Ողորմությամբդ հո՛ւյս տուր բոլորին, որ վերագտնենք Աստվածային նախասկիզբը հավերժության ճամփին անհույս դեգերող մեր իսկ տեսակի...

Փառք ու երկրպագություն ամենազորիդ,

Հավիտենից հավիտյանս. ամեն։



ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ Մշակույթի վաստակավոր գործիչ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Հովվական առաքելությունն անդադրում եւ հոգսաշատ ջանասիրություն է։ Հովիվը պետք է, համաձայն աստվածահաճո Պողոսի, լինի «բոլորի հետ ամեն ինչ» (Պողոս Առաքեալի Առաջին թուղթը՝ Թ. 22), որպեսզի իր ինքնամոռաց առաքելությամբ «թերեւս փրկի ոմանց»։ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն իրագործում է սիրո եւ Հայ Առաքելական Եկեղեցուն, Եկեղեցու հավատարիմ զավակներին եւ Քրիստոսից սփոփանք փնտրող ամենքին նվիրաբերման այս սխրանքը։ Փորձության պահին նրա իմաստուն խոսքն ակնածանքով եւ հույսով է լցնում հավատացյալների սրտերը՝ ուժ հաղորդելով եւ օգնելով հաղթահարել դժվարությունները։ Իսկ Հայ Առաքելական Եկեղեցին, առերեսվելով կրթական գործունեության ընթացքում ծագած բազում մարտահրավերներին, զգալի ազդեցություն ունի քրիստոնեական արժեքների հիման վրա երիտասարդ սերնդի դաստիարակության հարցում։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի կրթական գործունեությունը ծավալուն է ու բովանդակալից։ Դեռեւս 90-ական թվականների սկզբում Վեհափառ Հայրապետը, հանդիսանալով Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, նախաձեռնեց այդ տարիներին լքված, խորհրդային շրջանում պիոներ պալատներ հանդիսացող շենքերի վերականգնումը եւ վերագործադրումը որպես հայորդյաց տներ։ Ծրագիրը ենթադրում էր հոգեւոր եւ գեղարվեստական դաստիարակություն հաղորդել դպրոցական տարիքի հազարավոր երեխաների։ Սկզբում հայորդյաց տները երեքն էին եւ գործում էին Երեւանում, յուրաքանչյուրն ուներ գեղարվեստական կրթության տարբեր ուղղվածությամբ տասնյակ խմբակներ։ Նորին Սրբության նախաձեռնությունն իրականացվում էր Հայկական բարեգործական ընդհանուր միության նյութական օժանդակությամբ։

Անցած երեք տասնամյակների ընթացքում հազարավոր երեխաներ հանդիսացան Հայորդյաց տների սաներ, սովորեցին արվեստ եւ արհեստ, հայրենասիրական կրթության դասեր առան։ Նրանց հասանելի դարձան մեր ժողովրդի հոգեւոր արժեքները։ Հայորդյաց տների համակարգն այսօր ընդգրկում է ութ խոշոր հաստատություն ինչպես Երեւանում, այնպես էլ Գյումրիում, Աշտարակում, Էջմիածնում ու Վանաձորում։ Կարելի է հստակ արձանագրել, որ նման ծավալով, բովանդակային արդյունքով այս ձեռնարկումը Հայաստանի անկախության ժամանակաշրջանում աննախադեպ է։

Առաջին ղարաբաղյան պատերազմի ծանր տարիներին, երբ մութ էր պատել երկիրը, Հայորդյաց տները լույս էին տալիս հարյուրավոր երիտասարդների, լավատեսական հույս ներշնչում ազգային ապագայի նկատմամբ։

Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանն (այժմ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս) ամեն օր զբաղվում էր Հայորդյաց տների կազմակերպչական եւ նյութական խնդիրներով՝ հանդիսանալով քահանայական ծառայության բացառիկ օրինակ։

Նորին Սուրբ Օծության կողմից կարեւորագույն տեղ է հատկացվում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գործունեությանը։ Այդ մոտեցումը բնական է՝ ճեմարանը եղել է եւ հանդիսանում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գլխավոր ուսումնական հաստատությունը։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանդիսանալով Գեւորգյանի շրջանավարտ, հետագայում դասավանդելով հաստատությունում, ամենօրյա ուշադրության էր արժանացնում ճեմարանի սաների ուսումնակրթական գործընթացին, կենցաղային պայմաններին։ Վեհափառ Հայրապետի անմիջական ջանքերով 2002 թվականին ճեմարանն ստացավ բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ, հիմնովին վերանորոգվեց հաստատության շենքը։ Կարող ենք անձնապես վկայել, որ Վեհափառը բացառիկ ուշադրություն է ցուցաբերում ճեմարանի դասախոսական կազմի ձեւավորմանը։ Այդ գործում սկզբունքը հետեւյալն է՝ Գեւորգյանում պետք է դասավանդեն երկրի լավագույն մասնագետները, ճանաչված գիտնականներն ու մանկավարժները։

1990 թվականին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ հիմնադրվեց Սեւանի Վազգենյան դպրանոցը։ Վեհափառ Հայրապետի

մեծագույն ջանքերի արդյունքում 2004 թվականին ավարտվեց Վազգենյան դպրանոցի մասնաշենքը։ 2000 թվականին Վազգենյան դպրանոցի 10-ամյակին նվիրված հանդիսությանը Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես նշեց. «Տարիներ առաջ, երբ այցելեցի Սեւանա կղզի, Խրիմյան Հայրապետի ընծայարանի շենքի առջեւ, հայացքս հառած բարձունքում մենավոր կանգնած, կարծես սրբացած հայոց վանքերին, հանկարծ մտածում եւ ներշնչանք ունեցա հոգեւոր-կրթական հաստատությամբ օժտելու այդ մենաստանը, այդ կղզին... Մեր երազը դարձավ իրականություն՝ շնորհիվ անձնվեր մանկավարժների, շնորհիվ քաջ, արի, նվիրյալ մեր սաների։ Բազմաթիվ փորձությունների, վտանգների միջով անցավ կրթական մեր կյանքը Սեւանի դպրանոցում, եղան պահեր, երբ թվում էր, թե պիտի փակվի, լուծարվի կրթական այդ հաստատությունը, բայց սերը, երազը, նպատակը, տեսիլքը, որ ունեին դպրանոցի սաներն ու դասախոսական կազմը, նրանց ոգի հաղորդեց, ուժ ու կամք պարգեւեց՝ հաղթահարելու բոլոր դժվարությունները»։

Իրապես, սերը, երազը, նպատակը, տեսիլքը առաջնորդում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր բոլոր աստվածահաճո ծրագրերի իրականացման գործում։

2009 թվականին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը հիմնադրեց «Էօրնեկեան հանրակրթական դպրոց» հաստատությունը։ Դպրոցի շենքը կառուցվեց Էդուարդո Էօրնեկյանի հովանավորությամբ։ Լինելով Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնում, դպրոցը լավագույններից է տարածաշրջանում։ Այդ մասին վկայում են հաստատությունում սովորելու ցանկություն ունեցողների՝ տարեցտարի թվական պատկառելի աճը։ Էօրնեկեան հանրակրթական հաստատությունը, անշուշտ, դպրոցական համակարգի լավագույն օրինակներից է հանրապետությունում։

2011 թվականին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնության խոսք ուղղեց Մանկավարժական համալսարանի շրջանավարտներին՝ հանրակրթական դպրոցների ապագա ուսուցիչներին։ Հայրապետը մասնավորապես ասաց. «Երիտասարդ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը յուրաքանչյուր ազգի հուսալի ապագայի կարեւոր պայմաններից է, եթե ոչ՝ գլխավոր երաշխիքը, քանզի կյանքի բոլոր ոլորտներում գիտելիքներն ու հմտություններն սկսվում են ուսուցանելուց եւ ուսանելուց։ Մատաղ սերնդին գիտության տառը սովորեցնելուց բացի, կարեւոր է նաեւ նրանց հոգեւոր ներաշխարհի ու ազգային նկա-

րագրի ձեւավորումը՝ հիմնված քրիստոնեական մեր հավատքի եւ ազգային մեր արժեքների վրա։ Հայոց ուսուցչապետեր եւ առաջին ուսուցիչներ Սահակ Պարթեւ Կաթողիկոսի, Մեսրոպ Մաշտոց վարդապետի եւ դարեր շարունակ անխոնջ ջանքով սերունդներ կրթած մեր մեծ մանկավարժների արդար երախտիքով մեր ժողովուրդը պահպանեց քրիստոսադրոշմ իր հավատքը, ինքնությունն ու մշակույթը, մեր Եկեղեցին ու հայրենիքը սիրելու եւ պաշտպանելու ոգին ու կամքը, հայրենի պետականությունը կերտելու երազն ու ձգտումը»։

Հայրապետի կոչն էր ապագա մանկավարժներին՝ պահպանել ազգային մեծերի կերպարն ու օրինակը, աշխատանքում դարձնել առաջնորդող ուժ, ոգեշնչման աղբյուր եւ դժվարություններ հաղթահարելու զորություն։

Առաջնորդվենք ու հավատարիմ մնանք Վեհափառ Հայրապետի պատգամին։

ԳԵՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ,
Իրավաբանական գիտ. դոկտոր,
Պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Երբ խոսքը պարզապես հասարակական կամ պետական հայտնի գործչի մասին է, համեմատաբար դյուրին է արտահայտվելը, քանի որ սկզբունքորեն կարելի է թույլ տալ նաեւ որոշ զգացմունքային, անհատական դատողություններ, սակայն անասելի բարդ ու պատասխանատու է, երբ կամենում ես խոսք հնչեցնել հոգեւոր առաջնորդի, մի անհատի վերաբերյալ, որի պարագայում այնքան էլ հարիր չէ ավանդական համընդհանուր լեզվով ու ոճով նրա մարդկային որակներին, հուզական ապրումներին, անգամ կատարած գործին անդրադառնալը, այս դեպքում նախընտրելի է համարվում միմիայն ճշգրիտ եւ սթափ խոսքը։ Ինչեւէ, ուրախ եմ, որ ճակատագիրն ինձ պատեհություն է ընձեռել ոչ միայն հնարավորինս ի մոտո ճանաչելու Վեհափառ Տիրոջը, իր ուղղակի հանձնարարականներով ծառայելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն եւ իրականացվող համազգային նախաձեռնություններին, այլեւ հրապարակավ խոսելու Վեհափառ Տիրոջ առաքինությունների մասին՝ իր քահանայական ձեռնադրման հիսնամյակի առթիվ։

Հայ ժողովրդի պետականության բացակայության պայմաններում աննախադեպ մեծ դերակատարում է ունեցել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին։ Ըստ էության, Հայ Եկեղեցին, շատ դեպքերում փոխառելով պետական մարմիններին բնորոշ գործառույթներ (հատկապես պետականության ձեւավորման սկզբնական փուլերում), իրականացրել է համազգային կեցության կանոնների ձեւավորումն ու դրանց պահպանման նկատմամբ վերահսկողությունը։

Հայ ազգին, ցավոք, չի հաջողվել խուսափել մարդկությանը հայտնի գրեթե բոլոր արհավիրքներից ու աղետներից։ Հզոր ռազմական ներուժ եւ կայացած քաղաքակրթություն ունեցող բազում երկրներ ի զորու չեն եղել դիմակայելու ավերիչ մարտահրավերներին եւ, ի վերջո, կործան-

վել են։ Հայ ազգի գոյատեւման ակունքները սկիզբ են առել քրիստոնեական ուսմունքի հենքով ձեւավորված ամուր ու հուսալի ազգային արժեհամակարգից, իսկ այդ գործում վճռորոշ դերակատարում են ունեցել իրական առաջնորդները։

Ինքնին հայ ազգի արժեհամակարգը ամուր է, առաջադեմ ու կենսունակ, եւ արժանավոր առաջնորդների պարագայում մենք ունեցել ենք կուռ հասարակություն եւ ի զորու ենք եղել հարեւանների հետ ձեւավորել արժանապատիվ բարիդրացիական հարաբերություններ։ Ընդ որում, ապիկար առաջնորդների վարած ապազգային քաղաքականության հետեւանքով ոչ միայն ունեցել ենք մարդկային եւ տարածքային զգալի կորուստներ, այլեւ անհարկի կասկածի տակ են դրվել ազգային որակները, խորացել է պառակտումը, ներազգային թշնամանքը։

Երեւի թե ոչ մի ազգի կենսական գոյության խորապատկերում եկեղեցին չի ունեցել այնքան մեծ նշանակություն, որքան հայ ժողովրդի կյանքում, ինչը թելադրված է եղել նաեւ դարեր շարունակ պետականության բացակայությամբ։ Դրանով է պայմանավորվել Հայ Առաքելական Եկեղեցու կարեւոր առաքելությունը։ Ըստ էության, Հայ Եկեղեցին մեկտեղել է կրոնական կենտրոնի եւ աշխարհիկ իշխանության գործառույթները, ինչը թույլ է տվել գոնե նվազագույն չափով պահպանելու պետական իշխանության տարրերը։

Համարժեք ընկալելով Հայ Եկեղեցու իրական ազդեցիկ դերակատարումը՝ թշնամին մշտապես թիրախավորել է ազգային կրոնական հավատքը եւ այդ հավատքի խորհրդանիշ Հայ Եկեղեցին։ Եւ այս տեսանկյունից ներկայիս շրջափուլը ոչ միայն բացառություն չէ, այլեւ առանձնանում է Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ աննախադեպ ոտնձգություններով։ Խղճի եւ կրոնի ազատության քողի տակ, գերազանցապես թուրքական ծագում ունեցող կամ առնվազն թուրքական աջակցությունը վայելող արտաքին գերհզոր ուժերը ջանք ու եռանդ չեն խնայում սասանելու ազգային հիմնարար արժեքներից ու հիմնասյուներից առավել առանցքայինի՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմքերը։ Գործի են դրվել բոլոր հնարավոր ու անհնարին հնարքները, ֆինանսական հսկայական միջոցների ներդրմամբ ստեղծվել է հակաեկեղեցական տարաբնույթ հասարակական շարժումների մի անասելի համակարգ, որում ներգրավված են հազարավոր մակաբույծներ։ Վիճակն էլ ավելի է վատթարացել ազգային պետական իրավասու մարմինների եւ պաշտոնյաների կողմից

վարվող խոցելի քաղաքականությամբ, երբ անխուսափելի են դարձել ոչ միայն անխոհեմ հրապարակային հայտարարությունները, այլեւ Ազգային Եկեղեցու սահմանադրական կարգավիճակն անտեսող օրենսդրական նախաձեռնություններն ու իրավակիրառ գործունեությունը։

Եւ այսպես, Ազգային Եկեղեցին այսօր առավել, քան երբեւէ հարկադրված է իր սրբազան առաքելությունը կյանքի կոչել՝ հաղթահարելով ոչ միայն արտաքին, այլեւ ներքին լրջագույն խոչընդոտները։

Աստծու կամոք այս դժնդակ շրջափուլում որպես հոգեւոր առաջնորդ է ընտրվել եւ որպես Ամենայն Հայոց կաթողիկոս օծվել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն, ինչը մեծ բարեբախտություն է Հայ ազգի համար։ Վեհափառ տիրոջ հետ իմ առաջին հանդիպումը եղել է դեռեւս 1994 թ., երբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի կարգավիճակով փորձում էր սահմանադրագետների հետ լրջորեն քննարկել Ազգային եկեղեցի *հասկացության սահմանադրաիրավական հիմքերը։ Խնդիրն այն էր, որ 1995 թ. ընդունված Սահմանադրության շարադրանքում անտեսվել էր օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված* Ազգային եկեղեցի *եզրույթը, ավելին՝ իսպառ բացակայում էր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն վերաբերող որեւէ կանոն։ Մանրամասներին չանդրադառնամ, միայն նկատեմ, որ Վեհափառ Տիրոջ ջանքերով Սահմանադրության 2005 թ. փոփոխություններով հստակ ամրագրվեցին առանցքային դրույթներ՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես Ազգային եկեղեցու սահմանադրական կարգավիճակի առնչությամբ։ Հետագայում այս իրավական կանոնները առավել բովանդակային ու ընդգրկուն դարձան Սահմանադրության 2015 թ. փոփոխություններով։ Հետագա տարիները ինձ համար հիշարժան էին այնքանով, որ Վեհափառ Տերն ստանձնել էր Հայ Եկեղեցու կանոնադրական հիմքերը համալիր կերպով վերանայելու խնդիր, որի իրագործման պատասխանատուներից մեկն եմ եղել այս ողջ շրջանում։ Միաժամանակ, նկատել եմ, որ Վեհափառ Տերն առանձնահատուկ հարգանք է տածել իրավունքի նկատմամբ եւ ձգտել է Հայ Եկեղեցու գործունեությունն ամբողջովին կառուցել ազգային օրենսդրության դրույթներին համահունչ։ Հատկանշական է, որ հենց ինքն էլ առաջին անգամ իրագործեց Մայր Աթոռում իրավախորհրդատվական մշտական ծառայություն հիմնադրելու գաղափարը։*

Վերադառնալով սույն ակնարկի նախաբանում արծարծված մտքին՝ հարկ եմ համարում նկատել, որ մեծագույն անհատներին առավել սպա-

ռիչ ու համարժեք գնահատում են սերունդները, սակայն մենք՝ Վեհափառ Տիրոջ ժամանակակիցներս, որ բարեբախտություն ենք ունեցել անձամբ ճանաչելու այդ մեծ հային եւ վայելելու նրա հետ հաղորդակցվելու գերագույն պատիվը, պարտավոր ենք ազնիվ լինել հետագա սերունդների առջեւ եւ հավաստիացնել, որ Վեհափառ Տերը ապրել, արգասավոր գործունեություն է ծավալել եւ շարունակում է այդ վեհ առաքելությունը հայ ժողովրդի պատմության աննախադեպ բարդ ու հակասական շրջափուլում։ Եւ որքան էլ ներքին ու արտաքին հզոր ուժերը փորձում են, միջոցների մեջ խտրականություն չդնելով, թիրախավորել Վեհափառ Տիրոջը, նկատելի հաջողություն չեն արձանագրում եւ չեն կարող արձանագրել։ Այդ ուժերը, որոնք հետապնդում են ազգային ինքնության եւ անվտանգության կարեւոր հենասյուները՝ եկեղեցին, պետականությունը, բանակը, լեզուն, մշակույթը խարխլելու նպատակներ, շատ լավ հասկանում են, որ դրանցից առաջնահերթը հենց Հայ Եկեղեցին է՝ իր անվերապահ առաջնորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կերպարով։ Ուստի, քողարկելով իրենց իրական նկրտումները՝ եկեղեցական բարեփոխումների «ջատագովների» կեղծ դիմակով փորձում են ամեն գնով թիրախավորել Վեհափառ Տիրոջը եւ հոգեւոր դասի՝ հանրային տիրույթում առավել գործուն ներկայացուցիչներին։

Հատկանշականն այն է, որ Վեհափառ Տերը խորապես տեղեկացված է Հայ Եկեղեցու առկա խնդիրներին եւ, հիրավի, հետեւողականորեն հենց ինքն է կանգնած դրանք արմատախիլ անելու նախաձեռնության կենտրոնում։ Ընդ որում, եղած խնդիրները տարաբնույթ հնարքներով ուռճացնելու կամ ազնվագույն ու նվիրյալ հոգեւոր սպասավորներին հանիրավի վարկաբեկելու միջոցով Վեհափառ Տիրոջը որեւէ կերպ խանգարել պարզապես հնարավոր չէ։ Այդ անառողջ ուժերին հունից հանում է հենց այն, որ իրական խնդիրները թափանցիկ կերպով բացահայտվում եւ արձագանք են ստանում անմիջապես Վեհափառ Տիրոջ օրհնությամբ։

Կարծում եմ, մեր պետականությունը մեծ հաջողություններ կհասներ, եթե պետական այրերը վերջապես սթափվեին ու ելակետ ընդունեին այն պարզ իրողությունը, որ ողջ հայության ներուժը կենտրոնացնելը եւ այն խիստ արդյունավետ ու նպատակային օգտագործելը բնավ անիրականալի երազանքներ չեն։ Դա մի իրատեսական գաղափար կարող է դառնալ, եթե նույն այրերը կարողանան դրսեւորել անհրաժեշտ խոհեմություն, առնվազն սահմանադրական հիմնադրույթներին հմապատաս-

խան հարաբերվել Հայ Եկեղեցուն եւ օգտվել Վեհափառ Տիրոջ համաշխարհային անգնահատելի բարձր հեղինակությունից ու միջազգային հանրային դեմքերի հետ ունեցած սերտ կապերից։

Բարեբախտաբար, ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում շատերը դա հրաշալի գիտակցում են եւ պատրաստ են սատար կանգնելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ղեկավարվելու նրա պատգամներով եւ խրատներով, քանզի այս մարդկանց չեն կարող պարզամիտ կեղծիքներով մոլորեցնել։

Իրավաքաղաքական բնականոն զարգացումների պարագայում սահմանադրաիրավական լրջագույն հենքով կարելի էր ակնկալել Հայ Եկեղեցու գործունեության առավել հստակ ու սպառիչ օրենսդրական կարգավորումներ, ինչը անշուշտ կնպաստեր ինչպես պետական իշխանության, այնպես էլ Հայ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների շուտափույթ հաղթահարմանը։ Ակներեւ է, որ Սահմանադրության մեջ սոսկ «հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում» Հայ Եկեղեցու՝ որպես Ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը ամրագրելով անհնարին է երաշխավորել ակնկալվող արդյունքները։

Պետություն *եւ* Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի *հարաբերությունների վերաբերյալ Վեհափառ Տիրոջ մտքերը խիստ փաստարկված ու տրամաբանական էին՝ պետական իշխանությունը միայնակ ի զորու չէ դիմակայելու ազգային ինքնության կայացմանը, ընդհանրապես պետության հզորացման առջեւ ծառացած մարտահրավերներին, մինչդեռ Հայ Եկեղեցու աջակցության պարագայում այդ հիմնախնդիրների լուծումը միանգամայն իրագործելի է։ Մոտ երկու տասնամյակ ականատես եմ եղել Վեհափառ Տիրոջ հետեւողականության արդյունքում կյանքի կոչված այն բարդ քննարկումներին եւ գործնական նախաձեռնություններին, որոնք միտված էին հենց* Պետություն *եւ* Հայ Եկեղեցի *փոխհարաբերությունները՝ հռչակագրային հարթությունից խիստ գործնական մթնոլորտ փոխադրելու կարեւոր գործընթացին։*

Շատ կարեւոր հարց է, թե ինչո՞ւ է թիրախավորվել Հայ Եկեղեցին, ինչո՞ւ է ժողովրդավարության սկզբունքների պաշտպանության պատրվակով հակաժողովրդական անթաքույց պայքար մղվում Հայ Եկեղեցու դեմ։ Այս, ըստ էության, հակաքրիստոնեական եւ միաժամանակ օրինականության տարրական պահանջների ոտնահարմամբ ուղեկց-

վող գործողություններում բացահայտ ներգրավված են ոչ միայն խիստ կասկածելի հիմքերով գրանցված ու չգրանցված աղանդավորական կառույցները, անասելի մեծ չափերով օտարերկրյա ֆինանսավորմամբ սնվող ոչ պետական բազում կազմակերպությունների գործուն անդամները, այլեւ երկակի համօրինակներով աչքի ընկնող միջազգային կազմակերպությունները։ Ցավոք, Հայ Եկեղեցու հետ համագործակցելու եւ առնվազն Սահմանադրությամբ ամրագրված հիմքերով պատշաճ վարչարարություն իրականացնելու մղումներ չեն նկատվում նաեւ հայրենական պետական իշխանության համակարգում։ Վերջինիս պաշտոնյաները, անգամ պարզագույն պատկերացում չունենալով կրոնական կառույցների, մասնավորապես Հայ Եկեղեցու առաքելության ակունքների եւ ակնկալիքների մասին, ոչ միայն զերծ են մնում Սահմանադրության հիմնադրույթները կյանքի կոչելուց, այլեւ ժամանակ առ ժամանակ իրենց թույլ են տալիս հավատացյալին ոչ բնորոշ անթույլատրելի, անպատեհ արտահայտություններ։

Նպատակահարմար եմ համարում մի անչափ առանցքային դիտարկում անել. եթե խնդիր դրվեր Երկրի ղեկավարների հետ անձնական շփումների միջոցով լուծել եկեղեցանպաստ հարցերը, ապա դրանց ճնշող մեծամասնությունն անարգել կյանքի կկոչվեր։ Սակայն հոգեւոր առաջնորդի համար վերջնական նպատակը երբեք գերխնդիր չի եղել, եւ բոլոր այն իրավիճակներում, երբ պարզ է դարձել, որ ակնկալվող արդյունքը ստացվելու է հազարամյակների ընթացքում անասելի դժվարություններով ձեռք բերված՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դարավոր բարի համբավը վնասելու գնով, միանգամայն արդարացիորեն եւ իրավաչափորեն անմիջապես դադարեցվել են հետագա զարգացումները։

Ինչ խոսք, վերը նշված արտաքին ու ներքին հակաեկեղեցական ուժերին մասամբ հաջողվել է հանրության մի որոշ հատվածի մեջ տարածել շփոթ ու անվստահություն, տեխնոլոգիական ժամանակակից խորամանկ հնարքներով հրամցնել տարաբնույթ կեղծ լուրեր, վարկաբեկել Հայ Եկեղեցու սպասավորներին եւ իրականացնել նմանաբնույթ այլ եղկելի քայլեր։ Անհնար է անգամ համարժեք գնահատել երեք օր շարունակ Մայր Աթոռի Վեհարանի շենքը «խաղաղ ցուցարարների» կողմից գրավելու ու անարգել անկարգություններ թույլ տալու դեպքը։

Ցավոք, այդ անթույլատրելի միջոցների զինանոցում մերժելի չեն համարվել բարձրաստիճան հոգեւորականների նկատմամբ քաղաքական

հետապնդումները՝ անգամ ֆիզիկական բռնություններ գործադրելու միջոցով։ Ընդ որում, շարժման առավել աշխույժ մասնակիցները ոչ միայն չեն ենթարկվել քրեական կամ գոնե վարչական պատասխանատվության, այլեւ կարճ ժամանակ անց նշանակվել են կրթական բարձրագույն հաստատությունների պատասխանատուներ։

Ինքս, լինելով զգացմունքային մարդ, երբեմն դժվարությամբ եմ նման դեպքերում մնացել հավասարակշռվածության եւ զսպվածության սահմաններում, սակայն ինձ մշտապես հաճելիորեն զարմացրել է մեր Հոգեւոր Առաջնորդի հանդուրժողական քրիստոնեական պահվածքը։ Մի մասնավոր օրինակ. Գերագույն Հոգեւոր Խորհրդում տարբեր, երբեմն իրարամերժ կարծիքներ էին հնչում այն հարցի շուրջ, թե ինչպես պետք է վարվել այն անձանց հետ, որոնք բացահայտ քարոզում են միասեռականություն եւ պահանջում, որ իշխանությունները եւ Հայ Եկեղեցին օրինականացնեն իրենց ամուսնաընտանեկան հարաբերությունները։ Նույնիսկ առաջարկվեց այդպիսիների համար արգելափակել Եկեղեցու մուտքը։ Վեհափառ Տերը, համբերատար լսելով բոլորի կարծիքները, իրեն բնորոշ ազդեցիկ տոնով հակիրճ պարզաբանեց. «Այդ մարդիկ եւս մեր զավակներն են, նրանք եւս մեր հոգեւոր խնամքի կարիքն ունեն, մենք չենք կարող նրանց առջեւ փակել Եկեղեցու դռները, ճիշտ հակառակը՝ մենք նրանց համբերատար պետք է Աստծու կամոք խոսքով եւ գործով բերենք ճշմարիտ ուղի։ Միաժամանակ, չպետք է ընդօրինակենք կաթոլիկ այն եկեղեցիներին, որոնք եկեղեցական ծիսակատարությամբ օծում են միասեռականների ամուսնությունը։ Որքան էլ Հայ Եկեղեցու համար դժվարին ժամանակներ լինեն, մենք չենք կարող շեղվել ազգային-քրիստոնեական արժեքներից»։

Անշուշտ, Հայ Եկեղեցին ունեցել է բազում երեւելի հոգեւոր առաջնորդներ։ Նրանցից շատերը ոչ միայն բարձր կատարելությամբ տիրապետել են զուտ եկեղեցական առաքելության բոլոր նրբություններին, այլեւ կարողացել են իրենց խորաթափանց մտքով եւ գործունեությամբ հնարավորինս անաղարտ պահել ազգային արժեհամակարգը, հավուր պատշաճի նպաստել ազգային ինքնության եւ հոգեւոր արժեքների պաշտպանությանը եւ երկրի անվտանգության երաշխավորմանը։ Նրանցից շատերին վիճակվել է գործել հայ ժողովրդի ու հայկական պետականության համար անչափ դժվարին ու բարդագույն իրավիճակներում, նվաճողական ու ցեղասպան պատերազմների շրջանում։ Եւ այս օրերին,

երբ մեր Երկիրը, հատկապես Արցախը գտնվում են աննախադեպ վտանգավոր շրջափուլում, իսկ հայրենի իշխանությունը առնվազն դրսեւորում է անթաքույց անկարողություն եւ անձեռնհասություն, հընթացս անհարկի խոչընդոտներ է հարուցում Հայ Եկեղեցու բնականոն գործունեությանը, մեծ բարեպաշտություն է, որ հավատացյալ զավակներին առաջնորդում է հիրավի խորիմաստ ու սրտացավ մի անհատականություն՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Տերը։

Որպես կրթական համակարգի ջատագով կամենում եմ ասելիքս եզրափակել կրթության խորհրդավոր էության առնչությամբ Վեհափառ Տիրոջ մտորումներից մեկով. «Ճշմարիտ կրթությունը թույլ է տալիս մարդկանց դուրս գալու սնահավատության, դաժանության, ատելության, նախապաշարմունքի՝ մարդկության բարգավաճ կյանքի հավերժական թշնամիների մութ քարանձավից»[1]։

Մեր աղոթքներն ենք հղում առ Աստված՝ Վեհափառ Տիրոջ համար խնդրելով քաջառողջություն։ Թող որ Ամենափրկիչը պահպանի նրան երեւելի եւ աներեւույթ փորձություններից՝ պարգեւելով երկար տարիների կյանք՝ ի բարօրություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ աշխարհասփյուռ հայության։ Աստված Վեհափառ Տիրոջը թող պահպան եւ օգնական լինի...

---

[1] ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, *«Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը ԵԽՀ 10-րդ համաժողովի բացման աղոթքին». «Էջմիածին», 2013, Ժ., էջ 14։*

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐԱՆՆԵՐՈՒՄ

Հայ եկեղեցու, հայոց հայրապետների մասին ես միշտ մտածել ու արտահայտվել եմ մեծ ակնածանքով։ Քաջատեղյակ լինելով հայոց պատմությանը, այդ պատմության մեջ եկեղեցու եւ հոգեւորականության կատարած դերին, ես կարծում եմ, որ մենք շատ քիչ ենք լուսաբանում եկեղեցու գործունեությունը լայն հասարակության համար[1]։ Ինձ համար հայ կաթողիկոսի լավագույն օրինակներից մեկը Գեւորգ Ե. Սուրենյանցն է, որը մեր պատմության ամենադժվար ժամանակահատվածում՝ 1918 թվականի մայիսյան ճակատագրական օրերին չի լքել Մայր Աթոռը եւ ոգեւորել ու ոգեշնչել է հայ ազատամարտիկներին։ Նա զբաղվել է եկեղեցու բարեկարգության հարցերով, հիմնադրել է Գերագույն հոգեւոր խորհուրդը (1925 թ.) եւ կաթողիկոսական հատուկ կոնդակով ապրիլի 24-ը հայտարարել է Մեծ եղեռնի օր։

Ապրիլի 24-ը յուրաքանչյուր հայի համար առանձնահատուկ արժեք ունի։ Այդ օրը ոչ մի հայ ընտանիքում չկա խոսակցության այլ նյութ. սրտում կուտակված ցավը, ողբերգական հիշողությունները յուրաքանչյուրիս հոգում պոռթկում են յուրովի։ Ամեն մեկը՝ անկախ տարիքից, իր սրբազան պարտքն է համարում այցելել Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, միանալ այն հազարավոր մարդկանց, որոնց այստեղ է բերել համազգային նույն ցավը՝ մեկուկես միլիոն անմեղ մարդկանց կորստի ու հայրենազրկման ցավը, որ երբեք չի մեղմանում, այլ տարեցտարի ավելի է խորանում ու արդար պատասխաններ պահանջում։ Մեզ՝ հայերիս համար անչափ ոգեւորող է, երբ տարբեր պետություններ ընդունում են հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձեւեր։ Անցյալ տարի մեծ ոգեւորություն ապրեցին աշխարհի տարբեր անկյուններում ապրող միլիոնավոր հայեր, երբ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահն

---

[1] *Այս առումով առանձնահատուկ գովեստի է արժանի Պ. Հովհաննիսյանի, Պ. Խաչատրյանի, Մ. Կատվալյանի Ամենայն Հայոց կաթողիկոսներ (Երեւան, 2001 թ.) գիրքը։*

իր ելույթում քսաներորդ դարասկզբի կոտորածները որակեց իբրեւ ցեղասպանություն։ Ընդամենը վերջերս Մեքսիկայի Միացյալ Նահանգները ընդունեց հայերի հանդեպ տեղի ունեցած ցեղասպանությունը՝ դատապարտելով այն։

2000-ական թվականների սկզբին Վեհափառ Հայրապետի հրավերով մի քանի անգամ մասնակցել եմ տարբեր ուխտագնացությունների եւ Մայր Աթոռի պատվիրակության կազմում ուղեւորությունների դեպի Երուսաղեմ, Մոսկվա եւ այլն, սակայն, մեծ հուզմունք ապրեցի, երբ Մայր Աթոռից հրավեր ստացա՝ մասնակցելու մի ուխտագնացության, որն ինձ համար տարիների հեռավորությունից էլ ավելի է կարեւորվում ու դառնում կյանքիս ամենից առանցքային հիշողություններից մեկը շնորհիվ գերապատվելի Վեհափառ Գարեգին Բ. Ներսիսյանի՝ Ամենայն հայոց կաթողիկոսի՝ ձեռնադրված 1999 թվականի հոկտեմբերի 27-ին։ Շատերն են հիանում Հայրապետի եկեղեցաշինական գործունեությամբ. հայ եկեղեցու հանդեպ տածած նրա սիրո եւ նվիրումի շնորհիվ էր, որ կառուցվեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին։

Վերադառնամ մեր ուխտագնացությանը։ 2001 թ. ապրիլի 23-ին քառասուն հրավիրյալների մեջ նաեւ ես (մեր պատվիրակության կազմում էին գիտության, կրթության եւ մշակութային նվիրյալներ, պետական եւ հոգեւոր դասի բարձրաստիճան ներկայացուցիչներ), ժամանեցինք Հալեպ։ Վեհափառ Հայրապետին ու մեզ պատվո սրահի մեջ ընդունեցին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ը, Բերիայի թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Սուրեն արքեպս. Գաթարոյանը, բարձրաստիճան այլ հոգեւորականներ։ Ներկաներս անկեղծորեն ուրախ էինք եւ հուզված երկու կաթողիկոսների այդ ջերմ հանդիպումից։ Իսկ երբ իմացա, որ մեր ճանապարհը դեպի Դեր Զոր էր ձգվելու, մարմնովս մի տեսակ սարսուռ անցավ, եւ պետք է ասեմ, որ այդ եռօրյա ուխտագնացության օրերին ես հասկացա, որ հանձինս Գարեգին եւ Արամ կաթողիկոսների, Հայ եկեղեցու պատմության մեջ եւս երկու անուն արժանի կերպով վաստակել են իրենց բարձունքը։ Մինչ այսօր էլ ականջիս մեջ է Վեհափառ Հայրապետ Գարեգին Երկրորդի հուզումնառատ խոսքը՝ ուղղված Հալեպի հայությանը։ Ասեմ, որ հայկական համայնքը Հալեպի քրիստոնյա բնակչության նշանակալից մասն է։ Հալեպի առաջնորդանիստ եկեղեցին Ս. Քառասնից մանկանց եկեղեցին է։ Եւ այսօրվա պես հիշում եմ, թե ինչպես էին երբ ուխտագնացների մեր թափորը շարժվում էր դեպի աթոռանիստ

եկեղեցի, հազարավոր հայեր Ամենայն Հայոց Վեհափառին մեծ ջերմությամբ ողջունում էին պողոտայի սկզբնամասում, եւ ապա ծափողջույններով ուղեկցեցին մինչեւ եկեղեցի, երբ ուխտագնացների մեր թափորը շարժվում էր դեպի աթոռանիստ եկեղեցի։ Վեհափառը անչափ հուզված էր այդ խանդավառ ընդունելությունից։ Հայաստանի Հանրապետության եւ Սիրիայի Արաբական Հանրապետության օրհներգերի կատարումից հետո դպրոցականները ճերմակ աղավնիներ բաց թողեցին երկինք։ Իսկ Արամ Ա. կաթողիկոսը Վեհափառի այս ուխտագնացությունը համարեց՝ «պատգամ ունեցող պահ մը, որ մեր պատմութեան շրջագծէն անդին՝ դէպի յաւիտենականութիւն կ՚երթայ ու մեր միասնականութիւնը կը շեշտէ»։ *Իսկ Վեհափառը, ոչ մի կերպ չկարողանալով թաքցնել իր հուզմունքը, ողջույնի իր խոսքում ասաց.* «Սիրելինե՛ր, գալով Ազատ ու Անկախ Հայրենիից, որպես ազգիս Հայրապետ, բերել եմ ձեզ մեր ողջույնները հայրենաբնակ ժողովրդից, Ծիծեռնակաբերդից, որը որպես մի նոր վկայություն մեր հավերժական լինելիության, վեր է հառնել Հայոց հողի վրա։ Բերել եմ ձեզ ողջույններ Սարդարապատի զանգերից, որ իրենց ղողանջով մշտապես արթուն են պահում Դեր Զորում ընկածներին, մահին մահով հաղթելու»[2]։

Հուզված էինք բոլորս, հուզվում էինք յուրաքանչյուր վայրկյան, իսկ երբ կեսօրից հետո զույգ կաթողիկոսների գլխավորությամբ ճամփա ընկանք դեպի Դեր Զոր, մեր հուզմունքն անչափելի էր։ Հայերի թիվը Դեր Զորի բնակչության մեջ հասնում է ընդամենը հարյուրի։ Եղեռնից փրկվածները Դեր Զորի Ս. Հռիփսիմե մատուռի գմբեթի տակ հավաքեցին ի պահ մեր անթաղ զոհերի աճյունները։ Երբ մատուռը փլվելու վտանգի առջեւ էր, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ն հին շինության տեղում 1990 թ. սկսեց կառուցել Մեծ եղեռնի հուշահամալիրը եւ Ս. Նահատակաց եկեղեցին։ Այդ ուխտագնացության հետ կապված շատ մանրամասներ թերեւս մոռացել եմ, բայց եկեղեցու՝ սեւ մարմարից կառուցված պատի քանդակը երբեք չեմ կարող մոռանալ. անապատի ավազի վրա մայրն իր որդուն հայոց այբուբենն է սովորեցնում։ Եւ ահա, այս եկեղեցին է, որ դարձել է հայերի մշտական ուխտատեղին։ Երկու կաթողիկոսների խոսքը՝ այդ սրբավայրում հնչեցրած, կարծում եմ, մեր խմբի քառասուն անդամներից ոչ ոք չի մոռացել, որովհետեւ դա սրտի ու հոգու խոսքն էր առ Աստված, մեր անմեղ զոհերի հիշատակին։ «Յիշատակն ար-

[2] *Պետրոս Հովհաննիսյանի՝ «Վեհափառ Հայրապետի ուխտագնացությունը Դեր Զոր» հոդվածից։*

դարոց օրհնութեամբ եղիցի, Ամէն»,– *եզրափակեց իր խոսքը Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Երկրորդը՝ Արամ կաթողիկոսին նվիրելով Ամենափրկիչ Ս. Աստվածածնի նկարը։ Սուրեն Սրբազանին տրվեց հայրենիքից բերված հողը, որպեսզի նա շաղ տա Դեր Զորում իրենց մահը գտած մեր անթաղ զոհերի վրա, եւ ջուրը՝* «Գիտենք, որ տասնյակ մղոններ անցած մեր նահատակները պապակ կլինեն եւ հավատացած ենք, որ, որ Ս. Էջմիածնից բերված այդ ջուրը պիտի նրանց պապակը մարի»։ *Նայում էի եկեղեցու բակում հավաքված հավատացյալներին, որոնց արտասվալից աչքերն ուղղված էին Ամենայն Հայոց Վեհափառին, եւ տեսնում, թե որքան ջերմություն ու կարոտ կա նրանց հայացքներում, ինչպես են նրանք կլանում Հայոց Հայրապետի արտասանած յուրաքանչյուր բառը։ Եւ ես հասկանում էի, որ ուխտագնացությունից բացի, այս հանդիպումը ավելի մեծ մի խորհուրդ ունի. երկու աթոռանիստ եկեղեցիների առավել մերձեցումով աջակցել աշխարհով մեկ սփռված քրիստոնյա հայության համախմբումին՝ ի նպաստ մայր հայրենիքի զարգացմանն ու բարգավաճմանը։*

ՎԱՐԴԱՆ ԴԵՒՐԻԿՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ԳԻ տնօրէն

ՀՈԳԵՒՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՎԻՐՈՒՄԻ ԿԵՍԴԱՐՅԱ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՈՒՂԻ

«Տո՛ւր զորութիւն ծառայի Քո...»
(Սաղմ. ԺԵ. 15)։

Հայոց Եկեղեցին ազգային է կոչվում երկու պատճառով։ Առաջին՝ իրենում հոգեւոր նոր վերիմաստավորմամբ, եկեղեցական ծեսերի շրջանակում կրում է հայ ժողովրդական սովորությունները եւ վաղնջական ժամանակներից եկող հավատալիքները։ Այն արտահայտվել է նաեւ քրիստոնեական գլխավոր սրբավայրերը նախաքրիստոնեական պաշտամունքային վայրերի տեղում կառուցելով եւ հին տոների վրա նորերը հաստատելով։

Երկրորդ՝ Հայոց Եկեղեցին իր բուն քրիստոնեական առաքելությանը զուգահեռ նաեւ ազգապահպան գործառույթ ունի, որն առավել է ընդգծվել Ժ.–ԺԱ. դարերից՝ պետականության կորստից եւ հայ ժողովրդի աշխարհասփյուռ դառնալուց հետո, երբ համայնքի հոգեւոր առաջնորդը եւ ծխական քահանաները հոգեւոր սպասավորությունից բացի զբաղվել են նաեւ ազգապահպան գործունեությամբ՝ պահելով հայության կապը Մայր Հայրենիքի եւ Մայր Եկեղեցու հետ։

Ըստ այսմ, Հայոց Եկեղեցում ձեռնադրության յուրաքանչյուր աստիճան մեծացնում է հայ եկեղեցականի հոգեւոր շնորհը եւ սպասավորության շրջանակը աբեղայական աստիճանում իրեն վստահված ծխից եւ համայնքից մինչեւ Հայոց Հայրապետական Աթոռի ազգային պատասխանատվությունը։

«Մաշտոց» ծիսարանի ձեռնադրության կանոնները հստակորեն սահմանում են եկեղեցական յուրաքանչյուր աստիճանին վերապահված իրավասությունները, որոնք կատարվում են ստացված հոգեւոր շնորհով։

Եպիսկոպոսական ձեռնադրության կանոնում եթե նշվում են եպիսկոպոսին վերապահված եկեղեցական աստիճանի ծիսական եւ վարչա-

կան իրավասությունները, ապա կաթողիկոսական ձեռնադրության կանոնում ընդգծվում է Հայոց Հայրապետի համահայկական դերը եւ իրավասությունները ազգային-եկեղեցական հարցերում։

Կաթողիկոսական ձեռնադրության աղոթական հայցվածում ասվում է. «Աստուածային եւ երկնաւոր շնորհ, որ միշտ լնուս զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ (այս անուն) յԵպիսկոպոսութենէ ի Կաթողիկոսութիւն Հայաստանեայցս Եկեղեցւոյ՝ ի Հովուապետութիւն եւ յԱռաջնորդութիւն ընդհանուր ազգիս Հայոց՝ ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեանս»[1]։

Յուրաքանչյուր հոգեւորական, անկախ եկեղեցական նվիրապետությունում ունեցած աստիճանի, նախեւառաջ քահանա է, ինչպես որ ամեն հրամանատար նախ զինվոր է։ Իրենց ծառայությունը առավել բոլորանվեր են կատարում այն հոգեւորականները եւ զինվորականները, ովքեր ստացած բոլոր աստիճաններում շարունակում են մնալ քահանա եւ զինվոր։

Հայոց Եկեղեցու նվիրապետության բոլոր աստիճաններով հոգեւորականի իր ճանապարհը այս գիտակցությամբ ու նվիրումով է անցել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ կուսակրոն քահանա ձեռնադրվելով հիսուն տարի առաջ՝ 1972 թ. հոկտեմբերի 15-ին՝ ձեռամբ Տիրան արքեպս. Ներսոյանի։ Վաղարշապատի Ս. Շողակաթ եկեղեցում նույն ամսի 22-ին մատուցում է անդրանիկ Ս. Պատարագը եւ տալիս անդրանիկ քարոզը «Յիշատակն արդարոցն օրհնութեամբ եղիցի» բնաբանով[2]։

Անդրանիկ քարոզները եւ վերջիններիս բնաբանները խորհրդանշական ձեւով կանխորոշում են նորաօծ հոգեւորականների անցնելիք ուղին ու հոգեւոր հանձնառությունը։ Բնորոշ օրինակն է Մկրտիչ Ա. Խրիմյանի անդրանիկ քարոզի «Հովիւ քաջ զանձն Իւր դնէ ի վերայ ոչխարացն իւրոց» բնաբանը, որը կանխանշեց Հայոց Հայրիկի անձանձիր պայքարը հանուն հայ ժողովրդի իրավունքների[3]։

Գարեգին աբեղայի քարոզի բնաբանը նախանշում էր արդարների ճանապարհով ընթանալը եւ կապը նախնյաց ավանդներին, որը շարունակվում է առ այսօր։

---

[1] *Կանոն ձեռնադրութեան եւ օծման Կաթուղիկոսի եւ Հայրապետի Ամենայն Հայոց, Վաղարշապատ, 1876, էջ 4։*

[2] *«Էջմիածին», 1972, Ժ., էջ 43–44։*

[3] *Տե՛ս Հ. Աճեմեան, Հայոց Հայրիկ, Թաւրիզ, 1929, էջ 210։*

Ձեռնադրության ամեն աստիճան ոչ միայն հոգեւոր նոր շնորհ է պարգեւում, այլեւ բարձրացնում է ձեռնադրվող հոգեւորականի պատասխանատվության աստիճանը «առաջի եկեղեցւոյ եւ ազգի»։ Ասվածը լիովին վերաբերում է եւ ազգիս Վեհափառ Հայրապետին։ Տեսնում ենք, որ իր ողջ կյանքում Նորին Սրբությունը եղել է ուսուցիչ ու հոգեւոր հովիվ։ Ձեռնադրության յուրաքանչյուր աստիճան ոչ թե փոխել է հովվական գործունեության բնույթը, այլ ընդլայնել այդ գործունեության շրջանակը եւ պատասխանատվության աստիճանը։ Ձեռնադրությանը հաջորդող տարիները անցել են Ավստրիայում, Գերմանիայում եւ Մոսկվայում՝ աստվածաբանական բարձրագույն հաստատություններում ուսանելով եւ տեղի հայ համայնքներում հոգեւոր հովվությամբ։

«Էջմիածին» ամսագրի 1970-ական թվականների համարներում տեղեկություններ ենք գտնում Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սարկավագական եւ աբեղայական շրջանի գործունեության մասին։

1972 թ. օգոստոսի համարում տեղ է գտել Կտրիճ սրկ. Ներսիսյանի «Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ եկեղեցու երիտասարդաց միության անդամները Ս. Էջմիածնում եւ Մայր Հայրենիքում» հուզիչ հրապարակումը, որում հարազատորեն ընթերցողին են փոխանցվում հայրենակարոտ ուխտավորների զգացումները։ Շարադրանքին համահունչ հոդվածը եզարափակվում է «Կռունկ» ժողովրդական երգի Գեւորգ Էմինի «Երգ կռունկի մասին» բանաստեղծությամբ։

Ամսագրի այդ եւ հաջորդող տարիների համարները տեղեկություններ են հաղորդում Մայր Աթոռի երիտասարդ միաբանի Վիեննայի եւ Բոննի համալսարաններում, ինչպես նաեւ Ռուս Ուղղափառ եկեղեցու հոգեւոր ակադեմիայում աստվածաբանություն ուսանելու մասին։

Մայր Աթոռի «Բեմ լուրեր» խորագրի ներքո 1974—1979 թթ. պարբերաբար լուրեր են տպագրվում Գարեգին աբղ. Ներսիսյանի հովվական գործունեության եւ ուսումնառության վայրերից Ս. Էջմիածին գալու եւ Գերագույն հոգեւոր խորհրդի ու միաբանական ժողովներում Ավստրիայի եւ Գերմանիայի հայ համայնքների վիճակին վերաբերող տեղեկատվություն ներկայացնելու մասին։ Այս հաղորդագրությունների կարճառոտ տողերում երեւում է ապագա բարձրաստիճան հոգեւորականի վերլուծական հայացքը, որով բնորոշվում եւ դիտարկվում է տեղի հայ համայնքների կյանքը, եւ որոշակի տեսակետներ եւ գործողությունների ծրագիր է առաջադրվում։

Նույն այս հաղորդագրություններից տեղեկանում ենք, որ երիտասարդ աբեղան, ապա եւ վարդապետը յուրաքանչյուր իր վերադարձին Ս. Պատարագ է մատուցել Միածնաէջ սրբավայրում։

1980 թվականի մարտի 10-ից սկսվում է Գարեգին աբեղայի թեմական գործունեությունը Արարատյան հայրապետական թեմում՝ նախ որպես առաջնորդական փոխանորդի օգնական փոխանորդ, ապա եւ 1983 թ. մարտի 21-ից թեմի առաջնորդական փոխանորդ։

Վազգեն Առաջինի՝ այս նշանակման առիթով տրված սրբատառ կոնդակի հետեւյալ տողերը կարծես կանխասացություն լինեն Գարեգին եպս. Ներսիսյանի, ապա եւ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի գործունեության համար. «Ձեր նոր պաշտոնում պիտի շարունակեք Ձեր եկեղեցաշեն գործունեությունը, Ձեր անձը բնորոշող հոգեւոր եռանդով եւ պատասխանատվության գիտակցությամբ»[4]։

Թեմական նշանակմանը հաջորդում է եպիսկոպոսական աստիճանի ձեռնադրությունը եւ օծումը 1983 թ. հոկտեմբերի 23-ին՝ ձեռամբ Վազգեն Առաջինի[5]։ Նույն ամսի 30-ին մատուցում է եպիսկոպոսական ուխտի անդրանիկ պատարագը։

Նորաօծ եպիսկոպոսի հաստատած ուխտը շարունակաբար նորոգվում է եկեղեցաշեն եւ ազգաշեն տարբեր իրագործումներով, որոնցից շատերը եպիսկոպոսական ձեռնադրությունից հետո վերջին քառասուն տարիներին կատարվել են մեր ժողովրդի համար դժվարին պայմաններում։

Եպիսկոպոսական ձեռնադրությունը ուղեկցվեց Այրարատյան հայրապետական թեմի առաջնորդությամբ՝ սերտ գործակցությամբ Վազգեն Առաջինի։

Գարեգին եպիսկոպոսը 1986 թ. սեպտեմբերի 7-ին կատարում է իր անդրանիկ քահանայական ձեռնադրությունը[6], իսկ սեպտեմբերի 15-ին հրամանավ Վազգեն Առաջինի նշանակվում է Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ։

1987 թ. սեպտեմբերի 12-ին Արտաշատի Մրգավան գյուղի Ս. Հակոբ եկեղեցու զանգակատան խաչի օծումը ազդարարում է ապագա Հայոց Հայրապետի ծավալուն եկեղեցաշինական գործունեության սկիզբը[7]։

---

[4] *«Էջմիածին», 1983, Բ.–Գ., էջ 3–4։*
[5] *«Էջմիածին», 1983, Թ.–Ժ., էջ 79–80։*
[6] *«Էջմիածին», 1986, Թ., էջ 40–42։*
[7] *«Էջմիածին», 1987, Թ.–Ժ., էջ 42–43։*

Խորհրդային տարիներին Հայաստանի եկեղեցական կյանքում նշանակալից իրադարձություն դարձավ Արարատյան հայրապետական թեմի նոր եւ շքեղ առաջնորդարանի կառուցումը, որի բացմանը 1987 թ. սեպտեմբերի 26-ին Վազգեն Առաջինի գլխավորությամբ հրավիրվում են մի շարք բարձրաստիճան հոգեւորականներ եւ բարերարներ[8]։ Առաջնորդարանի շենքի կառուցումը դարձավ նախօրինակը Ս. Էջմիածնի Վեհարանի եւ Կաթողիկոսարանի տարբեր շինությունների կառուցման եւ նորոգության։

Կարելի է ասել, որ հայրապետական թեմում առաջնորդական փոխանորդի կարգավիճակով բոլոր իրագործումներն, այնուհետեւ համազգային ընդգրկմամբ եւ իմաստավորմամբ իրականացվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսության շրջանում, ինչպես օրինակ, եկեղեցական մի շարք նշանակալից տոների ժողովրդական արարողությունները նաեւ տարբեր օրհնությունների օրեր հայտարարելը։

Երջանկահիշատակ Վազգեն Առաջինից Գարեգին Երկրորդին են փոխանցվել վճռական, բայց եւ շրջահայաց գործելու շնորհը, գլխավորը արդյունքը համարելը եւ ոչ թե արտաքին դրսեւորումները։ Վեհափառ Հայրապետի կարգախոսն է. «Խոսքից առաջ՝ գործ»։ Կաթողիկոսական ձեռնադրությանը հաջորդող տարիներին այս կարգախոսով են Հայոց Եկեղեցում եւ Սուրբ Էջմիածնում իրականացվել այն վիթխարի իրագործումները, որոնց փաստագրական թվարկումը երկայն էջեր է կազմում, եւ այդ էջերը շարունակում են ավելանալ։

Գարեգին Երկրորդի կաթողիկոսական ընտրությունը համընկնելով մեր երկրի համար ծանրագույն փորձության՝ հոկտեմբերի 27-ի ողբերգության հետ, միաժամանակ նախորդեց համաքրիստոնեական եւ ազգային-եկեղեցական երկու մեծագույն իրադարձությունների՝ Քրիստոսի Ս. Ծննդյան 2000 եւ Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակներին։

Գարեգին Երկրորդը 2000 թ. հունվարին Հորդանանի ափերին քրիստոնեական աշխարհի կրոնապետերի հետ հաղորդվելով Մկրտության 2000-ամյա նորոգվող խորհրդին, մեկ տարի անց Քրիստոնյա աշխարհի կրոնապետերին ընդունեց Հայաստանում, որով երկու տարվա մեջ նախ քրիստոնեության օրրանում, ապա եւ սուրբգրային Արարատի հովանու

---

[8] *«Էջմիածին», 1987, Թ.—Ժ., էջ 6—10։*

ներքո երկիցս արտահայտվեց Քրիստոնյա աշխարհի եւ ավանդական եկեղեցիների միասնությունը։

Մեծ խորհուրդ ունի այն իրողությունը, որ կաթողիկոսական ընտրությունից հետո Գարեգին Երկրորդը իր անդրանիկ ուխտագնացությունը կատարեց դեպ Օշական՝ խոնարհումը բերելով հայոց մեծ ուսուցչապետին 1999 թ. նոյեմբերի 27-ին։ Ինչպես Վեհափառն է գրում. «Հոգու պարտք էր մեզ համար այցելել այս նվիրական Ս. եկեղեցին, որի կամարների ներքո հանգչում է մեր մեծ վարդապետը։ Եկանք վերանորոգելու մեր ուխտը, խոնարհվելու շիրիմի առջեւ։ Մեր շուրթերով հպվելու իր խորհրդին եւ իր օրհնությունը հայցելու Մեր գործունեության, հայրապետական Մեր գահակալության ողջ ընթացքի համար»[9]։

Այս ուխտագնացության եւ ուխտի խոսքերի արձագանքն ենք գտնում հայրապետական անդրանիկ կոնդակում եւ Նորին Սրբության հետագա ողջ գործունեությունում։

Հայրապետական անդրանիկ կոնդակներում նախանշվում են նորընտիր հայրապետների հետագա գործունեության ընթացքի գլխավոր ուղղությունները։

Վազգեն Առաջինի անդրանիկ կոնդակը հարաբերվեց Խորհրդային Միությունում տեղի ունեցած քաղաքական խորքային փոփոխություններին հետ, որոնք պատմության մեջ մտան որպես Ձնհալի շրջան։

Վազգեն Առաջինի գործունեությունը եւ անդրանիկ կոնդակը եկան ազդարարելու, որ թեկուզ գծված սահմանափակումների շրջանակում Խորհրդային Միությունում Հայոց Եկեղեցուն վերապահվում էր գործունեության ավելի մեծ շառավիղ՝ պատմական եկեղեցիների եւ վանքերի վերաբացմամբ եւ Հայրենիք-Սփյուռք կապերով։

Վազգեն Առաջինը թվարկելով կատարելիք գործերը, առաջինը նշում է Մայր Աթոռի միաբանության գործունեության վերակազմակերպումը եւ երկրորդը՝ «Վերանորոգել եւ վերազարդել մեր վանքերը»։ Այս շրջանում դժվար էր նոր եկեղեցիների կառուցման թույլտվության ստացումը, ուստի այս մասին հիշատակություն չկա։ Երրորդ եւ չորրորդ կետերը վերաբերում են Գեւորգյան հոգեւոր ճեմարանը եւ «Էջմիածին» ամսագիրը որակական նոր աստիճանի բարձրացնելուն[10]։

---

[9] *«Էջմիածին», 1999, ԺԲ., էջ 3։*

[10] *«Էջմիածին», 1956, Բ., էջ 3–8։*

Գարեգին Առաջինն ընտրվեց նորանկախ Հայաստանում, երբ Խորհրդային տարիների սահմանափակումներից հետո հրամայական անհրաժեշտություն էր դարձել եկեղեցական կյանքի վերաշխուժացումը եւ վերջինիս հետ սերտորեն կապված հոգեւոր նոր սերնդի պատրաստությունը, պատմական եկեղեցիների վերաօծումը եւ նոր եկեղեցիների կառուցումը, ինչպես նաեւ քրիստոնեական քարոզչության եւ դաստիարակության տարածումը։

Պայմանավորված էկումենիկ շարժման ընդլայնմամբ եւ Խորհրդային Միության երկաթյա վարագույրի վերացմամբ, Գարեգին Առաջինը կարեւորում է նաեւ միջեկեղեցական կապերի ընդլայնումը եւ հաղորդակցությունը քույր եկեղեցիների հետ՝ շեշտելով, որ եկեղեցական կյանքում մեկուսացումը լճացման է հանգեցնում[11]։

Անհրաժեշտ է, սակայն նշել, որ միջեկեղեցական կապերը եւ Հայոց Եկեղեցու գործունեությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդում եւ համաբնույթ կառույցներում պատշաճ տեղ են գրավում սկսած 1960-ական թվականներից։

Գարեգին Առաջինը եռանդուն կերպով նվիրեց անդրանիկ կոնդակում արծարծված հարցերի լուծմանը, վերահաս հիվանդությունը, սակայն, խանգարեց դրանց առավել մեծ ծավալով իրականացմանը։

Երկու հազարամյակների հատման կետում ընտրված Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսին էր վիճակված ձեռնամուխ լինելու Հայոց Եկեղեցու առջեւ ծառացած ամենատարբեր խնդիրների լուծմանը եւ արագ փոփոխվող աշխարհի եւ համաշխարհայնացման թելադրած հոգեւոր բարոյական մարտահրավերներին դիմակայելուն։

Հայ եկեղեցական կյանքին եւ միջեկեղեցական հարաբերություններին վերաբերող հարցերը իրենց հայելային արտացոլումն են գտել Գարեգին Երկրորդի Հայրապետական անդրանիկ կոնդակում։ Իր երջանկահիշատակ նախորդների հիշատակած կետերը այստեղ ներկայացված են առավել մեծ ընդգրկմամբ՝ համահունչ ժամանակի առաջադրած խնդիրներին։

Գարեգին Երկրորդը եւս առաջինը ընդգծում է հոգեւոր կյանքի բարեփոխման եւ վերակազմավորման անհրաժեշտությունը։ Երկրորդ՝ հոգեւոր նոր սերնդի պատրաստությունը, երրորդ՝ պատմական եկեղեցինե-

---

[11] *«Էջմիածին», 1995, Զ.–Է., էջ 11։*

րի վերանորոգությունը, չորրորդ՝ նոր եկեղեցիների կառուցումը, հինգերորդ՝ համայնքային կյանքի կազմակերպումը, որի համար անհրաժեշտ էր նախորդ երեք կետերի կատարումը՝ նոր հոգեւորականների ձեռնադրություն եւ վերաբացված ու նոր կառուցված եկեղեցիներ։ Որպես վեցերորդ կետ նշվում է քարոզչական գործունեությունը։

Յոթներորդ կետը վերաբերում է Հայոց Եկեղեցու համար ավանդական Սփյուռքի հայկական համայնքների եւ թեմերի փոխգործակցությանը եւ Ս. Էջմիածնի ու Մայր հայրենիքի հետ կապին։

Ութերորդ կետը՝ գնալով առավել կարեւորվող միջեկեղեցական հարաբերություններին, եւ վերջապես իններորդ կետը, որը պայմանավորված էր Հայաստանի կյանքում եկեղեցու գնալով ընդլայնվող գործունեությամբ, վերաբերում է եկեղեցի-պետություն գործակցությանը[12]։

Բացառապես կաթողիկոսական իշխանությանը վերապահված կանոնները չորսն են։ Առաջին՝ կաթողիկոսական օրհնությունը, որը կատարում են եպիսկոպոսները հավաքաբար։ Երկրորդ՝ Կաթողիկոսի կողմից կատարվող եպիսկոպոսական ձեռնադրությունը։ Երրորդ՝ պատմական ավանդույթով թագավորի օրհնությունը կամ օծումը, որը Հայաստանի Երրորդ հանրապետությունում փոխարինվեց երկրի նախագահի օրհնությամբ, եւ վերջապես չորրորդը՝ Սրբալույս Մյուռոնի օրհնությունը։

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդեն երեք անգամ 2001, 2008 եւ 2015 թթ. կատարել է Սրբալույս Մյուռոնի օրհնություն։ Օրհնվող նոր մյուռոնին որեւէ բնորոշում տալը թեեւ հատուկ չի եղել մեր եկեղեցական ավանդույթին, սակայն երջանկահիշատակ Վազգեն Առաջինը 1991 թ. սեպտեմբերի 29-ին օրհնած Մյուռոնը անվանեց Անկախության Մյուռոն[13]։ 1990-ական թվականներին սկսված ազգային-հոգեւոր վերզարթոնքի տարիներին 1996 թ. սեպտեմբերի 8-ին օրհնված Մյուռոնը երջանկահիշատակ Գարեգին Առաջինը անվանեց Վերածնության Մյուռոն[14]։

Հայոց Մեծ դարձի 1700-ամյակի տարում՝ 2001 թ. սեպտեմբերի 22-ին օրհնված մյուռոնը Գարեգին Երկրորդն անվանեց 1700-ամյակի Մյուռոն[15], 2015 թ. օրհնված Մյուռոնը՝ Հաղթության Մյուռոն[16]։

---

[12] «Էջմիածին», 2000, Բ., էջ 6։
[13] «Էջմիածին», 1991, Թ.–Ժ., էջ 17։
[14] «Էջմիածին», 1996, Թ., էջ 37։
[15] «Էջմիածին», 2001, Թ., էջ 18։
[16] «Էջմիածին», 2015, Թ., էջ 12։

Այսօր, երբ ցիրուցան, շփոթահար եւ տարբեր բաժանումների ենթարկված մեր ժողովուրդն ապրում է իր բազմադարյան պատմության ամենադժվարին պահերից մեկը, առավել կարիքն ունի ազգային միասնության, եւ թող նոր օրհնվելիք մյուռոնը դառնա միասնականության եւ ազգային համախմբվածության մյուռոն՝ հոգեւոր յոթնարփյան իր շնորհով մեր ժողովրդին վերստին մղելով նորանոր մեծագործ իրագործումների։

Հայոց Եկեղեցու ազգապահպան առաքելությունը Հայաստանի անկախության վերականգնումից հետո պահպանվեց ոչ միայն Սփյուռքում, այլեւ տարաբնույթ ձեւերով նաեւ Հայաստանի Հանրապետությունում։ Մեր ժողովրդի քրիստոնեական արժեհամակարգի եւ եկեղեցական ծեսերի կատարումից բացի մտահոգությունը մեր երկրի վիճակով, կրթության, մշակույթի եւ համաբնույթ հարցերով պայմանավորված է թե՛ եկեղեցական ավանդույթով եւ թե՛ ժամանակակից մարտահրավերներով։

Հայ մշակույթի գերակշիռ մասը ստեղծվել է մեր միջնադարյան վանքերում կամ կապվում է վերջիններիս հետ։ Հայոց պատմության, արվեստի եւ գրականության ուսումնասիրությունը ուղղակիորեն եւ անուղղակիորեն հարաբերվում է հայ եկեղեցու անցյալի ժառանգության եւ պատմության հետ, որի համար հայ մշակույթի եւ հայագիտության այսօրվա հարցերը մեծապես մտահոգում են նաեւ մեր եկեղեցուն։

Կրոնական որեւէ հարանվանություն կարող է զբաղվել իր համայնքի կրոնական հարցերով։ Ս. Էջմիածինը, սակայն, իրեն պատասխանատու է զգում բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են մեր ազգային ինքնության եւ նկարագրի պահպանությանը։ Հայ եկեղեցուն այս հարցերում պատասխանատու է համարում նաեւ մեր ժողովուրդը, գտնելով, որ այդ ամենը եկեղեցու առաքելության մասն են կազմում։

Խորհրդային տարիներին Ս. Էջմիածնի գործունեությունը գիտության եւ մշակույթի բնագավառում եթե ավելի շատ սահմանափակվում էր կրոնաեկեղեցական մատենագրության ուսումնասիրությամբ, պայմանավորված ժամանակի գաղափարաքաղաքական սահմանափակումներով, ապա այսօր այն անհամեմատ ընդլայնվել է՝ ընդգրկելով թեմերի միջոցով արտաքին դիվանագիտական գործառույթներից մինչեւ ակադեմիական համատեղ ուսումնասիրությունների իրականացումը եւ մասնակցությունը կրթամշակութային ծրագրերին։

Ինչպես որ Հայ Եկեղեցին եւ հայ ժողովուրդը փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով, այնպես եւ՛ եկեղեցու եւ՛ պետության գործառույթներն են համապետական կարեւորություն ունեցող մի շարք հարցերում սերտորեն շաղկապված իրար։

Որպես հայագիտության բնագավառի ներկայացուցիչ, կարող ենք հավաստել, որ աննախադեպ է Գարեգին Երկրորդի բերած նպաստը հայագիտությանը եւ հայ մշակույթին։

Հայոց Եկեղեցին, լինելով ազգային Եկեղեցի, հոգեւոր կրոնական գործունեությանը զուգահեռ բարոյական եւ ուղղակի պատասխանատվություն է կրում նաեւ գիտության եւ մշակույթի վիճակի համար։ Այս պատասխանատվությունը առավել մեծացավ հետխորհրդային տարիներին՝ պայմանավորված նորանկախ Հայաստանում ստեղծված դժվարին իրավիճակով։

Գարեգին Երկրորդը, շարունակելով իր երջանկահիշատակ նախորդների գործը, անհամեմատ մեծացրեց Սուրբ Էջմիածնի դերը հայագիտական հրատարակությունների եւ տարբեր ծրագրերի իրականացման գործում։

Գարեգին Երկրորդի գահակալությանը հաջորդած տարիներին Հայաստանում եւ ընդհանրապես աշխարհում որեւէ տեղ այնքան հայագիտական գործեր չեն տպագրվել, որքան Սուրբ Էջմիածնում։ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի կողքին Մայր Աթոռն է այսօր հայագիտության երկրորդ խոշոր կենտրոնը իր գիտակրթական հաստատություններով, հրատարակչությամբ եւ «Էջմիածին» ամսագրով, ձեռագրատնով ու «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի գրքային հարուստ հավաքածուով։

Հոգեւոր կրոնական առաքելությանը զուգահեռ, Հայոց Եկեղեցին եւ Սուրբ Էջմիածինը պատասխանատվություն են կրել հայ հայրենիքի եւ հայ ժողովրդի լինելության համար։ Պատահական չէ, որ Սուրբ Էջմիածինը դարեր շարունակ հայ ժողովրդի ազգային գիտակցության եւ մեր գրականության մեջ եղել է ազգահավաքման խորհրդանիշ։

Պատմական դժվարին իրավիճակներում Սուրբ Էջմիածնին է հառնվել մեր ժողովրդի՝ սպասումով եւ հույսով լի հայացքը։ Սուրբ Էջմիածնից են հնչել դեպ Սարդարապատ առաջնորդող զանգերի ղողանջները։

Արցախյան շարժման փոթորկալից օրերին Սուրբ Էջմիածնից է հնչել ժողովրդին չկշռադատված քայլերից հեռու պահելու Վազգեն Առաջինի ահազանգող ձայնը։

Գարեգին Երկրորդը իր գործունեությամբ շարունակում է նույն այդ գործը՝ հանուն ազգային համախմբման եւ այս անկյալ վիճակից ելքեր որոնելու։

Հայոց Հայրապետական Աթոռի սպասավորը մինչ այդ աստիճանին բարձրանալը ձեռնադրությունից ձեռնադրություն հաջորդաբար անցնում է նաեւ ազգային պարտավորությունների կատարման բազմաստիճան ընթացքը, որով եկեղեցական գործունեությանը զուգահեռ ձեռք է բերում նաեւ ազգային տարբեր հարցերը տնօրինելու փորձառություն եւ պատասխանատվություն։

Իր քահանայական ձեռնադրության այժմ լրացող կեսդարյա ճանապարհը ազգային եկեղեցական նման փորձառությամբ է անցել եւ անցնում ազգիս Վեհափառ Հայրապետ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Այսօր եւս անհամեմատ մեծ է Սուրբ Էջմիածնի եւ նրա Գահակալի դերը մեր պետականության տարուբերվող նավը հնարավոր քիչ կորուստներով խաղաղության նավահանգիստ հասցնելու գործում։

Ի խորոց սրտի մաղթենք, որ Հայոց Հայրապետի քահանայական ձեռնադրության սկսվող վեցերորդ տասնամյակը եւ հաջորդող երկայն տարիները ծառայեն այս նպատակին եւ Հայոց աշխարհի վերաշինությանը։

ՆԱՐԵԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի ատենապետ
ՀՀ վաստակավոր ճարտարապետ, պրոֆեսոր
ՀՀ պետական մրցանակի կրկնակի դափնեկիր
Ֆրանսիայի «Արժանիքի համար» Ազգային շքանշանի ասպետ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վեհափառ Հայրապետի հետ իմ շփումներն սկիզբ են առել 1990-ականների առաջին կեսերից, երբ նա դեռեւս Արարատյան թեմի առաջնորդն էր։ Այդ տարիներին ես Երեւանի ճարտարապետաշինարարական ինստիտուտի ճարտարապետության բաժնի դեկանն էի։ Մեր ուսումնական հաստատության բաժինները բարերար Լուիզ Սիմոն Մանուկյանի կողմից Արարատյան թեմի միջոցով որպես աջակցություն ստացել էին համակարգիչներ, ինչն այդ ժամանակների համար աներեւակայելի մի ճոխություն էր։ Այդ առիթով էլ հենց ծանոթություն եմ հաստատել Վեհափառ Հայրապետի հետ։ Այնուհետեւ, սկսած 1999 թվականի վերջերից, երբ Գարեգին Բ.-ն արդեն Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր, իսկ ես՝ Երեւան քաղաքի գլխավոր ճարտարապետը, սկիզբ դրվեց Մայր Աթոռի հետ իմ՝ տասնամյակների հասնող աշխատանքային համագործակցությանը։

Վեհափառ Հայրապետի կողմից հրավեր ստացա անդամակցելու Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդին։ Խորհրդի կազմում ընդգրկված էին ժամանակի անվանի ճարտարապետներ եւ արվեստագետներից շատերը՝ Վարազդատ Հարությունյանը, Ջիմ Թորոսյանը, Գրիգոր Խանջյանը, Ռոմեո Ջուլհակյանը, Հրաչ Պողոսյանը եւ այլք։

2013 թ. վերջերին Վեհափառ Հայրապետի ձեռամբ ստանձնեցի նույն խորհրդի ատենապետի պարտականությունները (ակադեմիկոս Ջիմ Թորոսյանի վախճանից հետո) եւ շարունակում եմ կատարել ծառայություններս առ այսօր։

Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ ավելի քան երկու տասնամյակ է, ինչ մասնակցում եմ Մայր Աթոռի շինարարական տարբեր ծրագրերի իրականացմանը։

Կարող եմ վստահաբար պնդել, որ Վեհափառի շինարարական գործունեության ծավալները եւ աշխարհագրական ընդգրկումը աննախադեպ են. Մայր Տաճարի տարածքի բարեկարգում, մատենադարանի եւ նոր եկեղեցիների շինություն, Հայաստանի բազմաթիվ վանքերի եւ եկեղեցիների վերականգնում եւ հարակից տարածքների բարեկարգում, կաթողիկոսի նոր հոյակերտ նստավայրի եւ այլ վարչական շենքերի կառուցում, բազմաթիվ այլ շինարարական նախագծերի իրականացում։ Սակայն, կանգնած լինելով խնդրի ակունքներում, ականատես եմ, ըստ իս, վեհափառի ամենամեծ, ես կասեի, պատմական եւ խիզախ մի որոշման ծրագրի իրագործմանը՝ Մայր Տաճարի ամբողջական վերակառուցմանը։ Հիրավի, պետք է մեծ ուժ, հավատ եւ սեր ունենալ հանդեպ մեր հավատքի կենտրոնը՝ ձեռնարկելու համար նման խոշոր, բոլոր առումներով բարդ, նյութական հսկայական միջոցներ պահանջող գործը։ Նրա համար այս ծրագրի իրացման ճանապարհին չեն եղել ու չկան մեծ եւ փոքր հարցեր։ Մեծագույն բծախնդրությամբ Գարեգին Բ. կաթողիկոսը խորամուխ է լինում Մայր Տաճարի վերակառուցմանն առնչվող ամենագանագան մանրամասների մեջ՝ կարեւորություն տալով հարդարման նյութերի ճիշտ ընտրությանը, չանտեսելով ճարտարագիտական եւ տեխնիկական լուծումները եւ աչքաթող չանելով Տաճարի ջրամեկուսացման, օդափոխության, սառեցման եւ հովացման արդյունավետ համակարգերի ներդրման, արտաքին եւ ներքին լուսավորության անցկացման հետ կապված աշխատանքները։ Նշված եւ նմանօրինակ բազմաթիվ այլ հարցերի եւ խնդիրների շուրջ ծավալվող քննարկումներին եւ դրանց արդյունքում որոշումների կայացման գործին վեհափառն իր անմիջական մասնակցությունն ու նպաստն է բերում։

Իր անհանգիստ եւ խիստ պատասխանատու բնավորությունը պատճառ է դառնում, որ հաճախ շինարարները հընթացս նեղսրտեն եւ որոշ տարակարծություններ ունենան, սակայն աշխատանքների ավարտից հետո միայն իրենց խորը հիացմունքն են արտահայտում ստացված արդյունքի վերաբերյալ՝ ուրախանալով եւ հպարտանալով իրենց կառուցումով եւ անպայման խոստովանում են, որ, եթե չլիներ Վեհափառ Հայրապետի խստապահանջությունը, հազիվ թե այսպիսին լիներ վերջնարդյունքը։ Այս տարիներին ես ինքս բազմաթիվ նման իրավիճակների ականատեսը եւ մասնակիցն եմ եղել։

Ամփոփում եմ խոսքս այն խորին համոզումով, որ Հայոց 132-րդ կաթողիկոսը՝ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը թեկուզ միայն իր շինարարական գործունեությամբ արդեն իսկ ամրագրել է իր տեղը հայ եկեղեցաշինության պատմության մեջ՝ որպես ջահակիր առաջնորդ ճանապարհ ցույց տալով հաջորդ սերունդներին։

Ինձ համար մեծ պատիվ է քայլել նրա հետ կառուցապատման իր ազգանվեր ծրագրերը իրականություն դարձնելու ճանապարհով։

Տ. ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ՄԻ ԴՐՎԱԳ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ 50-ԱՄՅԱ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՑ

1971 թ. Կտրիճ սարկավագ Ներսիսյանը, ապագա 132-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, գերազանց առաջադիմությամբ ավարտում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը։

Հունիսի 11-ին, բարձր նախագահությամբ երանաշնորհ Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի, Հոգեւոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում 1970—1971 ուսումնական տարվա փակման արարողությունը։ Ճեմարանում նվիրական դարձած ավանդույթի համաձայն, ավարտական լսարանի սաներից մեկը, հանուն Հոգեւոր Ճեմարանի ողջ ուսանողության եւ ի մասնավորի շրջանավարտ սաների, հանդես է գալիս երախտագիտության եւ շնորհակալության ուղերձով. նշյալ ամավերջի հանդեսին՝ Վեհափառ Հայրապետին եւ դասախոսական կազմին ուղղված խոսքով հանդես է գալիս Կտրիճ սարկավագը.

«Վեհափա՛ռ Տեր,

Հոգեւոր Ճեմարանում ամավերջի հանդիսության այս սովորությունը տոնական բնույթ է ստացել, որը մեզ համար թանկ է եւ պարտավորեցնող։

Դարեր շարունակ Ս. Էջմիածինը եղել է ոչ միայն հայրապետական աթոռանիստ ու համազգային ուխտավայր եւ աղոթատուն, այլ նաեւ լույսի ու գիտության խորան։

Փոթորկահույզ դարերի ընթացքում անգամ այստեղ՝ Ս. Էջմիածնի կամարների տակ, հայոց մտքի եւ հոգու մշակները լույս եւ գիտություն են սերմանել։

Ու ծաղկել է հայ մշակույթը եւ միշտ առկայծել Ս. Լուսավորչի կանթեղը։ Այս սուրբ կամարների տակ սնվել ու հասակ են առել մեր եկեղեցու ու մշակույթի մեծ երախտավորները։ Լույսի այս հոսքը դարերի ընթացքում երբեմն նվազել է եւ երբեմն էլ հորդացել, բայց երբեք չի ընդհատվել։

Հոգեւոր Ճեմարանը այսօր եւս իրականացնում է իր սուրբ առաքելությունը, եւ այս առաքելությունը հավերժական է այնքան, որքան մեր ժողովուրդը։

Վեհափա՛ռ Տեր, սովորելով Հոգեւոր ճեմարանում, մենք գիտակցեցինք, որ այն լոկ հոգեւոր-կրթական հաստատություն չէ, այլ նաեւ Հայ Եկեղեցու գոյատեւման կենսատու զարկերակներից մեկը, որի արյան մատակարարումը եւ աշխատանքի կանոնավորումը ղեկավարում է Ձերդ Վեհափառությունը:

Գիտակցումը Հոգեւոր Ճեմարանի պատմական առաքելության եւ երախտագիտությունը Ձեր հայրական խորը սիրո նկատմամբ մեզ՝ ճեմարանականներիս ավելի եւս պարտավորեցնում է լինել հաստատակամ, նվիրյալ սպասարկուները Հայ Եկեղեցու եւ Ս. Էջմիածնի:

Վեհափա՛ռ Տեր, մենք ուզում ենք շնորհակալություն հայտնել Ձեզ ոչ թե բառերով, այլ մեր կյանքով եւ գործով, ու ապացուցել, որ շնորհակալությունը լոկ բառ չէ, այլ կենդանի գործ ու ապրում:

Շնորհակալության խոսք ունեմ նաեւ՝ ուղղված Հոգեւոր Ճեմարանի տեսչությանը՝ հանձինս Տ. Հովհաննես քհն. Մարուքյանի եւ մեր վերակացուների, որոնք ուսումնական տարվա ամբողջ ընթացքում եղան մեզ հետ, կիսեցին ե՛ւ մեր հաջողություններն ու ուրախությունները, ե՛ւ մեր դժվարությունները:

Մեր հոգիներում խաղցր երախտագիտական խոսք ունենք եւ ձեզ, սիրելի դասախոսներ: Դուք մեզ համար եղել եք թե՛ ծնողներ, թե՛ եղբայրներ, թե՛ մտերիմ բարեկամներ եւ թե՛ խորհրդատուներ: Դուք բաց արեցիք մեր առջեւ դարերի խորհրդավոր վարագույրը: Դուք կրթեցիք ու դաստիարակեցիք մեզ մեր նախնիների հավատով ու ոգով եւ հայության շնչով: Սնեցիք ու զինեցիք մեզ հին եւ նոր ժամանակների գիտության զենքերով: Ինչպես վարպետ քանդակագործը չհղկված քարին ձեւ եւ գեղեցկություն է տալիս, նույնպես եւ դուք կերտեցիք ու գեղեցկացրիք մեր հոգիները եւ նկարագիրը:

Այս բոլոր բարիքների համար մենք միակամ ու միաբերան ասում ենք՝ «Շնորհակալություն»:

Ահա այս զգացումներով, Վեհափառ Տեր, թույլ տվեք համբուրելու, հանուն Հոգեւոր Ճեմարանի Ձեր զավակների, Ձեր Սուրբ Աջը եւ հայցելու Ձեր օրհնությունը՝ զորացնելու համար մեր հավատքը դեպի մեր Եկեղեցու, ժողովրդի եւ հայրենիքի լուսավոր եւ խոստումնալից ապագան»[1]:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ՝ այլեւս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերը համալրած Կտրիճ սարկավագը ծառայության է կոչվում Հոգեւոր Ճեմարանի հարկից ներս՝ դաստիարակի պատասխանատու պաշտոնով: Վեհափառ Հայ-

[1] *«Էջմիածին», 1971, հունիս-հուլիս, էջ 29:*

բապետի օրհնությամբ, Ճեմարանի տեսչական կազմում իր վարչական պարտականությունների կատարմանը զուգընթաց, նա ծավալում է նաեւ մանկավարժական-դասախոսական գործունեություն՝ Ճեմարանի Բ. դասարանում դասավանդելով «Նոր Կտակարանի պատմություն» առարկան[2]։

Սեպտեմբերի 27-ին, Հոգեւոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի բարձր նախագահությամբ եւ ներկայությամբ Ճեմարանի ողջ դասախոսական կազմի, ուսանողության, Մայր Աթոռ միաբանության, պաշտոնեության եւ հյուրերի (ի թիվս որոնց ուխտավորաբար Սուրբ Էջմիածնում գտնվող Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի եւ պրոֆ. Հ. Ճ. Սիրունու), տեղի է ունենում 1970—1971 ուսումնական տարվա շրջանավարտ սարկավագների ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը եւ վկայականների հանձնումը. Կտրիճ սարկավագ Ներսիսյանի ներկայացրած «Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի կյանքը եւ գործունեությունը» *խորագրով ավարտաճառը գնահատվում է «գերազանց»։ Հետաքրքրական է, որ այդ հատկանշական եւ երջանիկ առիթով Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետը շրջանավարտ սարկավագներից յուրաքանչյուրին «նվիրում է մեկական ժամացույց, որպեսզի նրանք գիտենան հարգել ժամանակը»[3]։*

1972 թ. հունվարի 17-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Կտրիճ սարկավագը, ընկերակցությամբ Ժիրայր սարկավագ Սիմոնյանի, մեկնում է Վիրահայոց թեմ՝ Թբիլիսի՝ «հին տոմարով Ս. Ծննդյան տոնի առիթով եկեղեցական տոնակատարություններին մասնակցելու համար»[4]։ Իսկ ապրիլին, Ավագ շաբաթվա արարողություններին եւ Սբ Հարության տոնախմբությանը մասնակցություն բերելու նպատակով, ճանապարհվում է Ադրբեջանի հայոց թեմ՝ Բաքու[5]։ Կտրիճ սարկավագը եւս մեկ անգամ Բաքու է մեկնում սեպտեմբեր ամսին՝ մասնակցելու Խաչվերացի տոնի ծիսակատարություններին[6]։

Ինչպես ամեն միաբան, Կտրիճ սարկավագը եւս կանգնում է հույժ պատասխանատու եւ անձնական կյանքում շրջադարձային որոշում կա-

---

[2] *Տե՛ս «Էջմիածին», 1971, սեպտեմբեր, էջ 10։*
[3] *«Էջմիածին», 1971, հոկտեմբեր, էջ 44։*
[4] *«Էջմիածին», 1972, հունվար, էջ 28։*
[5] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[6] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

յացնելու իրողության առջեւ։ Եւ նա, «Սուրբ Էջմիածնի տեսիլքը սրտում, Աստուծո շունչը հոգում եւ ժողովրդի հոգեւոր պայծառության վերելքը մտքում», *հաստատ համոզմամբ վճռում ու հանձն է առնում ընդունել կուսակրոն քահանայության կարգը եւ 1972 թ. մայիսի 19-ին իր դիմումնագիրն է ներկայացնում Ամենայն Հայոց Հայրապետին.*

«Վեհափառ Տեր,

Ուսումնառության տարիները եւ միաբանական կյանքը Մայր Աթոռի հովանու տակ խորացրին իմ մեջ այն համոզումը, որ մեր եկեղեցին լույսի խորան եւ հավերժության խորհրդանիշ է եղել ոչ միայն մեր ժողովրդի դարավոր պատմության ոլորաններում, այլեւ այդպիսին է ներկայիս հայ կյանքի նոր պայմաններում։

Այս սրբազան մթնոլորտում մեր հայրապետների եւ եռամեծ վարդապետների խնկաբույր աղոթքները փարոս են եղել ինձ համար յոթ տարի շարունակ՝ թրծելով իմ հոգին Ս. Էջմիածնի կրոնաբույր օջախում։

Եւ ես հավատավոր գիտակցությամբ, ներքին համոզումով ու պահանջով որոշեցի հետեւել Քրիստոսի կոչին՝ «Եկ զկնի Իմ», որովհետեւ մեր եկեղեցու դարավոր կաղնին շարունակաբար ծլարձակել եւ իր գարունն է ապրել շնորհիվ այն երիտասարդ հոգեւորականների, որոնք անմնացորդ նվիրումով ծառայել են Հայ Եկեղեցուն։

Վեհափառ Տեր, գիտակցելով այս ամենը՝ ես ժամանակին պատրաստակամությամբ ընդունեցի սարկավագի ուրարը։ Այժմ արդեն գտնում եմ, որ հասել է պահը վերջնական եւ աննահանջ նվիրումի։ Ուստի եւ խնդրում եմ Ձեր հայրական բարեհաճ կարգադրությունը շնորհելու ինձ վեղար եւ ընդունելու ինձ Մայր Աթոռի երիտասարդ վարդապետների շարքը։

Խոստանում եմ ծառայել Հայ Եկեղեցուն, ազգին եւ Ս. Էջմիածնին այնպես, որ երբ տարիների հեռվից ետ նայեմ իմ անցած ճանապարհին, ինձ հետ ունենամ Ամենայն Հայոց Հայրապետի հայրական օրհնությունը եւ մեր եկեղեցու ու ազգի բարերար հոգատարությունը։

Մատչիմ ի համբոյր Ձեր Սուրբ Աջոյն

Մնամ ամենախոնարհ որդի՝

Կտրիճ սարկավագ Ներսիսյան»[7]։

Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետն իր կանխատես ու պայծառատես մտքով արդեն իսկ նկատել էր իր ձեռնասունների մեջ Կտրիճ սար-

[7] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

կավագ Ներսիսյանին եւ հայրական հոգածությամբ այլեւս ծրագրել նրա ապագան։

Հունիսի 21-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հատուկ գրություն է հղում Վիեննայի հայոց հոգեւոր հովիվ Տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյանին. «Այսու Մեր գրով ուրախ ենք Ձեզ յայտնելու Մեր ցանկությունը՝ Մայր Աթոռիս միաբաններից Կտրիճ սարկաւագ Ներսէսեանին ուղարկելու Ձեզ մօտ Վիեննա, ուսանելու համար աստուածաբանական կրթական մի բարձր հաստատութեան մէջ, միաժամանակ Կիրակի եւ տօն օրերին սպասաւորելով ձեր եկեղեցուն իբրեւ սարկաւագ։

Կտրիճ սարկաւագ Ներսէսեանը շրջանաւարտ է մեր Հոգեւոր Ճեմարանից 1971 թ., 21 տարեկան է, քաղաքացիութեամբ՝ սովետական։

Նա հաւատաւոր, ուշիմ եւ ուսումնատենչ երիտասարդ է՝ բարոյական լուրջ նկարագրով ու կարգապահ։ Գերմաներէն լեզուին բաւարար չափով ծանօթ չլինելով, կարծում ենք թէ մի տարի նախ պէտք է նախապատրաստուի այնտեղ տիրապետելու համար լեզուին, որից յետոյ 1973–74 ուսումնական տարուանից սկսեալ կարող կը լինի հետեւել ուսման կանոնաւոր կերպով։

Արդ, առաջադրում ենք որ անհրաժեշտը կարգաւորէք որպէսզի Կտրիճ սարկաւագը, առաջիկայ Հոկտեմբերից սկսեալ ընդունուի մի կրթական հաստատութեան մէջ, որպէսզի նախապատրաստուի գերմաներէն լեզուն իւրացնելու համար։

Վստահ ենք, թէ այս առթիւ բարի կը լինի ձեզ օգտակար լինել Նորին Գերազանցութիւն Կարդինալ Franz König, Իր բարձր հեղինակութեամբ, որի համար Մենք շնորհակալ կլինենք։

Հաճեցէ՛ք փոխանցել Նորին Գերազանցութեան Մեր եղբայրական սիրոյ հաւաստիքը։

Նաեւ Ձեզ, սիրելի՛ Հայր Սուրբ, յղում ենք Մեր բարի մաղթանքները եւ օրհնութիւնը»[8]։

Ահա եւ Հայրապետական կարգադրությունն ի կատար ածելով՝ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանն իր 11 սեպտեմբեր թվակիր նամակով Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետին հայտնում է, որ «գրաւոր եւ անձամբ դիմեցի Նորին Վսեմութիւն Կարդինալ Դր. Ֆրանց Կէօնիգի՝ որպէսզի ինք կարգադրէ Ներսէսեան Սարկաւագի բնակութեան հարցը։ Նա պատրաստակամութիւն յայտնեց անմիջապէս անհրաժեշտը տնօրինելու՝ որպէսզի Սարկաւագը

[8] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

բնակի Վիեննայի Կաթողիկէ Դպրեվանուց մէջ եւ միաժամանակ գերմաներէն լեզու եւ աստուածաբանութիւն սովորի։ Եւ արդարեւ կարճ ժամանակ ետք Արքեպիսկոպոսարանէն ինձ տեղեկացուցին թէ Կտրիճ Սարկաւագի խնդիրը դրականօրէն կարգադրուած է։ Բայց որովհետեւ Դպրեվանքի Տեսուչը արձակուրդի մեկնած էր, թելադրուեցաւ որ սպասեմ գրաւոր պատասխանի մը։ Անցեալ շաբաթ երբ տակաւին Պէյրութ կը գտնուէի, նամակ մը ստացայ Վիեննայի Կաթողիկէ Դպրեվանուց Տեսուչ Դր. Եօզէֆ Տօթէն՝ որ պաշտօնապէս կը հաստատէր Ներսէսեան Սարկաւագի ընդունուիլը»[9]։

Բարեշնորհ Կտրիճ սարկավագի ճամփորդության հետ կապված հարկավոր ձեւակերպումները կատարվում են հաջողությամբ, սակայն զինվորական ծառայության նրա ենթակա լինելն արտերկիր մեկնելուն արգելք է հանդիսանում. խնդրի միակ լուծումը քահանայական ձեռնադրությունն էր. «...Հակառակ Մեր նախատեսութեան,– գրում է Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետը Հայր Մեսրոպին եւ Վիեննայի հայոց եկեղեցական վարչությանը,– վերջին պահուն հարկ եղաւ Կտրիճ սարկաւագին ձեռնադրել կուսակրօն քահանայ, որպէսզի կարողանայ արտօնութիւն ստա-

[9] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

նալ արտասահման մեկնելու, ազատուելով զինուորական ծառայութեան պարտականութենէն»[10]։

Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ 1972 թ. հոկտեմբերի 15-ին, Սբ Էջմիածնի Մայր Տաճարում, հընթացս Սբ Պատարագի, ձեռամբ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի, 21-ամյա Կտրիճ սարկավագ Ներսիսյանը ձեռնադրվում եւ օծվում է կուսակրոն քահանա՝ անվանակոչվելով Տ. Գարեգին աբեղա. անուն, որը Հայոց Եկեղեցու համար նվիրական էր դարձել հանձինս Վարդանանց նահատակներից «յառաջադէմն» Գարեգին Սրվանձտյան նախարարի, ազգագրագետ ու բանահավաք Տ. Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանի եւ Սբ Էջմիածնի միաբան, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի։

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի է ունենում վեղարի տվչություն. Տ. Գարեգին աբեղան, իր օծակից հոգեւոր եղբայրների հետ, ձեռնադրող Տ. Տիրան արքեպիսկոպոսից ստանում է կուսակրոն քահանայության խորհրդանիշը՝ գմբեթանման վեղարը. «Աստուած զգեցուցանէ բեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ եւ ճշմարտութեամբ. ամէն»[11]։

Ձեռնադրությունից օրեր անց Մայր Աթոռում ստացվում է պետական պատկան կառույցների կողմից տրված մեկնման արտոնությունը, որով Հոգեշնորհ Տ. Գարեգին աբեղա Ներսիսյանի Վիեննա ուղեւորվելն անհետաձգելի է դառնում։ Ուստի եւ 40-օրյա խոկման, ծոմապահության եւ հոգեւոր պատրաստության շրջանի մեջ ամփոփված նորաօծ Հայր Գարեգինը, Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ, մինչ մեկնե-

[10] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[11] *«Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կ. Պոլիս, 1807, էջ 277։*

լը՝ հոկտեմբերի 22-ին, Վաղարշապատ քաղաքի Սբ Շողակաթ եկեղեցում, իր անդրանիկ Սբ Պատարագն է մատուցում եւ «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի» բնաբանով քահանայական իր առաջին քարոզն է խոսում[12]*։*

Եւ զորացյալ Տիրոջով ու քաջալերված Հայրապետական օրհնությամբ, իր կյանքում առաջին անգամը լինելով, ապագա Հայոց Հայրապետը հեռանում է Մայր Հայրենիքից եւ Սուրբ Էջմիածնից՝ ճանապարհ ընկնելով դեպ Մոսկվա, որտեղից էլ՝ Ավստրիո մայրաքաղաք։

«Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱԲԵՂԱՅ ՆԵՐՍԷՍԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ԿԱՐԳԱՊԱՀ ՄԻԱԲԱՆՆԵՐԷՆ ՄԻՆ Է, ՕԺՏՈՒԱԾ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, ՈՐՈՎ ՎՍՏԱՀ ԵՆՔ, ԹԷ ՔԱՆԻ ՄԸ ՏԱՐԻ ԻՐ ՈՒՍՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԼՈՎ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԷՋ, ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՕՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ»

(Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետ Ամենայն Հայոց)

Հոկտեմբերի 27-ին Հայր Գարեգինը հասնում է Վիեննա։ Այստեղ նրան ուշադրությամբ ու հոգատարությամբ են շրջապատում Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, Վիեննահայոց համայնքի եկեղեցական վարչությունը եւ հավատավոր հայորդիք։ Տ. Գարեգին աբեղայի նկատմամբ իր համակրալից ու սիրալիր վերաբերմունքն է դրսեւորում նաեւ Ավստրիայի արքեպիսկոպոս Կարդինալ Ֆրանց Քյոնիգը։

Այստեղ պատշաճ է վկայակոչել Նորին Սրբություն ազգիս Վեհափառ Հայրապետի ջերմագին զգացումներով ու երախտագիտությամբ համակված խոսքերը. «Այս պահին հիշողությունների ջերմ ալիքով Մեր հոգում վերարթնանում են գեղեցիկ հուշեր եւ վաղուց ծանոթ անմոռաց դեմքեր։ Շուրջ երեսնամյա ժամանակահատվածից հետո այսօր վերադառնալով այստեղ իբրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ առաջին սպասավորը Հայ Առաքելական Եկեղեցու, մեկ անգամ եւս անդրադառնում ենք եւ սիրով հավաստում, որ Մեր անձի վրա անջնջելի կնիք են թողել մշակութասեր Վիեննան ու նրա համալսարանը։

Մենք այստեղ ուսանելու հնարավորությունն ունեցանք Վիեննայի Գերաշնորհ Կարդինալ Ֆրանց Քյոնիգի հրավերով եւ ազնիվ հովանավորությամբ, ինչպես նաեւ վիեննահայոց հոգեւոր հովիվ Տ. Մեսրոպ ծ. վարդապետ Գրի-

[12] *Տե՛ս «Էջմիածին», 1972, հոկտեմբեր, էջ 48։*

գոյանի կանչով եւ երջանկահիշատակ Հայոց Հայրապետ Վազգեն Առաջինի օրհնությամբ։ Այսօր աղոթքով ենք հիշում հոգելույս Հայոց Հայրապետին, ով մեր ժողովրդից մեծարված է «Շինարար» կոչումով։ Աղոթք ենք բարձրացնում արդար հոգիների համար այն պրոֆեսորների, ովքեր առաջնորդել են Մեզ իմացության ճանապարհներով, նաեւ “Pro Oriente”-ի երջանկահիշատակ անդամների հոգիների համար։

Եղբայրական Մեր սերն ու երախտագիտությունն ենք բերում բոլորիդ, մասնավորաբար՝ սիրելի Կարդինալ Քյոնիգին՝ Հայ Եկեղեցու զավակիս նկատմամբ ցուցաբերած հայրական հոգածության համար»[13]։

Նոյեմբերի 12-ին՝ Վիեննայի հայոց Սբ Հռիփսիմե եկեղեցում, Տ. Գարեգին աբեղան սփյուռքահայ իրականության մեջ մատուցում է իր անդրանիկ Սբ Պատարագը։ Այդ իրադարձությունը եւս տեղ է գտնում Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետին ուղղված նրա առաջին՝ նոյեմբեր 15 թվակիր նամակի մեջ։ Անդրադառնալով իր կենցաղավարության նոր պայմաններին՝ Հայր Գարեգինն ի մասնավորի գրում է.

«Վեհափա՛ռ Տեր,

Հոկտեմբերի 27-ին հանգիստ եւ առողջ հասա Վիեննա։ Հայր Մեսրոպի հետ նույն օրը գնացի Կաթոլիկ այն հաստատությունը, որտեղ այժմ ես մնում եմ։ Ինձ համար այստեղ հատկացված է մի առանձին սենյակ։ Օրը երեք անգամ ճաշում եմ ընդհանուր ճաշասրահում, պետք է ասեմ, որ ճաշերը շատ համեղ են։ Երբեմն-երբեմն գնում եմ իրենց արարողություններին մասնակցելու։ Շաբաթական երեք օր, օրը երեք ժամ, գնում եմ գերմաներեն լեզվի դասընթացների։ Կիրակի օրերը կանոնավոր կերպով հաճախում եմ եկեղեցի։ Այս կիրակի Հայր Մեսրոպի կարգադրությամբ մատուցեցի իմ առաջին Պատարագը։ Այդ առթիվ հոգեշնորհ Հայր Սուրբը պատրաստել էր հատուկ հրավերագրեր, որոնցից մեկ հատ այս նամակով ուզում եմ ուղարկել Ձեզ։ Այդ օրը իմ ամենագեղեցիկ եւ երջանիկ օրերից մեկն էր։ Պատարագին խոսեցի Ս. Էջմիածնի եւ Մայր Հայրենիքի վերաբերյալ ջատագովական բնույթի քարոզ։ Պատարագից հետո ընդհանուր սրահում ներկա գտնվողներին բաժանեցի մեկական խաչիկ եւ պատկերներ։ Այս ամբողջն ընթացավ ջերմ ոգեւորության մթնոլորտում։ Ընդհանրապես Կիրակի օրերը որեւէ մեկ հայ ինձ եւ Հայր Սուրբին հրավիրում է ճաշի։ Ամսական ինձ գրպանի ծախս տրվում է հազար (1000) շիլինգ, որը լիովի բավականացնում է ինձ։ Պետք է ասել, որ վիեննա-

[13] *«Էջմիածին», 2001, հոկտեմբեր—նոյեմբեր, էջ 30։*

կան կյանքիս այսպիսի գեղեցիկ դասավորությունը, շնորհիվ Հայր Մսերոպի ցուցաբերած հոգատար եւ սիրալիր վերաբերմունքի է: Այս զգացումներով ես իմ շնորհակալության խոսքը ասացի ընդհանուր սրահի մեջ, ուղղված Հայր Սուրբին եւ ողջ հայ համայնքին:

...Իմ հոգեկան վիճակը արտահայտելու համար ուզում եմ գրել շարականագրի հետեւյալ խոսքերը՝ «Խորհուրդ մեծ, որ յայսմ աւուր յայտնեցաւ»։

Ես իմ կյանքի 21 տարիները ապրել եմ Մայր Հայրենիքում, ավելի ճիշտ նրա սրտում՝ Ս. Էջմիածնում: Սակայն նրանց մասին ես ունեի գիտակցական ոչ լրիվ պատկերացում, բայց այստեղ, երբ տարածություն եւ ժամանակ գոյացավ մեր երկուսի միջեւ, ես զգացի, եւ ինձ համար բացահայտվեցին նրանց մեծախորհուրդ եւ վսեմ գաղափարները: Հայրենի տունը, նվիրագործված հողն ու սրբությունը դա մարդուս ամենամեծ եւ երջանկաբեր գանձն են: Ամեն օր ես տարվում եմ Էջմիածնի իմ կյանքի քաղցր հուշերով, եւ դա իմ օրվա բոլորից գեղեցիկ պահն է: Ահա կարոտի այս զգացումն է, որը, միաժամանակ, թե՛ ճնշում է եւ թե՛ ուրախացնում է իմ հոգին:

Վեհափա՛ռ Տեր, այս իմ առաջին նամակս է, որ գրում եմ Ձերդ Վեհափառությանը, հավանաբար պատշաճության որոշ սխալներ թույլ տված լինեմ, որի համար եւ խնդրում եմ Ձեր ներողամտությունը:

Սիրո եւ կարոտագին ողջույններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ միաբանությանը:

Հայցելով Ձեր օրհնությունը, խոնարհաբար համբուրում եմ Ձեր Սուրբ Աջը, Ձեր որդի՝

Գարեգին աբեղա Ներսիսյան»[14]:

Այս առաջին նամակի առաքումից ընդամենը հինգ օր անց՝ նոյեմբերի 20-ին, Հայր Գարեգինը գրեթե նույն բովանդակությամբ իր երկրորդ գրությունն է շարադրում։ Ինչո՞ւ։ Ինքնաբերական այս հարցադրման պատասխանն գտնում ենք նամակի հենց առաջին տողերում՝ «անփորձությանս հետեւանքով,– *գրում է Հայր Գարեգինը Վեհափառ Հայրապետին,*– կարող է պատահել օրեր առաջ ուղարկած նամակս Հայաստան չհասնի, որովհետեւ ծրարի ծանրության համար չեմ վճարել եւ չեմ ապահովագրել: Քանի որ այդ նամակի ճակատագիրը այսպես անորոշ է, ուստի հարմար նկատեցի, որ այս երկրորդ նամակը գրեմ Ձերդ Սրբությանը»[15]։

---

[14] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

[15] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։ Նշենք, որ ինչպես երկրորդ, այնպես էլ առաջին նամակներն իրենց ժամանակին ստացվել են Մայր Աթոռում եւ ընթերցվել երանա-*

Նորին Սրբություն ազգիս Վեհափառ Հայրապետի նշյալ գրությունը մասնահատուկ կերպով հիշատակում ենք՝ այդ նամակի մեջ չափազանց ուշագրավ մի շեշտադրում, արտահայտություն մատնանշելու համար։ Անդրադառնալով Աստվածաբանական համալսարանում ուսանելու խնդրին՝ Հայր Գարեգինը գրում է, որ «համալսարան[ում] ուսանելու երկու հնարավորություն կամ կերպ գոյություն ունի, առաջինը՝ ազատ ունկնդիր կամ հյուր ուսանող եւ երկրորդ՝ պաշտոնական ուսանող»։ *Այնուհետեւ մեկնաբանելով ուսանողական կարգավիճակները՝ նշում է, որ պաշտոնական ուսանող* «լինելու համար որոշ դժվարություններ կան. նախ պետք է մեր Ճեմարանի ավարտականը արժեքավորվի որպես պաշտոնական կրթական հաստատության փաստաթուղթ եւ որոշ առարկաներից քննություն հանձնվի։ Ընդ որում նաեւ պարտադիր է եբրայերեն, հունարեն եւ լատիներեն լեզուների իմացությունը։ ...Պաշտոնական ուսանողությունը ունի այն առավելությունը, որ ուսանողական տարիները չեն կորչի եւ ես հնարավորություն կունենամ դոկտորային աստիճան պաշտպանելու»։

Հուսկ ուրեմն, խնդրի համակողմանիորեն ներկայացումից հետո, Տ. Գարեգին աբեղան դիմում է Ամենայն Հայոց Հայրապետին՝ գրելով. «Վեհափա՛ռ Տեր, ուման կերպի ընտրությունը Ձերդ Սրբությանն է»։ *Ահա այն մեծ կարեւորություն ունեցող խոսքը, որը հարազատորեն եւ ամբողջական կերպով բնութագրում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիտասարդ միաբան Հայր Գարեգինին. հեզության, խոնարհության եւ հնազանդության կենսական մի դաս է վերոհիշյալ արտահայտությունը, որը Նորին Սրբություն ազգիս Վեհափառ Հայրապետը, Տեր Հիսուս Քրիստոսի հետեւողությամբ, տալիս է յուրաքանչյուր երիտասարդ հոգեւորականի։*

*1973 թ. մարտ ամսից, գերմաներեն լեզվի դասընթացներին զուգահեռ, Տ. Գարեգին աբեղա Ներսիսյանն արձանագրվում է նաեւ Վիեննայի համալսարանի (*UNIVERSITÄT WIEN*) աստվածաբանության կրթաճյուղում։ Այդ առիթով՝ 13 մարտի թվակիր իր նամակում, Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառին ի մասնավորի գրում է.* «...Երկրորդ օրն է, որ գնում եմ դասերի. ընդհանուր բովանդակությունը դասախոսությունների հասկանում եմ, միայն մի փոքր դժվարություն ունեմ աստվածաբանական տերմինների հետ, որոնք մեկ ամսից կարծում եմ ամբողջությամբ կհաղթահարեմ»[16]։

շնորհ Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի կողմից, այնուհետեւ համապատասխան մակագրությամբ այդ գրություններն արխիվացվել են։

[16] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

Ուսումնական տարին Հայր Գարեգինն ավարտում է բարձր առաջադիմությամբ եւ իր ամառային արձակուրդն անցկացնում է Վիեննայում։ Այնինչ Ամենայն Հայոց Հայրապետին ուղղված 27 մայիսի թվակիր նրա գրությունից տեղեկանում ենք, որ մեծապես ցանկացել է իր արձակուրդի շրջանն անցկացնել Սուրբ Էջմիածնում՝ «իմ միաբան եղբայրների հետ»[17]։ *Սակայն Հայոց Հայրապետն այլ կարգադրություն է կատարել.* «Վեհափառ Հայրապետը,— *իր 7 հունիսի թվակիր գրությամբ հայտնում է Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը,*— անշուշտ խորապես գնահատում է fo ազնիվ զգացումները դեպի Ս. Էջմիածինը եւ fo կարոտը դեպի fեզ համար հարազատ շրջապատը, որի մասին արտահայտվում ես նամակում, բայց նկատի ունենալով Վիեննա գտնվելուդ բուն նպատակը, ուր դու պետք է գերմաներեն լեզվի մեջ խորանաս որքան հնարավոր է շուտ, որ կարողանաս ազատորեն արտահայտվել այդ լեզվով։ Նորին Սրբությունը հարմար չի նկատում, որ դու կտրվես այդ շրջապատից նույնիսկ fo արձակուրդի շրջանի համար»[18]։

Որդիական խոնարհությամբ եւ սիրով ի կատար ածելով Հայրապետական ցանկությունը՝ արձակուրդի ընթացքում Հայր Գարեգինը շարունակում է հետեւել գերմաներեն լեզվի դասընթացներին, միաժամանակ հաճախում է նաեւ «ամենօրյա բանախոսությունների՝ երեքժամյա տեւողությամբ։ Բանախոսությունների նյութն է Ավստրիայի պատմությունը եւ մշակույթը իր բոլոր բնագավառներում»[19]։ *Իսկ կիրակի օրերին այցելում է եկեղեցի՝* «երբեմն պատարագում եմ ես եւ երբեմն օրվան պատշաճ քարոզ խոսում»[20]։ *Միով բանիվ, ինչպես գրում է Տ. Գարեգին աբեղան Հայոց Հայրապետին՝* «ժամանակը աշխատում եմ որքան կարելի է լավ օգտագործել եւ գիտելիքներ ամբարել»[21]։

*Սեպտեմբերի 3—9-ը Հայր Գարեգինը մասնակցություն է բերում Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների եւ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու միջեւ աստվածաբանական երկխոսության Վիեննայի երկրորդ՝ ոչ պաշտոնական խորհրդաժողովին, ինչպես նաեւ Վիեննայի Սբ Ստեփանոս Մայր տաճարի (*Stephansdom*) սրբազան արարողությանը։ Իսկ սեպտեմ-*

---

[17] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[18] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[19] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[20] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[21] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

բերի 5-ին ներկա է գտնվում Կարդինալ Ֆրանց Քյոնիգի կողմից կազմակերպված ընդունելությանը, այնուհետ՝ սեպտեմբերի 9-ին, մասնակցում է վիեննահայոց Ս. Հռիփսիմե եկեղեցում մատուցված Սբ Պատարագին[22]։

1974 թ. փետրվարի 11-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ, Տ. Գարեգին աբեղան ժամանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ մասնակցելու Սրբոց Ղեւոնդյանց քահանաների տոնի առիթով կազմակերպված հանդիսություններին[23]։

Փետրվարի 13-ին Հայր Գարեգինը ներկա է գտնվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Վեհարանում տեղի ունեցող միաբանական հերթական հանդիպմանը եւ Վեհափառ Հայրապետի հրավերով ներկայացնում է Վիեննայում ընթացող իր ուսանողական ապրելակերպը, այլեւ անդրադառնում վիեննահայ համայնքի ազգային-եկեղեցական կյանքին։ Իսկ փետրվարի 24-ին, Բուն Բարեկենդանի կիրակիին, Սբ Էջմիածնի Մայր Տաճարում մատուցում է ուխտի Սբ Պատարագ[24]։ Եւ ապա, Մայր Հայրենիք ու Մայր Աթոռ շուրջ երեքշաբաթյա այցելությունից հետո, վերադառնում է Ավստրիա[25]։

Վիեննա ժամանելուց հետո, օրեր անց՝ ապրիլի 10-ին, Հայր Գարեգինը Վեհափառ Հայրապետին ուղղված նամակ է շարադրում՝ մասնավորաբար գրելով.

---

[22] Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։
[23] Տե՛ս «Էջմիածին», 1974, փետրվար, էջ 25։
[24] Նույնը, էջ 25–26։
[25] Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։

«Վեհափա՛ռ Տեր,

ուրախությամբ ուզում եմ հայտնել, որ արձակուրդային օրերի հաճելի եւ գեղեցիկ անցկացումը Մայր Աթոռի հարազատ միջավայրում ոգեւորություն եւ եռանդ ներարկեցին իմ երակներում, նոր խանդավառությամբ նվիրվելու ուսմանը:

...Մոսկվայում երկու օր մնալուց հետո մեկնեցի Վիեննա: Խստաշունչ ձմռան փոխարեն իմ առջեւ փռվել էր նորափթիթ գարունը՝ իր ողջ գեղեցկությամբ:

Ճեմարան ներկայանալուց հետո գնացի Հայր Մեսրոպի մոտ: Հաղորդեցի Ձերդ Սրբության ողջույնները եւ օրհնությունները, որից հետո հանձնեցի նամակները:

...Իմ եղբայրական ողջույնները Մայր Աթոռի ողջ միաբանությանը: Ես միշտ սիրով հիշում եմ իրենց եւ մեր հավաքույթները Ձերդ Սրբության մոտ:

Որդիական խոնարհությամբ համբուրում եմ Ձեր Աջը եւ հայցում Ձեր օրհնությունը, մնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հավատարիմ եւ խոնարհ սպասավոր:

Ձեր որդի՝
Գարեգին աբեղա Ներսիսյան»[26]։

Վիեննայի համալսարանում ուսումնառությանը զուգընթաց Հայր Գարեգինը շարունակում է հոգեւոր ծառայություն մատուցել վիեննահայոց համայնքին։ Այդ ծառայագործությունը երիտասարդ հոգեւորականի համար դառնում է համայնքային կյանքում, հովվական առաքելության ասպարեզում գործելու իրական փորձառություն. «Ուսանողական այս շրջանը,— *գրում է Տ. Գարեգին աբեղան Վեհափառ Հայրապետին ուղղված 14 օգոստոս թվակիր իր նամակում,*— հրաշալի մեկ առիթ եղավ ինձ համար ավելի մոտիկից ծանոթանալու սփյուռքի հայ գաղութային կյանքին: Զգալու եւ ճանաչելու նրանց հայրենասիրական ոգին, զգացմունքները դեպի Մայր Հայրենիք եւ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ճիշտ է՝ իրականությունը չհամապատասխանեց հայաստանյան իմ վառվռուն, գունեղ պատկերացումներին, սակայն ես տեսա եւ ապրեցի ողջ իրականությունը՝ հայագաղութ իրականության մեջ: Այս անմիջական եւ իրական փորձառությունը իմ մեջ զորեղացրեց առավել եւս նվիրումի, աշխատանքի եւ եռանդի ոգին»[27]։

---

[26] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[27] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

Բնակվելով Վիեննայի Կաթոլիկ դպրեվանքի կացարանում՝ Հայր Գարեգինն ամբողջական մասնակցություն է բերում կրթական այդ հաստատության ուսանողական կյանքին եւ ձեռնարկություններին։ Սեպտեմբերի 24-ին, Ավստրիայի արքեպիսկոպոս Կարդինալ Ֆրանց Քյոնիգի հրավերով, դպրեվանքի մի խումբ սաների հետ նա այցելում է Հռոմ եւ Վատիկան։ Ուղեւորության եւ իր ստացած տպավորությունների մասին Հայր Գարեգինը երջանկահիշատակ Տ. Տ. Վազգեն Վեհափառին հղած 26 նոյեմբեր թվակիր նամակում ի մասնավորի գրում է. «...Սեպտեմբերի 24–ին կարդինալ König-ի հրավերով եեմարանականների հետ միասին այցելեցի Հռոմ։ Հանդիպում եւ զրույց ունեցանք Նորին Սրբություն Պողոս 6-րդ Պապի հետ, ինչպես նաեւ մի շարք բարձր անձնավորությունների եւ կրոնական կազմակերպությունների հետ։

Հռոմ քաղաքի ընդհանուր փայլը կայանում է իր պատմական փառավոր անցյալի, հրաշագեղ հնությունների եւ Վատիկանի մեջ։ Այցելուի այս գեղեցիկ տպավորությունները խամրում են սակայն, քաղաքի աննկարագրելի կեղտոտության հետեւանքով։ Պատմության հետ հաղորդակցության գեղեցիկ պահերը, շատ անգամ ընդմիջվում եւ խանգարվում են շրջակայքից եկող անտանելի գարշահոտության պատճառով։ Մի գուցե մեր խմբի համար այս պարագան աչքառու էր, որովհետեւ մենք մաքրության կենտրոն Վիեննայից էինք գալիս։

Ժողովուրդը՝ իր խանդավառ եւ կենսունակ նկարագրով հիշեցրեց ինձ Հայաստանը։ Ճամփորդությունն ինձ համար լավագույն առիթը եղավ գեղեցիկ փորձառության եւ Կաթոլիկ Եկեղեցու գործունեության հետ անմիջական շփման եւ ծանոթացման»[28]։

Տարեվերջին՝ դեկտեմբերի 20-ին, Մեծ Բրիտանիայի Հայրապետական պատվիրակ եւ Լոնդոնի հայոց հոգեւոր տեսուչ Տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանի հրավերով, Տ. Գարեգին աբեղան 17 օրով մեկնում է Լոնդոն[29]։

1975 թ. ապրիլին, Քյոլնի հայ համայնքի հրավերով, Հայր Մեսրոպը եւ Հայր Գարեգինն այցելում են Քյոլն, որտեղ Տ. Ներսես եպիսկոպոսի հետ մասնակցում են Հայոց Մեծ Եղեռնի 60-րդ տարելիցին նվիրված «յիշատակի հանդիսութեանց»[30]։

Հունիսին Հայր Գարեգինը բարձր առաջադիմությամբ ավարտում է իր ուսման շրջանը Վիեննայում։ Եւ մինչ դեպի Մայր Հայրենիք ճամ-

---

[28] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[29] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[30] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

փորդելը, հունիսի 29-ին, Վիեննայի հայոց Սբ Հռիփսիմե եկեղեցում Սբ Պատարագ է մատուցում։ Մայր Աթոռի միաբան Տ. Գարեգին աբեղայի մեկնման կապակցությամբ կազմակերպվում է ողջերթի հանդես։ Այդ առիթով, ի դեմս վիեննահայ եկեղեցական վարչության, Հոգեւոր հովիվը եւ վարչության ատենապետը հուլիս 1-ին մասնավոր գրություն են հղում Հայոց Հայրապետին.

«Վեհափա՛ռ Տէր,

Կիր. Յունիս 29ին Հայր Գարեգին Աբեղ. Ներսիսեան Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ մէջ մատոյց հրաժեշտի իր Պատարագը եւ Յլս. 11ին կը դառնայ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ երեք տարուան ուսման շրջանը աւարտելէ ետք։ Այս առթիւ Վիեննահայ Եկեղեցական Վարչութիւնս կը փափաքի Սրբութեանդ յայտնել սրտագին շնորհակալութիւն, որ Հայր Գարեգինը երեք տարի կանոնաւոր եւ գիտակից կերպով ծառայեց Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ՝ յաճախ իբր սարկաւագ եւ երբեմն որպէս պատարագիչ կամ քարոզիչ։ Նաեւ իրեն կը յայտնենք մեր գնահատական զգացումները, որ կարճ ժամանակի մէջ իւրացուց գերմաներէն լեզուն եւ սովորեցաւ աստուածաբանութիւն։ Մենք զինք ճանչցանք իբր շնորհիւով, պարկեշտ ու ազնիւ հոգեւորական մը եւ վստահ ենք, թէ իւր այս բարի նկարագրով եւ հայրենասիրական ոգիով ապագային մեծապէս օգտակար պիտի հանդիսանայ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ։ Իրեն կը մաղթենք ամեն յաջողութիւն։

Ի դիմաց Վիեննահայ Եկեղեցական Վարչութեան,
մատչելով ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն,
մնամք միշտ հաւատարիմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին.

Հոգեւոր հովիւ
Դր. Մեսրոպ ծ-վ. Գ. Գրիգորեան

Ատենապետ
Նուպար Վարդեան»[31]։

Հակառակ այն իրողության, որ Սուրբ Էջմիածնից եւ Մայր Հայրենիքից բաժանվելուց ի վեր շատ կարճ ժամանակ էր անցել, այնուամենայնիվ Էջմիածնաբաղձ եւ կարոտագին ապրումներով ու զգացումներով են լի Նորին Սրբություն ազգիս Վեհափառ Հայրապետի այն բոլոր նամակները, որոնք 1972–1975 թթ. նա հասցեագրել է երջանկահիշատակ

[31] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ միաբանակից իր հոգեւոր եղբայրներին։ Հիրավի, չքնաղագեղ Վիեննայում Տ. Գարեգին աբեղան ապրում էր իր հոգու հայացքն ամրորեն խարսխած աստվածակառույց Սուրբ Էջմիածնին եւ Մայր Հայրենիքին, ապրում էր քաղցր հիշատակներով Մայր Աթոռի նվիրական կամարների ներքո, հարազատ մթնոլորտում անցկացրած տարիների։ Ապրում էր իր հոգու խորաններում նշուլվող եկեղեցաշեն ու հայրենակերտ երազներով ու տեսիլքներով, այլեւ դրանք կյանքի կոչելու սրտագին աղոթքներով ու վճռականությամբ։

Հատկանշական մի կողմ եւս ունեն Հայր Գարեգինի գրությունները. որպես եղբայրական անխառն սիրո, նվիրումի եւ երախտագիտության արտահայտություն՝ նա իր նամակներն ավարտել է մշտապես ջերմագին ողջույններ հղելով Մայր Աթոռի ողջ միաբանությանը, պաշտոնեությանը, Հոգեւոր Ճեմարանի դասախոսական կազմին եւ ճեմարանականներին։

Ահա որոշ քաղվածքներ խնդրո շրջանի նամակներից.

«Ես իմ կյանքի 21 տարիները ապրել եմ Մայր Հայրենիքում, ավելի ճիշտ նրա սրտում՝ Ս. Էջմիածնում։ Սակայն նրանց մասին ես ունեի գիտակցական ոչ լրիվ պատկերացում, բայց այստեղ, երբ տարածություն եւ ժամանակ գոյացավ մեր երկուսի միջեւ, ես զգացի, եւ ինձ համար բացահայտվեց նրանց մեծախորհուրդ եւ վսեմ գաղափարները։ Հայրենի տունը, նվիրագործված հողն ու սրբությունը դա մարդուս ամենամեծ եւ երջանկաբեր գանձն է։ Ամեն օր ես տարվում եմ Էջմիածնի իմ կյանքի քաղցր հուշերով, եւ դա իմ օրվա բոլորից գեղեցիկ պահն է։ Ահա կարոտի այս զգացումն է, որը, միաժամանակ, թե՛ ճնշում է եւ թե՛ ուրախացնում է իմ հոգին»[32]։

«Վիեննայում արդեն կատարյալ գարուն է։ Քաղաքն ստացել է յուրահատուկ մի գեղեցկություն։ Շաբաթ եւ կիրակի օրերը քաղաքի այգիները լի են մարդկանցով։ Երբեմն-երբեմն ես էլ եմ գնում գլխավոր այգին՝ ըմբոշխնելու գարնան գեղեցկությունը։ Նվագախումբը կատարում է դասական հեղինակների գործերից, որը, միաձուլվելով բնության երաժշտության հետ, մթնոլորտը դարձնում է ավելի հաճելի։ Այս բոլորով հանդերձ ձգտումը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ մնում է շեշտված»[33]։

«Կարոտի զգացումը եւ հայրենաբույր գեղեցիկ հուշերն են ճնշում հոգիս։ Հիմի արդեն ինձ համար հասկանալի է, որ իրապես դժվար է ապրել Հայրենիքից եւ Ս. Էջմիածնից հեռու։ Հիմի արդեն գիտակցում եմ, համոզվում եմ եւ ...

[32] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[33] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ ֆ. 132։*

(չգիտեմ ինչպիսի բառ օգտագործեմ), թե ինչ նշանակություն եւ դեր ունի եւ կատարում է հենց միայն Հայաստան բառը եւ նրա իրական գոյությունը»[34]։

«Այլ է էջմիածինը իր խորհրդով, իր վեհությամբ, իր ջերմությամբ, իր հոգեւորականներով եւ հավատացյալներով։ Հրաշք է Հայրենիքը, ջերմ են մարդիկ Հայաստանում, գեղեցիկ է կյանքը Հայրենի հողի վրա։ Եւ ինձ թվում է, այս բոլորը հասկանալու եւ ըմբռնելու համար պետք է հեռանալ մի փոքր Հայրենիքից եւ Ս. էջմիածնից, ապրել եւ տեսնել ուրիշ երկրում ապրող ժողովրդի կյանքը»[35]։

Եւ այսպես, 1975 թ. հուլիսի 11-ին Տ. Գարեգին աբեղան ճանապարհվում է Մայր Հայաստան։ Հասնելով համբուրելի Սուրբ էջմիածին եւ Իջման Սբ Սեղանի առջեւ իր աղոթքն անելուց հետո՝ Վեհարանում նա աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը, այնուհետեւ այցելում է հայրական օջախ՝ ողջագուրելու սիրասուն ծնողներին, քույրերին ու եղբայրներին։ Մի քանի օր ընտանեկան հարկում անցկացնելուց հետո Տ. Գարեգին աբեղան վերադառնում է Մայր Աթոռ։ Իսկ հուլիսի 29-ին, որպես Հայրապետական շքախմբի անդամ, երջանկահիշատակ Տ. Տ. Վազգեն Վեհափառի հետ ուղեւորվում է Սբ Գեղարդավանք[36]։ Ապա օգոստոսի 3-ին, Սբ էջմիածնի Մայր Տաճարում, Հայր Գարեգինը Սբ Պատարագ է մատուցում[37]՝ պատասխանատու նոր առաքելությունից առաջ նվիրումի, հավատարմության եւ անձնադրության ուխտը վերանորոգելով ու զորացնելով։



[34] *Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[35] *Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի արխիվ ֆ. 132։*
[36] *Տե՛ս «էջմիածին», 1975, հուլիս-օգոստոս, էջ 90—91։*
[37] *Նույն տեղում։*

Doi: 10.56737/2953-7843-2022.10-76

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ[1]

Ի. դարի վերջին տասնամյակը հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու պատմության շրջադարձային ժամանակաշրջաններից է։ Թեեւ ժամանակագրական առումով այն ընդամենը մի ակնթարթ է մեր բազմադարյա պատմության մեջ, սակայն չափազանց տարողունակ ու բազմաշերտ է իր բովանդակությամբ եւ ուղղվածությամբ։ Դա հայոց ազգային պետականության վերակերտումի, անցյալի արժեքների վերագնահատման, տասնամյակներով բեկված հավատավոր հայ հոգու ապաքինման եւ վերածնության ժամանակաշրջանն է։ Հայոց պատմության այս փուլը բազմապիսի եւ այլազան խնդիրներ է առաջադրել նաեւ մեր ազգային ավանդական հաստատությանը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որը 1700 տարիներ ի վեր ոչ միայն հանդես է եկել որպես քրիստոնեական մեր ինքնության եւ համազգային միասնության անխոնջ ջատագով, այլեւ իր ազգանվեր հայացքը սեւեռել է գալիք ապագային։

Այդ պայմաններում էլ 1999 թ. նոյեմբերին Հայ Եկեղեցու առաքելահաստատ եւ լուսավորչակերտ գահին բարձրացավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ում բազմաբեղուն գործունեությունը Հայ Եկեղեցուն եւ Հայրենիքին անմնացորդ նվիրաբերվելու ուսանելի օրինակ է։

Աչքի առջեւ ունենալով ապագայի հզոր ու միաձույլ Հայ եկեղեցու տեսլականը՝ կազմակերպչական անխոնջ ջանադրությամբ Վեհափառ Հայրապետն իր անսպառ կարելիություններով հեռատեսորեն ձեռնամուխ եղավ մարդկային հոգին արգասավորող հոգեւոր վերակերտումի, ապագայի հանդեպ անսասան հավատ եւ ներշնչում ծնող ու արմատավորող «միասնական ու ծաղկուն Եկեղեցու Խորանի լույսն առատացնելու»,

---

[1]* *Ստացվել է՝ 31.10.2022, գրախոսվել է՝ 7.11.2022։ Էլ. հասցե՝* av_kalashyan@mail.ru։

եկեղեցաշեն, գիտակրթական, կազմակերպչական, մանկավարժական եւ բազմապիսի այլ աշխատանքների կազմակերպմանը։

Իր մեջ անթեղելով հավատքի արմատավորման եւ ծավալման գործի իրատեսական քայլեր՝ Հայոց Նվիրապետը մեծապես կարեւորել է ազգային պետականության եւ Մայր Եկեղեցու, ինչպես նաեւ Մայր Հայրենիքի եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի հոգու եւ սրտի կամրջումը։ Հանրությունը քաջածանոթ է Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետության տարիներին նշված հիմնախնդիրների լուծմանն ուղղված բազմաթիվ գործերին, որոնց շնորհիվ Հայ Եկեղեցին բարեկարգվել, շենացել եւ կարեւորագույն բազմաթիվ ձեռքբերումներ է արձանագրել։

Ի մասնավորի Վեհափառի գահակալության տարիները նշանավորվել են շինարարական եւ կառուցապատման լայնածավալ աշխատանքներով։ Նրա ջանքերով Մայր Աթոռը ետ է ստացել խորհրդային տարիներին կորցրած տարածքների մի մասը, որտեղ կառուցված եւ կառուցվող շենքերի թիվը հասնում է շուրջ 4 տասնյակի։

Վեհափառ Հայրապետի ջանքերով այդ տարիները դարձել են ոչ միայն տեսանելի, քարակերտ շինություններ, այլեւ հոգեւոր տաճարների՝ «հոգու եւ մտքի» շինարարության տարիներ։ Որակական վերելք են ապրել Մայր Աթոռի կրթական հաստատությունները։ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանը դարձել է բակալավրիատի, մագիստրատուրայի եւ հետբուհական (ասպիրանտական) կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություն՝ աստվածաբանական համալսարան, որտեղ գործում է նաեւ պետականորեն արտոնագրված՝ Աստվածաբանություն (աստվածաբանական գիտություններ) մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն պաշտպանելու մասնագիտական խորհուրդ։ Բարենորոգման այդ ճանապարհով Հայոց Հայրապետը հետեւողական կերպով կյանքի է կոչել արդի աշխարհի հոգեւոր կյանքի ելեւէջներին ծանոթ, համակողմանի զարգացած, հոգեւոր եւ քաղաքակրթական բազմաչափ տարածության եւ բազմաշերտ հարաբերություններին քաջատեղյակ Հայ եկեղեցու սպասավորների պատրաստումը, որոնցից շատերը գիտելիքները խորացրել են արտաշխարհի ճանաչված աստվածաբանական համալսարաններում եւ Հայաստանի գիտակրթական կենտրոններում։ Հայոց Հայրապետի տնօրինությամբ եւ օրհնությամբ գործող «Հոգեւոր տաճարների» անբաժան մաս են կազմում նաեւ Ճեմարանի մասնաճյուղի կարգավիճակով գործող եւ բակա-

լավրի կրթական ծրագիր իրականացնող Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը, վերականգնված՝ Քահանայից պատրաստման լսարանը, արտոնագրված ավագ դպրոցի կարգավիճակով գործող Հառիճավանքի Թրբանճյան հոգեւոր ընծայարանը եւ քահանայից վերապատրաստման երեքշաբաթյա ծրագիր իրականացնող Գարեգին Ա. կրթական կենտրոնը։ Վեհափառի հոգատար վերաբերմունքի ներքո են նաեւ արտերկրի կրթական հաստատությունները, մասնավորապես՝ 1999 թ. Մայր Աթոռի խնամքի ներքո գործող Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանը։

Նորահաստատ հոգեւոր տաճարների հետ սերտորեն առնչվում է նաեւ Վեհափառի մշտական հոգածության առարկա՝ աճող սերնդի հոգեւոր-բարոյական դաստիարակության, ազգային մշակույթի զարգացման խթանումը եւ բազում այլ հիմնախնդիրներ։ Այդ ոլորտներում հիշատակելի են Մայր Աթոռի հովանու ներքո գործող Հայորդյաց տները[2], որոնք հաճախում են շուրջ 60 000 երեխաներ, «Էօրնեկեան» հանրակրթական եւ Երեւանի՝ Գեւորգ Էմինի անվան №182 ավագ դպրոցները, հայորդիներին միավորելու եւ Հայ Եկեղեցու կյանքում ներգրավելու նպատակով 2001 թ. հիմնադրված Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական Միավորումը (ՀԵՀԵՄ)։ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ բարձր տնօրինությամբ են գործում Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը (ՔԴԿ), որը համագործակցելով ոլորտին առնչվող հաստատությունների հետ, խթանում է հանրակրթության, ինչպես նաեւ կիրակնօրյա կրթարանների սաների հոգեւոր եւ ազգային կրթությանն ու դաստիարակությանը։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից «հոգու եւ մտքի» շինարարության անբաժան մասն են 2006 թ. հիմնված Մայր Աթոռի Հրատարակչական բաժինը, որտեղ հրատարակվել է ավելի քան 400 անուն գիրք եւ բազմաթիվ վերահրատարակություններ, 2014 թ. հիմնադրված սոցիալական ծառայությունների գրասենյակը, որը աջակցություն, նյութական ու դրամական օգնության է տրամադրում հասարակության խոցելի խմբերին։ Այն իրականացնում է նաեւ բնակարանային ապահովման, «Հաշմանդամ երեխաներին եւ ընտանիքներին աջակցության» ու բազ-

---

[2] *Գարեգին արք. Ներսիսյանի (ներկայումս՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս) եւ ՀԲԸՄ մտահղացմամբ այս հաստատությունները հիմնադրվել են 1993 թ. եւ Հայ Եկեղեցու հովանու ներքո են ընդգրկվել Հայաստանում գործող մանկապատանեկան ստեղծագործական որոշ նախկին կենտրոններ։*

մաթիվ այլ ծրագրեր։ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հիմնադրվել են նաեւ երեխաների աջակցության եւ մշտական խնամքի կենտրոններ, իսկ անապահով քաղաքացիների համար նաեւ ՀԲՄ հովանավորության ներքո գործող բարեգործական ճաշարաններ։ Հայոց Կաթողիկոսի մշտական հոգածության ներքո շուրջ 6 տասնյակի հասնող հոգեւոր սպասավորներով գործում է նաեւ Բանակի հոգեւոր առաջնորդությունը, ինչպես նաեւ մեկ տասնյակ հոգեւորականների սպասավորությամբ գործող Քրեակատարողական հիմնարկների հոգեւոր տեսչությունը։

Գահակալության ընթացքում Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը արդյունավետ գործունեություն է ծավալել ինչպես համազգային հիմնախնդիրների՝ հայկական Սփյուռքի եւ հայրենիք-սփյուռք առնչությունների, Հայոց Մեծ եղեռնի միջազգային ճանաչման եւ դատապարտության, Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծման, այնպես էլ՝ էկումենիկ, միջեկեղեցական եւ միջկրոնական գործակցության ոլորտներում։ Եւ քանի որ ինչպես Վեհափառ Հայրապետն է հավաստում, Հայ «Եկեղեցին առաջնորդվում է մեր ազգի, մեր Հայրենիքի շահերով։ Եվ համազգային հնչեղություն ունեցող հարցերի առնչությամբ արտահայտում է իր վերաբերմունքը»[3], այդ գործընթացում Կաթողիկոսի գործունեության ուրույն ոլորտներից են եղել տարբեր պետությունների ղեկավարների, բարձրաստիճան պետական եւ քաղաքական գործիչների հետ ունեցած բազմաթիվ հանդիպումները եւ քննարկումները, որոնց ընթացքում նա հետեւողական կերպով օգտագործել է բոլոր հնարավորությունները՝ միջազգային ասպարեզում հայրենի Երկրի եւ Եկեղեցու հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ։ Բազմաշխատ այդ ջանքերի օրինաչափ արդյունքն էլ Գարեգին Բ. Կաթողիկոսի գործունեության միջազգային արժանի ճանաչումն է[4]։

---

[3] *Տե՛ս* https://azg.am/analytics/եկեղեցին-առաջնորդվում-է-մեր-ազգի-մեր/ *հմմտ.* https://yerkirmedia.am/hy/article/2020/12/27/30903 *եւ* http://ter-hambardzum.net/, *27 դեկտեմբերի 2020։*

[4] *Միջեկեղեցական հարաբերությունների եւ էկումենիկ համագործակցության ոլորտում Գարեգին Բ. Կաթողիկոսի միջազգային ճանաչման վկայությունը Հարավային Կորեայի Բուսան քաղաքում 2013 թ. անցկացված Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի 10-րդ համաժողովն էր, որը միաձայն քվեարկությամբ* Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընտրեց Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի նախագահ։ *Ամենայն Հայոց կաթողիկոսը ԵՀԽ-ն կգլխավորի առաջիկա ութ տարիների ընթացքում։ Տե՛ս* https://www.oikoumene.org/en/press-centre/news/assembly-elects-new-wcc-presidents, *4 նոյեմբերի 2013 թ.։*

Միջկրոնական հարաբերությունների եւ կրոնների երկխոսության ոլորտում Հայոց Կաթողիկոսի գործունեության միջազգային ճանաչման վկայությունը 2006 թ. օգոստոսին

Տարբեր երկրների պետական եւ քաղաքական գործիչները եւս միակամ են այն հարցում, որ Հայոց Հայրապետի ներդրումն ակնառու է միջեկեղեցական, էկումենիկ, միջկրոնական հարաբերությունների եւ երկխոսության ծավալման գործում։ Նրանք հավաստում են նաեւ, որ իր նախաձեռնություններով Հայոց Հայրապետն էապես նպաստել է թե՛ միջպետական հարաբերությունների ծավալման, թե՛ ժողովուրդների բարեկամության, ազգամիջյան հարաբերությունների հաստատման գործին։ Եւ հիմնավորումն այն է, որ միջեկեղեցական, էկումենիկ եւ միջկրոնական հարաբերությունների ու երկխոսության ծավալման ոլորտում Գարեգին Բ. Կաթողիկոսը հանդես է գալիս որպես քաղաքակրթությունների երկխոսության եւ միջմշակութային հարաբերությունների ծավալման ջատագով։ Այդ ամենով, ինչպես անցյալում, մեր օրերում եւս Հայ Եկեղեցին հույսով ու լավատեսությամբ է շարունակում ջանքեր գործադրել նշյալ ուղղությամբ եւ դրանով իսկ զորակից է Հայաստանի իշխանություններին[5]*։*

Վկայակոչելով միջեկեղեցական եւ էկումենիկ հարաբերությունների ոլորտում Գարեգին Բ. Կաթողիկոսի մեծ ներդրումը[6]*, Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը մատնանշում է հատկապես բոլոր միաստվածային կրոնների հավատացյալներին, ինչպես նաեւ տարբեր դավանանքի պատկանող մարդկանց մերձեցնելու գործում Վեհափառի ցուցաբերած լայնախոհությունը եւ մեծ հեղինակությունը, ինչպես նաեւ մարդկանց նկատմամբ ունեցած մեծ եւ ջերմ հոգատարությունը*[7] *եւ լիահույս է, որ*

Ճապոնիայի Կիոտո քաղաքում անցկացված «Կրոնները խաղաղության համար» 8-րդ համագումարն էր, որը Հայոց Կաթողիկոսի բացակայության պարագայում նրան ընտրել է «Կրոնները խաղաղության համար» կազմակերպության *համանախագահ, տե՛ս «Էջմիածին», 2006, է.–Ը., էջ 179։ Իսկ 2019 թ. օգոստոսին Գերմանիայի Լինդաու քաղաքում տեղի ունեցած «Կրոնները հանուն խաղաղության» 10-րդ համաշխարհային համաժողովում աշխարհի 125 երկրներ եւ տարբեր կրոնական համայնքներ ներկայացնող 700 պատվիրակների կողմից* Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընտրվել է միջազգային այդ կառույցի պատվավոր նախագահ, *տե՛ս «Էջմիածին», 2019, ԺԱ., էջ 90,* http://ter-hambardzum.net/ *(4 հոկտեմբերի, 2019 թ.)։*

[5] *Այդ հոլովույթում Գարեգին Բ. Կաթողիկոսի հավատամքը Եկեղեցու եւ պետության միջեւ ներդաշնակ հարաբերություններ հաստատելու հրամայականն է, ինչը նա հիմնավորվում է նրանով, որ «Սերտ համագործակցության այդ ոգին պիտի դրսեւորվի եկեղեցական ու պետական բոլոր կառույցների հարաբերություններում, ինչպես Հայրենիքում, այնպես եւ Սփյուռքում,* բանզի Հայոց պետության եւ Հայ Եկեղեցու միասնականությունը շինություն է., կյանք եւ հարատեւություն Հայրենիքին եւ ազգիս Հայոց (*ընդգծումը մերն է՝* Ա. Ք.)», Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, *Հատընտիր պաշտոնականք (1999–2009 թթ.), Ս. Էջմիածին, 2009, էջ 48։*

[6] *Տե՛ս «Էջմիածին», 2001, ԺԲ., էջ 18։*

[7] *Տե՛ս «Էջմիածին», 2001, ԺԲ., էջ 20։*

Վեհափառի այցը Փարիզ «...հնարավորություն կընձեռի բազմաթիվ կապեր ստեղծելու, որոնք ավելի առանձնահատուկ կերպով կմիավորեն հայ եւ ֆրանսիացի ժողովուրդներին»[8]։ Իբրեւ «հեղինակավոր կրոնական գործիչ», «միջկրոնական երկխոսության» եւ «ռուս-հայկական հումանիտար կապերի» ջատագով Հայոց Հայրապետի անձնական ավանդը բարձր է գնահատում նաեւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը։ Նա մատնանշում է նաեւ Վեհափառի «անուրանալի խաղարարար ջանքերը»[9] եւ հավաստում է, որ Ռուսաստանում Հայոց Կաթողիկոսին «...ճանաչում եւ գնահատում են որպես ռուս-հայկական բազմադարյան բարեկամության ակտիվ ջատագովի, մի մարդու, որը մեծ նպաստ ունի Կովկասում խաղաղասիրական գործունեություն ծավալելու մեջ»[10]։

Գարեգին Բ. Կաթողիկոսի էկումենիկ ոգին ու Հայ եւ Ռումին Եկեղեցիների ու ժողովուրդների միջեւ բարեկամական ու հոգեւոր կապերի հաստատումը բարձր է գնահատել նաեւ Ռումինիայի Նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուն, որ հայրապետին դիմելով՝ փաստում է. «Դուք Ձեր բարձր անհատականությամբ ճանաչված անձնավորություն եք քրիստոնյա ողջ աշխարհում։ Դուք հանդես եք գալիս որպես մի շնորհաշատ հոգեւոր առաջնորդ եւ նվիրված կազմակերպիչ...։ Դուք էկումենիկ ոգով մարտնչելով մերձեցնում եք Եկեղեցիները»[11]։ Միջեկեղեցական հարա-

---

[8] *«Էջմիածին», 2001, Թ., էջ 14։ Միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերությունների ծավալման գործում Վեհափառի ցուցաբերած լայնախոհության եւ մեծ հեղինակության համար Ֆրանսիայի նախագահը Գարեգին Բ. Կաթողիկոսին շնորհել է Ֆրանսիայի «Պատվո լեգեոն» շքանշանի կոմանդորի աստիճան, տե՛ս «Էջմիածին», 2001, ԺԲ., էջ 20։*

[9] *«Էջմիածին», 2005, Բ.—Գ., էջ 15։*

[10] *«Էջմիածին», 2001, Ը., էջ 12։ Հայ Ռուս ժողովուրդների եւ եկեղեցիների ավանդական բարեկամական հարաբերությունների, պետությունների միջեւ փոխշահավետ դաշնակից փոխգործակցության ամրապնդման, Ռուսահայ համայնքի հոգեւոր եւ մշակութային կյանքում անմիջական կարեւոր ներդրման համար ՌԴ Նախագահի հրամանագրով Գարեգին Բ. Կաթողիկոսը պարգեւատրվել է Ռուսաստանի Դաշնության «Բարեկամության շքանշանով», տե՛ս «Էջմիածին», 2006, Թ., էջ 21։ Ռուս եւ հայ ժողովուրդների եւ Եկեղեցիների համագործակցության եւ բարեկամության ամրապնդման գործում ունեցած մեծ ներդրման համար 2004 թ. Գարեգին Բ. Կաթողիկոսը պարգեւատրվել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Անդրեաս Նախակոչ առաքյալ» շքանշանով, տե՛ս «Էջմիածին», 2004, Թ.—Ժ., էջ 8։ Իսկ Հայ Առաքելական Եկեղեցու եւ Մոսկվայի Պատրիարքարանի միջեւ բարեկամական հարաբերությունների զարգացման գործում ներդրած ավանդի եւ ծննդյան 70-ամյակի առիթով 2021 թ. Գարեգին Բ. Կաթողիկոսը պարգեւատրվել է նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու «Փառքի եւ Պատվի» առաջին աստիճանի շքանշանով, տե՛ս* http://ter-hambardzum.net/, *12 հոկտեմբերի 2021 թ.։*

[11] *«Էջմիածին», 2000, Թ., էջ 17։ Այդ ներդրումների համար Ռումինիայի Հանրապետության նախագահը Գարեգին Բ. Վեհափառին պարգեւատրել է երկրի ազգային բարձրագույն*

բերությունների ամրապնդման եւ հայ-ուկրաինական հոգեւոր կապերի զարգացման գործում Գարեգին Բ. Կաթողիկոսի գործունեությունը բարձր է գնահատել նաեւ Ուկրաինայի Նախագահ Լեոնիդ Կուչման[12]։ Նույն փաստն է արձանագրել նաեւ Վրաստանի Նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն որ հավաստել է. «Դժվար է գնահատել այն ավանդը, որ Դուք ներդնում եք վրաց եւ հայ ժողովուրդների միջեւ դարավոր խաղաղության ամրապնդման, ջերմ ու հոգեւոր կապերի պահպանման գործում»[13]։ Իսկ Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովը հավաստել է, որ Գարեգին Բ. Կաթողիկոսի գործունեությունը ոչ միայն խթանում է հայ եւ բուլղար ժողովուրդների հոգեւոր հաղորդակցման զորացումը, այլեւ՝ Բուլղարիայի եւ Հայաստանի Հանրապետությունների հարաբերությունների ընդլայնմանը, հայ-բուլղարական կապերի սերտացմանն ու զարգացմանը[14]։

Կարելի է շարունակել օրինակները, բայց վերոբերյալն էլ լիովին բավարար է վստահաբար պնդելու, որ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի հմուտ ղեկավարությամբ Հայ Եկեղեցին ակտիվ մասնակցությունն է բերում ժողովուրդների բարեկամության եւ խաղաղ գոյակցության, միջազգային խաղաղարար կազմակերպությունների աշխատանքներում եւ ամենատարբեր նախաձեռնություններ ու երկխոսություն իրագործելու միջոցով իր լուման է ներդնում ժողովուրդների եւ կրոնների փոխհարաբերությունների բարելավման, գոյություն ունեցող տարաձայնությունների հաղթահարման եւ մարդկության կյանքում վճռորոշ դեր ունեցող քաղաքական ու կրոնական հոսանքների միջեւ համագործակցության զարգացման գործին։ Եւ դրանով իսկ մեկ անգամ եւս հավաստում է համամարդկային արժեքների հավատարիմ պաշտպանի իր կոչումը։

Հայոց Հայրապետը եւս, վերահաստատելով Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի հանձնառությունը ժողովուրդների եւ պետությունների խաղաղ ու ստեղծագործ փոխհարաբերությունների վերաբերյալ, մատնանշում է, որ պատմության ընթացքում մեր Եկեղեցին մշտապես իր առաքելության

պարգեւով՝ «Ռումինիայի աստղ» շքանշանով, տե՛ս անդ, էջ 16։ 2012 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը պարգեւատրվել է նաեւ Ռումինական Ուղղափառ եկեղեցու բարձրագույն՝ «Ռումինիայի հովանավոր Ս. Անդրեաս առաքյալ» շքանշանով, տե՛ս «Էջմիածին», 2012, Ը., էջ 7։

[12] Այդ գործունեության համար Հայոց Կաթողիկոսը պարգեւատրվել է Ուկրաինայի Հանրապետության «Իշխան Յարոսլավ Իմաստուն» 5-րդ աստիճանի շքանշանով, տե՛ս «Էջմիածին», 2001, Ժ.–ԺԱ., էջ 148։

[13] «Էջմիածին», 2001, Ը., էջ 13։

[14] «Էջմիածին», 2002, Զ.–Է., էջ 9։

կարեւորագույն մասն է համարել ժողովուրդների միջեւ խաղաղ համակեցության, փոխհանդուրժողականության ու փոխըմբռնման հաստատմանն ուղղված գործընթացներին իր մասնակցությունը եւ անխոտոր ճանապարհով շարունակում է այդ առաքելությունը, քանի որ, ինչպես Վեհափառն է հավաստում, «Հոգեւոր պետերը գիտակցում են ներկա կյանքի պայմաններում աշխարհի առջեւ ծառացած մարտահրավերները՝ ժողովուրդների մեջ հանդուրժողության ոգին զորացնելու եւ խաղաղ համակեցության կոչելու՝ բարի ապագա երաշխավորելու մարդկությանը»[15]։

Համոզված, որ ժողովուրդներն իրենց բարի ու արդար երազների իրագործմանը կարող են հասնել, երբ առաջնորդվեն հավատին խարսխված ջերմ, եղբայրական, բարեկամական անանց հարաբերություններով[16], Հայ Եկեղեցու հովվապետն այդ դիրքերից է պետական այրերի հետ քննարկել հայ համայնքների նկատմամբ պետական վերաբերմունքի հարցը։ Այդ համապատկերում նա անդրադարձ է կատարել նաեւ միջեկեղեցական եւ էկումենիկ հարաբերությունների, ժողովուրդների միջեւ խաղաղության, եղբայրության եւ սիրո հաստատման գործում քրիստոնեական Եկեղեցու դերին։

Տարբեր երկրների բարձրագույն պետական այրերի հետ Հայոց Կաթողիկոսի հանդիպումների ընթացքում առանձնահատուկ կերպով շեշտադրվել է նաեւ կարեւոր այն ներդրումը, որը հայ համայնքներն ունեցել են եւ ունեն այդ երկրների հասարակական եւ մշակութային կյանքում։ Կողմերը գոհունակությամբ են արձանագրել նաեւ դարերի ընթացքում ձեւավորված Հայ եւ քույր եկեղեցիների եւ այդ հիման վրա՝ ժողովուրդների բարեկամությունը։ Մեծապես կարեւորվել է նաեւ Հայ Եկեղեցու պատմական դերը տվյալ երկրի հայ համայնքի պահպանության եւ գործառնության ասպարեզում։ Բարձր մակարդակի այդ հանդիպումների ընթացքում կողմերը գոհունակությամբ են արձանագրել նաեւ Հայաստանի հետ տարբեր երկրների ամրապնդվող բարեկամական կապերն ու փոխգործակցության շարունակական բնույթը։

Իր կողմից Հայոց հովվապետը հանուն մեր ժողովրդի եւ Եկեղեցու խորին շնորհակալություն է հայտնել այն երկրների նախագահներին եւ նրանց միջոցով այդ երկրների «մարդասեր եւ իրավասեր» ժողովուրդնե-

---

[15] *«Էջմիածին», 2005, Թ., էջ 159։*

[16] *Տե՛ս «Էջմիածին», 2007, Զ.–Է., էջ 11։*

րին այն աջակցության եւ զորակցության համար, որ նրանք դրսեւորել են Ցեղասպանության ահավոր ողբերգությունը վերապրած հայ ժողովրդի տարագիր զավակներին հյուրընկալելու եւ նրանց հոգեւոր-ազգային կյանքը կազմակերպելու ժամանակ։ Այդ հանդիպումների ընթացքում Վեհափառն առանձնակի երախտագիտություն է հայտնել նաեւ Հայաստանի Հանրապետության նկատմամբ այդ երկրների իշխանությունների կողմից մերօրյա հոգատար եւ բարյացակամ վերաբերմունքի համար։ Խաղաղ գոյակցության եւ միջպետական հարաբերությունների ոլորտում կողմերն արձանագրել են նաեւ միջեկեղեցական եւ էկումենիկ հարաբերությունների կարեւորությունը։

Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակի եւ Նիկոլա Սարկոզիի հետ հանդիպումների ընթացքում Հայոց Հայրապետն օրհնությամբ եւ գնահատանքով է ընդգծել Ֆրանսիայի իշխանությունների հոգատար վերաբերմունքը ֆրանսաբնակ հայորդիների նկատմամբ, որի արդյունքում ցեղասպանություն վերապրած ֆրանսահայերը քրիստոնեական լավատեսությամբ եւ հույսով կարողացան իրենց հոգեւոր-ազգային կյանքը կազմակերպել Ֆրանսիայում եւ այսօր, որպես արժանավոր քաղաքացիներ, իրենց կարեւոր ծառայությունն են բերում Ֆրանսիայի առաջընթացին եւ բարօրությանը[17]։

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ առանձնազրույցի ընթացքում Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ է արձանագրել, որ ինչպես ավանդաբար, այնպես էլ տվյալ պահին հայ եւ ռուս ժողովուրդների, Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների ջերմ հարաբերությունները խարսխված են փոխադարձ անկեղծ սիրո եւ հարգանքի վրա։ Կողմերի միջեւ արդյունավետ քննարկումներ են տեղի ունեցել նաեւ ՌԴ տարածքում Հայ Առաքելական Եկեղեցու բնականոն եւ բեղմնավոր գործունեության ծավալմանն առնչվող հարցերի շուրջ[18]։ Մեկ այլ հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետը շնորհակալություն է հայտնել Վ. Պուտինին հայ ժողովրդի գավակների հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար, որի շնորհիվ Ռուսաստանի օրհնյալ հողում բնակվող հայորդիներն ապրում են իրենց ազգային արժեքներով ու ավանդույթներով։ ՌԴ նախագահը գոհունակությամբ է

---

[17] *Մանրամասները տե՛ս «Էջմիածին», 2001, ԺԲ., էջ 20–21, «Էջմիածին», 2006, Ժ.–ԺԱ., էջ 6, «Էջմիածին», 2011, Ժ., էջ 8։*

[18] *«Էջմիածին», 2001, Ժ.–ԺԱ., էջ 25։*

անդրադարձել հոգեւոր ոլորտում երկու երկրների փոխգործակցությանը, նշելով, որ Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական Եկեղեցիների միջեւ դարերի ընթացքում ձեւավորված եւ այսօր էլ շարունակվող ջերմ հարաբերությունների շնորհիվ երկու ժողովուրդների միջեւ առկա հարաբերությունները հոգեւոր հիմք ունեն[19]։

Տարբեր պետությունների ղեկավարների հետ Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկխոսությունները իրենց նպաստն են բերել ազգերի միջեւ խաղաղության հաստատման ու ամրապնդման միջավայրի ձեւավորման գործին։ Կողմերը մատնանշելով ժողովուրդների համերաշխ գոյակցության եւ փոխհարաբերությունների բազմադարյա պատմական փորձը, անդրադարձ են կատարել այդ գործընթացի հիմքում ընկած հանդուրժողականության եւ միջեկեղեցական հարաբերությունների անանց դերին։ Փաստվել է նաեւ, որ դարերի փորձություն ունեցող հոգեւոր կապերը այսօր էլ կարող են հիմք հանդիսանալ ժողովուրդների դրացիական հարաբերությունների սերտացման ու զարգացման գործում։

Այդ դիտանկյունից են ընթացել Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ հյուրընկալ երկրների նախագահների քննարկումները։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպմանը Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովը վստահեցնել է, որ փոխգործակցությունը խթան կհանդիսանա ոչ միայն երկու ժողովուրդների հոգեւոր կապերի զորացման, այլեւ՝ Բուլղարիայի եւ Հայաստաեւի Հանրապետությունների հարաբերությունների ընդլայնման եւ հայ-բուլղարական կապերի սերտացման ու զարգացման գործում[20]։ Գեորգի Պրվանովի հետ երկրորդ եւ Բուլղարիայի նախագահ Ռումեն Ռադեւի հետ հանդիպումների ընթացքում, շեշտելով հասարակության մեջ քրիստոնեական բարձր արժեքների տարածման անհրաժեշտությունը, կողմերը կարեւորել են նաեւ Հայ եւ Բուլղար Եկեղեցիների ջերմ հարաբերությունները եւ հույս են հայտնել, որ դրանք էլ ավելի պիտի զորանան ու ամրապնդվեն՝ ի շահ երկու քրիստոնյա ժողովուրդների[21]։

Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուն, մատնանշելով հայ եւ ռումին ժոդովուրդների բարեկամության ավանդական հարաբե-

---

[19] *«Էջմիածին», 2005, Բ.–Գ., էջ 15։*

[20] *«Էջմիածին», 2002, Զ.–Է., էջ 9։*

[21] *«Էջմիածին», 2004, Թ.–Ժ., էջ 4։ Տե՛ս նաեւ* http://ter-hambardzum.net/, *13 փետրվարի 2018 թ.։*

րությունները, վկայել է նաեւ չափազանց գործուն եւ բեղմնավոր այն դերը, որ ունեցել է հայ համայնքը Ռումինիայի պատմության ընթացքում։ Եւ դիմելով Հայոց Կաթողիկոսին հավաստել է, որ ժողովուրդների բարեկամության ջատագով լինելով՝ Վեհափառն իր գործունեությամբ դեպի հաջորդող հազարամյակ է «...փոխանցում բարեկամության եւ քրիստոնեական համագործակցության մղումները, որոնք առկա են դարերի ընթացքում մեր ժողովուրդների եւ Եկեղեցիների միջեւ»[22]։ Գարեգին Բ. Կաթողիկոսն անդրադառնալով հայ եւ ռումին ժողովուրդների դարերի փորձությունն անցած բարեկամությանն ու համագործակցությանը, ռումինահայ համայնքի գործուն եւ բեղմնավոր կյանքին, երկու երկրների բարեկամությանը եւ միջեկեղեցական երկխոսություններին, հայ համայնքի եւ Հայ Եկեղեցու սրբությունների հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար հանդիպումների եւ քննարկումների ընթացքում իր շնորհակալությունն է հայտնել նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուին։ Փոխգործակցության այդ ոգին դրսեւորվել է նաեւ Ռումինիայի նախագահներ Իոն Իլիեսկուի[23], Տրայան Բասեսկուի[24] եւ Ռումինիայի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Կրին Անտոնեսկուի[25] հետ Գարեգին Բ. Կաթողիկոսի հանդիպումների ընթացքում։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայ եւ լեհ ժողովուրդների դարավոր բարեկամության փաստն է շեշտել Լեհաստանի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկու հետ հանդիպման ընթացքում եւ հավելել է, որ այդ բարեկամության հիմքում ընկած են քրիստոնեական հավատը եւ արժեքները։ Կաթողիկոսը դրանով է բացատրել այն, որ հայորդիները տարբեր պատմական հանգամանքներում ապաստան են գտել հավատակից եղբայր լեհ ժողովրդի հյուրընկալ երկրում եւ արժանացել են բարյացակամ վերաբերմունքի ու աջակցության։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գոհունակություն է հայտնել Հայաստանի եւ Լեհաստանի միջեւ փոխհարաբերությունների առավել սերտացման եւ տարբեր ոլորտներում համագործակցության զարգացման առիթով։ Կողմերը գոհունակությամբ են փաստել դարերի ընթացքում հայ համայնքի կարեւոր դերակատարությունը Լեհաստանի կյանքում։ Ընդգծվել է նաեւ, որ Լեհաստանը պետք է

---

[22] *«Էջմիածին», 2000, Թ., էջ 17։*
[23] *«Էջմիածին», 2001, Ժ.–ԺԱ., էջ 26։*
[24] *«Էջմիածին», 2006, Ժ.–ԺԱ., էջ 8։*
[25] *«Էջմիածին», 2012, Ը., էջ 6–7։*

ոչ միայն շարունակի պահպանել բարեկամությունը, այլեւ նպաստի երկու երկրների միջեւ համագործակցության զարգացմանը։ Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են նաեւ Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների ջերմ փոխհարաբերությունները[26]։

Երկու պետությունների, ժողովուրդների եւ եկեղեցիների համագործակցության առաջնության հարցը առանցքային է եղել նաեւ Հունաստանի Հանրապետության նախագահ Կարոլոս Պապուլիասի հետ Վեհափառ Հայրապետի հանդիպման ընթացքում։ Կաթողիկոսը գոհունակությամբ է փաստել հայրենի պետության եւ Հունաստանի Հանրապետության միջեւ հաստատված բարեկամական կապերի անհրաժեշտությունը։ Կողմերն անդրադարձել են նաեւ Հայ եւ Հույն Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ հարաբերություններին, ինչպես նաեւ հայ համայնքի հանդեպ Հունաստանի հոգատար վերաբերմունքին եւ ուշադրությանը։ Անդրադարձ է կատարվել նաեւ պատմության ընթացքում հայ եւ հույն ժողովուրդներին բաժին ընկած փորձություններին[27]։

Այդ ոգին տիրապետող է եղել նաեւ Կիպրոսի Հանրապետության նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասի հետ հանդիպման ընթացքում։ Գարեգին Բ. Հայրապետը շնորհակալությամբ է անդրադարձել Կիպրոսի հայ համայնքի հանդեպ պետական իշխանության ջերմ եւ հոգատար վերաբերմունքին, որի շնորհիվ կիպրահայերը լիարժեք հնարավորություն ունեն ապրելու իրենց ազգային-եկեղեցական եւ մշակութային կյանքով։ Կողմերը կարեւորել են նաեւ տարեցտարի ավելի սերտացող եւ ամրապնդվող հայ-կիպրական կապերը[28]։

Համագործակցության գործընթացների ծավալումն առաջնային է եղել նաեւ Ավստրիայի Դաշնային Հանրապետության նախագահների հետ Գարեգին Բ. Կաթողիկոսի հանդիպումների եւ քննարկումների ընթացքում։ Ավստրիայի Նախագահ Թոմաս Կլեստիլի հետ հանդիպման ընթացքում կարծիքներ են փոխանակվել կրոնական համագործակցության տարբեր խնդիրների շուրջ[29]։ Հանձին Հայոց Նվիրապետի Նախագահ Հայնց Ֆիշերը ոչ միայն բարձր է գնահատել հայ ժողովրդի կյանքում Հայ Եկեղեցու դերը, այլեւ մեծապես արժեւորել է Ավստրիայի տնտեսա-

---

[26] *«Էջմիածին», 2011, է., էջ 4–5։*
[27] *Տե՛ս «Էջմիածին», 2007, Զ.–է., էջ 10–11։*
[28] *Տե՛ս «Էջմիածին», 2009, է., էջ 5–6։*
[29] *Տե՛ս «Էջմիածին», 2001, Ժ.–ԺԱ., էջ 29։*

կան-հասարակական կյանքում հայ համայնքի բերած նպաստը[30]։ Մեկ այլ հանդիպման ընթացքում Հայնց Ֆիշերը բարձր է գնահատել նաեւ Ավստրիայում Հայկական Եկեղեցու եւ հայ համայնքի առկայությունը։ Կողմերը կարեւորել են նաեւ Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների եղբայրական հարաբերություններն ու գործակցությունը, ինչպես նաեւ հարավկովկասյան տարածաշրջանի հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդների քառակողմ եւ եռակողմ հանդիպումները ի խնդիր խաղաղության պահպանման[31]։

Հայոց Կաթողիկոսի եւ Ֆինլանդիայի Հանրապետության նախագահ տիկին Տարյա Հալոնենի հանդիպման ընթացքում մեծապես գնահատվել են երկու երկրների եւ ժողովուրդների զարգացող հարաբերությունները։ Այդ հոլովույթում կողմերն անդրադարձել եւ բարձր են գնահատել նաեւ Հայ Եկեղեցու, Ֆինլանդիայի Լյութերական եւ Ուղղափառ Եկեղեցիների միջեւ հաստատված ջերմ կապերը[32]։

Գերմանիայի Կանցլեր Անգելա Մերկելի հետ քննարկումների ընթացքում մեծ դեր է վերագրվել Հայ Եկեղեցու եւ Գերմանիայի Կաթոլիկ ու Ավետարանական Եկեղեցիների հետ գործակցությունը։ Վեհափառ Հայրապետն ի դեմս կանցլեր Անգելա Մերկելի նաեւ իր շնորհակալությունն է հայտնել Գերմանիայի իշխանություններին հայկական համայնքի հանդեպ դրսեւորվող հոգատար վերաբերմունքի համար։ Հանդիպման ընթացքում մտքեր փոխանակվեցին նաեւ ղարաբաղյան հակամարտության ներկա վիճակի առնչությամբ։ Վեհափառ Հայրապետն իր մտահոգությունն արտահայտեց Ադրբեջանի ղեկավարության՝ չդադարող ռազմատենչ հայտարարությունների կապակցությամբ, ինչը մեծապես վտանգում է հակամարտության խաղաղ կարգավորման հեռանկարները։ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անթույլատրելի համարեց հայության հանդեպ ատելության եւ թշնամանքի հրահրումն Ադրբեջանում։ Մտահոգություն արտահայտվեց Թուրքիայում քրիստոնեական փոքրամասնությունների իրավունքների սահմանափակման վերաբերյալ։ Անգելա Մերկելը, կիսելով ներկայացված մտահոգությունները, հաստատեց, որ Գերմանիան ջանքեր կգործադրի նպաստելու համար արծարծված խնդիրների հանգուցալուծմանը[33]։

---

[30] *Տե՛ս «Էջմիածին», 2005, ԺԲ., էջ 3։*
[31] *Տե՛ս «Էջմիածին», 2012, Զ., էջ 7։*
[32] *Մանրամասները տե՛ս «Էջմիածին», 2005, Թ., էջ 158–159։*
[33] *Տե՛ս* http://ter-hambardzum.net/, *25 օգոստոսի 2018 թ.։*

Իսկ Շվեդիայի Թագավորության խորհրդարանի նախագահ Անդրեաս Նորլենի հետ զրույցի ընթացքում Հայոց հովվապետը գոհունակությամբ է արձանագրել երկու երկրների միջեւ հարաբերությունների սերտացումը եւ փոխգործակցության զարգացումը։ Նա իր գնահատանքն է հայտնել նաեւ Շվեդիայի Թագավորությանը՝ Հայաստանին ցուցաբերվող զորակցության համար։ Քննարկվել են նաեւ Շվեդիայի հայ համայնքի եկեղեցական կյանքի հետ կապված հարցերը, որի գործունեության համար պետությունն ապահովում է անհրաժեշտ բոլոր պայմանները[34]։

Համագործակցության եւ բարեկամական կապերի ծավալման կարեւորությունն առաջնային է համարվել նաեւ Շվեյցարիայի Համադաշնության նախագահ տիկին Միշելին Կալմի-Ռեյի հետ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպման ընթացքում։ Վեհափառը գոհունակություն է հայտնել Հայաստանի եւ Շվեյցարիայի միջեւ զարգացող համագործակցության կապակցությամբ։ Մատնանշելով, որ երկու երկրներին միավորում է արժեքային համընդհանուր մի համակարգ, որի հիմքում ընկած է քրիստոնեական հավատը, իբրեւ հավատակից ժողովուրդների, Վեհափառը մեծապես կարեւորել է համագործակցության ընդլայնումը տարբեր բնագավառներում՝ վստահություն հայտնելով, որ Շվեյցարիայի նախագահի այցը Հայաստան մեծապես պիտի նպաստի երկու ժողովուրդների բարեկամության առավել ամրապնդմանը եւ արդյունավորմանը։ Նշվել է նաեւ Շվեյցարիայի հայկական համայնքի կարեւոր դերակատարությունը այդ հարցում։ Հայոց Հայրապետը գնահատանքով է անդրադարձել նաեւ առանց նախապայմանների Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորման գործում Կալմի-Ռեյի անձնական միջնորդական ջանքերին։ Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն ու Շվեյցարիայի Համադաշնության նախագահը քննարկել են նաեւ տարածաշրջանում խաղաղության պահպանման, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության, ինչպես նաեւ այս առումով տարբեր երկրների եւ միջազգային կառույցների բերած աջակցության հարցը։ Արձանագրվել է նաեւ Հայ Եկեղեցու դերը միջեկեղեցական հարաբերությունների, Շվեյցարիայի հայոց թեմի եւ հայ համայնքի ազգային-եկեղեցական կյանքում[35]։

---

[34] *Տե՛ս* http://ter-hambardzum.net/, *27 օգոստոսի 2019 թ.։*

[35] *«Էջմիածին», 2011, Գ., էջ 8–9։*

Բարձր մակարդակի հանդիպումների հոլովույթում արժանահիշատակ է նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումը Իտալիայի Հանրապետության նախագահ Սերջիո Մատարելլայի հետ։ Մատնանշելով, որ հայ եւ իտալացի ժողովուրդների բարեկամությունը պատմական խորին արմատներ ունի, Վեհափառը գոհունակություն է հայտնել, որ այսօր այդ բարեկամական կապերն առավել զարգանում եւ ամրապնդվում են երկու երկրների նախագահների սերտ գործակցության արդյունքում։ Երկու երկրների եւ ժողովուրդների միջեւ բարեկամական հարաբերություններ ծավալելու գործում կողմերը կարեւորել են նաեւ Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների դերակատարությունը եւ շարունակվող ջերմ փոխհարաբերությունները։ Կողմերը փոխճանաչողության եւ հայ-իտալական բարեկամության զորացման գործում գնահատանքով են անդրադարձել նաեւ պատմության ընթացքում Իտալիայում ձեւավորված հայ համայնքի կարեւոր առաքելությանը եւ գոհունակություն են հայտնել, որ աշխույժ ազգային ու հոգեւոր լիարժեք կյանքով ապրող իտալահայ համայնքը այսօր եւս շարունակում է բարեկամական կամուրջ հանդիսանալ երկու երկրների միջեւ։

Իտալիայի նախագահը հավաստել է, որ իր այցը Հայաստան խորհրդանշում է հայ-իտալական ջերմ բարեկամությունը եւ որ իր հանդիպումները մեկ անգամ եւս փաստում են հայ-իտալական բարեկամության բարձր մակարդակը։ Կողմերը քննարկել են նաեւ մերօրյա հակամարտությունների, մասնավորապես Միջին Արեւելքում տեղ գտած զարգացումների խնդիրը եւ իբրեւ աշխարհում խաղաղության հաստատման կարեւոր գործոն մատնանշել են միջկրոնական երկխոսության եւ հարաբերություններ ծավալման կարեւորությունը, որի հոլովույթում կարեւորվել է նաեւ Եկեղեցիների առաքելությունը[36]*։*

Այդ ամենը թույլ է տալիս պնդել, որ տարբեր երկրների քաղաքական ղեկավարների հետ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումները եւ քննարկումները սոսկ պատմություն չեն, այլ Հայ եկեղեցու ոգու եւ նրա Հովվապետի հավատամքի դրսեւորումն են միջազգային ասպարեզում, որի շնորհիվ հանրաճանաչ է դառնում ե՛ւ հայ ժողովրդի քրիստոնեական ինքնությանը, ե՛ւ Հայաստան երկիրը։ Դրանով իսկ Հայոց Հովվապետի բազմաշխատ ջանքերով Հայ Առաքելական Եկեղեցին

[36] http://ter-hambardzum.net/, *31 հուլիսի 2018 թ.։*

ոչ միայն նպաստում է հայ ժողովրդի բարոյական մղումների եւ պատմական հարուստ ավանդույթների միջազգայնացմանը, այլեւ Հայաստանի Հանրապետության զորացման ու շենացման պարտքի ու պատասխանատվության բարձրացմանը։ Ըստ էության այդ հանդիպումները մի հարթակ են եղել, որն Ամենայն Հայոց Կաթողիկոսին օգտագործել է նաեւ բարձրաձայնելու համազգային այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են Հայոց Ցեղասպանության ճանաչումը եւ դատապարտումը եւ Արցախյան հիմնահարցի արդարացի լուծումը։

Այդ հանդիպումների ընթացքում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը եւ համայն հայության շնորհակալությունն է հայտնել այն երկրների ղեկավարներին եւ ժողովուրդներին, որոնք իբրեւ մարդկության դեմ ուղղված ոճիր պաշտոնապես ընդունել եւ դատապարտել են Հայոց Ցեղասպանությունը[37]։ Այդ դատապարտությունը, վստահեցրել է Հայոց Կաթողիկոսը, հիմք է ծառայում նաեւ նման ոճիրների կանխարգելման գործում, քանզի, պնդել է նա, «...ոճիրի դատապարտումն է այն ճանապարհը, որով պիտի կանխվեն դրանց հետագա կրկնությունները, բռնություններն ու ահաբեկչությունները»[38]։ Եւ համոզված, որ հայ ժողովրդի հավաքական հիշողության հնչեցումը, Հայոց ցեղասպանության միջազգային համընդհանուր ճանաչումն ու դատապարտումը «... դառնալու է մարդկային կամքի դրսեւորում, մերժելու բռնություններն ու պատերազմները»[39], Ամենայն Հայոց Կաթողիկոսը համազգային դատի պաշտպանությանը հետամուտ է նաեւ այն պատճառով, որ այլեւս «...ոչ մի ժողովուրդ էլ չտեսնի ցեղասպանության ողբերգությունը»[40]։

Այդ նպատակով նա Բուլղարիայի նախագահ Գ. Պրվանովի հետ զրույցում շեշտել է Հայոց ցեղասպանության դատապարտման կարեւորությունը, որպեսզի համայն աշխարհում այլեւս նման ահավոր ողբեր-

---

[37] *Այդ կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նամակ է հղել ԱՄՆ նախագահ Ջոզեֆ Բայդենին իր եւ ողջ հայ ժողովրդի անունից երախտագիտություն է հայտնել ապրիլքսանչորսյան ուղերձում վերջինիս արդարամիտ կեցվածքի եւ ԱՄՆ կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչման համար։ Վեհափառը այդ ճանաչման ուրույն կարեւորությունը շեշտել է նաեւ, հաշվի առնելով նույն Թուրքիայի սատարմամբ Ադրբեջանի կողմից Արցախի դեմ 2020 թ. աշնանը սանձազերծված բարբարոսական պատերազմը, որի հետեւանքների հաղթահարման հարցում Մայր Աթոռը ակնկալում է ողջ միջազգային հանրության շուտափույթ հումանիտար ներգրավումը,* http://ter-hambardzum.net/, *25 ապրիլի 2021 թ.։*

[38] *«Էջմիածին», 2004, Զ., էջ 20։*

[39] *«Էջմիածին», 2005, Զ., էջ16—17։*

[40] *Տե՛ս «Էջմիածին», 2005, Զ., էջ 16—17։*

գություններ թույլ չտրվեն[41]։ Հայրապետը Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության թագուհի Նորին Մեծություն Էլիզաբեթ Երկրորդին է ներկայացրել 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտության անհրաժեշտությունը[42]։ Երախտագիտություն է հայտնել ԱՄՆ Կոնգրեսի խոսնակ Նենսի Փելոսիին եւ կոնգրեսականներին, ովքեր հանձն են առել հանրայնացնել եւ հետամուտ լինել Հայոց Ցեղասպանության ճանաչմանը[43]։ Ավստրիայի Հանրապետության նախագահ Թոմաս Կլեստիլին է ներկայացրել 1915 թ. Հայոց ցեղասպանության դատապարտման հրատապությունը[44]։ Բրազիլիայի փոխնախագահ Միշել Թեմերի հետ հանդիպմանը հիմնավորել է Հայոց ցեղասպանության դատապարտման կարեւորությունը եւ այլն եւ այլն[45]։

Տարբեր երկրների օրենսդիր եւ գործադիր իշխանությունների ղեկավարների հետ հանդիպումներում Վեհափառ Հայրապետը քննարկել է նաեւ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման եւ արդարացի լուծման անհրաժեշտությունը։ Նա կարեւորել է Ֆրանսիայի եւ նրա նախագահի դերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդրի խաղաղ կարգավորման գործընթացում[46]։ Ավստրիայի Հանրապետության նախագահ Թոմաս Կլեստիլին է ներկայացրել Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հրատապությունը[47]։ Շնորհակալություն է հայտնել Ֆինլանդիայի նախագահին այն նպաստի համար, որ այդ երկիրը բերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման խնդրում[48]։ Շվեյցարիայի Համադաշնության նախագահ Միշելին Կալմի-Ռեյի հետ կարեւորել է տարածաշրջանում խաղաղության պահպանման եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը[49]։ Իր գնահատանքն է արտահայտել Իտալիայի նախագահ Սերջիո Մատարելլային՝ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցում երկրի իշխանությունների

[41] Տե՛ս «Էջմիածին», 2002, Զ.–Է., էջ 9։
[42] Տե՛ս «Էջմիածին», 2004, Զ., էջ 16։
[43] «Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 25։
[44] Տե՛ս «Էջմիածին», 2001, Ժ.–ԺԱ., էջ 29։
[45] Տե՛ս «Էջմիածին», 2011, Ե., էջ 17։
[46] «Էջմիածին», 2006, Ժ.–ԺԱ., էջ 7։
[47] Տե՛ս «Էջմիածին», 2001, Ժ.–ԺԱ., էջ 29։
[48] «Էջմիածին», 2005, Թ., էջ 158։
[49] «Էջմիածին», 2011, Գ., էջ 8–9։

դրսեւորած հստակ կեցվածքի առնչությամբ[50]։ Գարեգին Բ. Կաթողիկոսը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնահարցը քննարկել է նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ[51]։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներդրումն անուրանալի է նաեւ հետխորհրդային Հանրապետությունների հետ երկկողմ հարաբերությունների եւ համագործակցության, ժողովուրդների խաղաղ գոյակցության եւ դրացիական համակեցության, հետխորհրդային երկրներում հայկական համայնքների եւ թեմերի նկատմամբ Մայր Աթոռի հոգեւոր եւ վարչական ամբողջական ու լիարժեք առաջնորդության գործում։ Այդ համապատկերում կարեւոր ներդրում են նաեւ Գարեգին Բ. Կաթողիկոսի հանդիպումները եւ արդյունավետ քննարկումները Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի եւ Բալթյան երկրների՝ Էստոնիայի, Լիտվայի եւ Լատվիայի նախագահների հետ։

Վրաստանի Հանրապետության նախագահներ Էդուարդ Շեւարդնաձեի[52], Միխայիլ Սահակաշվիլիի[53], Գիորգի Մարգվելաշվիլիի[54] եւ Սալոմե Զուրաբիշվիլիի[55] հետ Գարեգին Բ. Կաթողիկոսի հանդիպումների ընթացքում փաստվել է Հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Հայաստանի եւ Վրաստանի Հանրապետությունների «եղբայրական եւ սիրո» փոխհարաբերությունները, բարձր է գնահատվել վիրահայոց համայնքի դերը վրաց հասարակական կյանքում։ Կողմերը մատնանշել են նաեւ այդ գործում Հայ եւ Վրաց Եկեղեցիների պատմական դերը, ուրվագծել դրացիական այն հեռանկարները, որոնք կարող են կյանքի կոչվել այդ փոխհարաբերություններում։ Հանդիպումների ընթացքում Վեհափառը բարձրաձայնել է նաեւ վիրահայությանը եւ վիրահայոց թեմին հուզող խնդիրները։

Այդ դիտանկյունից բնորոշ է Վրաստանի Հանրապետության վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի հետ Նորին Սրբության հանդիպումը, որի ընթացքում Հայոց Հայրապետը անդրադարձել է Վրաստանում հայկական պատմական սրբավայրերի պատշաճ պահպանության ու վերականգնման, ինչպես նաեւ հայ համայնքի հոգեւոր կարիքների բավարարման

---

[50] http://ter-hambardzum.net/, *31 հուլիսի 2018 թ.։*

[51] *«Էջմիածին», 2010, Դ., էջ 31–32։*

[52] *Տե՛ս «Էջմիածին», 2000, Ե., էջ 9։*

[53] *Տե՛ս «Էջմիածին», 2004, Բ.–Գ., էջ 3-),* երկրորդ անգամ՝ *«Էջմիածին», 2011, Զ., էջ 6։*

[54] *Տե՛ս «Էջմիածին», 2014, Բ., էջ 4։*

[55] *Տե՛ս* http://ter-hambardzum.net/, *14 մարտի 2019 թ.։*

համար անհրաժեշտ մի շարք հայկական եկեղեցիներ Վիրահայոց թեմին վերադարձնելու խնդրին։ Վիրահայոց համայնքի անունից Նորին Սրբությունը դիմել է Բ. Իվանիշվիլիին, խնդրանքով որ Վրաստանի հայկական դպրոցներում դասավանդվի «Հայ ժողովրդի պատմություն» առարկան։ Անդրադառնալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձրացրած խնդիրներին՝ վարչապետը հավաստել է, որ անձնապես հանձն է առնում եկեղեցիների նորոգությունը եւ բոլոր անհրաժեշտ քայլերն անմիջապես կձեռնարկվեն հայկական եկեղեցիների պահպանության ուղղությամբ։ Վարչապետն ընդառաջել է նաեւ «Հայ ժողովրդի պատմություն» առարկայի դասավանդումը հայկական դպրոցներում կազմակերպելու հարցին[56]*։*

Բավականին արդյունավետ է եղել նաեւ Հայոց Կաթողիկոսի հանդիպումը Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի հետ։ Կողմերը գոհունակությամբ վկայել են երկու երկրների եւ ժողովուրդների դարավոր բարեկամական կապերի ամրապնդումը։ Գարեգին Բ. Հայրապետը երախտագիտությամբ է նշել Ուկրաինայի հայազգի քաղաքացիների նկատմամբ պետության ցուցաբերած ուշադրությունը։ Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ ուկրաինահայ համայնքի ազգային-հոգեւոր կյանքի հրատապ հարցերին։ Քննարկումների արդյունքում դրական քայլեր են կատարվել հայկական եկեղեցիների եւ եկեղեցաշինության հետ կապված խնդիրները, այդ թվում՝ մայրաքաղաք Կիեւում հայկական նոր եկեղեցու կառուցման նպատակով հողահատկացման հարցը լուծելու գործում[57]*։*

Արդյունավետ է եղել նաեւ Մոլդովայի Հանրապետության նախագահ Վորոնինի հետ Վեհափառ Հայրապետի հանդիպումը։ Կողմերն անդրադարձել են հայ-մոլդովական բարեկամության ավանդական կապերին, երկու երկրների եւ ժողովուրդների մերօրյա հարաբերություններին։ Կողմերն անդրադարձել են նաեւ Մոլդովայի հայ համայնքի եւ եկեղեցական կյանքին վերաբերող հրատապ խնդիրներին։ Ընդառաջելով Վեհափառ Հայրապետին, Մոլդովայի նախագահը խոստացել է ըստ ամենայնի աջակցել տեղի հայ համայնքի խնդիրների լուծմանը, որպեսզի Հայ Եկեղեցու հովվական գործունեությանը վարչական որեւէ արգելք չխոչընդոտի[58]*։*

---

[56] *Մանրամասները տես «Էջմիածին», 2013, Ա., էջ 12–13։*

[57] *«Էջմիածին», 2002, Ժ., էջ 15։*

[58] *«Էջմիածին», 2008, ԺԱ., էջ 13։*

Էստոնիայի Հանրապետության նախագահ Առնոլդ Ռյուցտելի[59], Լիտվայի Հանրապետության նախագահներ Ռոլանդաս Պակսասի[60], Վալդաս Ադամկուսի[61] եւ Գիտանաս Նաուսեդայի[62], ինչպես նաեւ Լատվիայի Հանրապետության նախագահ Վալդիս Զատլերսի[63] հետ հանդիպումների ընթացքում Վեհափառը գոհունակությամբ է արձանագրել Հայաստանի եւ Բալթյան երկրների ու ժողովուրդների միջեւ օրեցօր զարգացող եւ ամրապնդվող բարեկամական կապերն ու փոխգործակցությունը։

Ամենայն Հայոց Հայրապետը նաեւ իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնել Էստոնիայի, Լիտվայի եւ Լատվիայի նախագահներին եւ իշխանություններին՝ տեղի հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգածության համար։ Նա ուրախությամբ է արձանագրել, որ այդ երկրներում բարելավվում է բնակվող հայերի ազգային-հոգեւոր կյանքը, որ հայկական համայնքները քրիստոնյա եղբայրների հետ միասին ապրում են համերաշխ, եղբայրական սիրով՝ ունենալով բոլոր ազատություններն ու հնարավորությունները կազմակերպելու իրենց հոգեւոր, ազգային ու մշակութային կյանքը։ Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ Եկեղեցու հասարակական կարեւոր դերին, միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններին, ինչպես նաեւ խոսվել է աշխարհում խաղաղության, ժողովուրդների միջեւ եղբայրության եւ սիրո հաստատման գործում քրիստոնեական Եկեղեցիների ջանքերի մասին։ Այդ հանդիպումների եւ քննարկումների արդյունքում էլ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմից առանձնացվելով՝ 2020 թ. Հայրապետական սրբատառ կոնդակով ստեղծվել է Բալթյան երկրների հայոց թեմը՝ առաջնորդանիստ կենտրոն ունենալով Ռիգա քաղաքը[64]։

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունն է արտահայտել նաեւ Բալկանյան երկրների հետ նախագահների մակարդակով սկսված երկկողմ հարաբերությունների եւ նախանշվող համագործակցության, ժողովուրդների խաղաղ գոյակցության եւ դրացիական համակեցության, մի-

---

[59] Տե՛ս «Էջմիածին», 2004, ԺԱ.–ԺԲ., էջ 14։

[60] Տե՛ս «Էջմիածին», 2003, Թ., էջ 132։

[61] Տե՛ս «Էջմիածին», 2006, Դ., էջ 24։

[62] Տե՛ս http://ter-hambardzum.net/, 25 ապրիլի 2021 թ.։

[63] «Էջմիածին», 2009, ԺԲ., էջ 7։ Լատվիայի նախագահի հետ Վեհափառ Հայրապետի երկրորդ հանդիպման մասին տե՛ս «Էջմիածին», 2011, Զ., էջ 47։

[64] Տե՛ս http://ter-hambardzum.net/, 24 հունվարի 2020 թ.։

ջեկեղեցական հարաբերություններում եկեղեցիների համագործակցության, խաղաղ աշխարհի կառուցման գործում հոգեւոր առաջնորդների կարեւոր դերակատարության, այլ կրոնների հետ խաղաղ գոյակցության պատմական փորձառության, միջկրոնական երկխոսության մեջ ներգրավվածության, հայկական մշակույթի, համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի կարեւոր ներդրման, եւրոպական արժեհամակարգի եւ հրատապ այլ հարցերի վերաբերյալ, որոնք էլ հանդիսացել են Խորվաթիայի Հանրապետության նախագահ Ստեպան Մեսիչի[65], Սերբիայի Հանրապետության նախագահ Բորիս Տադիչի[66] եւ Սլովենիայի Հանրապետության նախագահ Դանիլո Թյիրկի հետ[67] քննարկումների առարկան։ Հայոց Կաթողիկոսն, անդրադառնալով պետությունների եւ ժողովուրդների միջեւ ստեղծված եղբայրական ջերմ կապերին, հույս է հայտնել, որ ի շահ հայ եւ բալկանյան բարեկամ քրիստոնյա ժողովուրդների բարօրության ապագայում առավել կզորանան ու կամրապնդվեն երկրների միջեւ կապերը։

Սփյուռքահայ թեմերի նկատմամբ Մայր Աթոռի հոգեւոր եւ վարչական ամբողջական ու լիարժեք առաջնորդության, ինչպես նաեւ բազմահարթ կրոնական տարածության մեջ գործող հայկական սփյուռքի առջեւ կանգնած ազգամիջյան, միջհավատքային եւ միջկրոնական հարաբերությունների իմաստավորման գործում ուրույն դեր են կատարել նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումներն ու քննարկումները Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայի պետական իշխանության բարձրագույն ներկայացուցիչների հետ։

Միացյալ Նահանգներ կատարած Հովվապետական անդրանիկ այցելության ժամանակ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշ Կրտսերի[68] եւ ԱՄՆ Կոնգրեսի խոսնակ Նենսի Փելոսիի հետ հանդիպումների ժամանակ իր գնահատանքն է հայտնել ԱՄՆ իշխանություններին հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հարգանքի եւ հոգածության համար, որի շնորհիվ ամերիկաբնակ հայորդիները հնարավորություն ունեն ազատորեն դավանելու իրենց քրիստոնեական հավատը։ Կողմերը կարեւորել են նաեւ Հայաստանի վերակառուցման

---

[65] *«Էջմիածին», 2009, Ե., էջ 11։*
[66] *«Էջմիածին», 2009, Է., էջ 8։*
[67] *«Էջմիածին», 2010, Ժ., էջ 7–8։*
[68] *Տե՛ս «Էջմիածին», 2001, Ե., էջ 27։*

գործում ԱՄՆ օգնությունը, մատնանշել ԱՄՆ ջանքերը հարավկովկասյան տարածաշրջանում կայուն եւ ապահով միջավայրի հաստատման գործում[69]։ Եկեղեցական արարողությունների եւ հայկական համայնքի հետ հանդիպումների ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ հավաստել է, որ ԱՄՆ լիիրավ քաղաքացիներ լինելով, ամերիկահայ համայնքները ամերիկյան ազատ կյանքի պայմաններում պահպանել են իրենց հավատքը եւ ազգային սովորությունները։ Նա բարձր է գնահատել նաեւ այն պարագան, որ քրիստոնյա հայի իրենց նկարագրով ամերիկահայերը հարգանք ու վստահություն են վայելում այդ հզոր երկրում եւ իրենց ազնիվ ու գնահատելի ներդրումն են բերում ինչպես ամերիկյան կյանքին, այնպես էլ հայ-ամերիկյան դրացիական հարաբերությունների զորացման գործին։

Կանադայի վարչապետ Ժան Կրեթյենի հետ հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց վարչապետին՝ Կանադայի հայության նկատմամբ դրսեւորած իր հոգածու եւ ուշադիր վերաբերմունքի համար։ Վարչապետը եւս իր ուրախությունը հայտնեց հանդիպման համար՝ ողջունելով Վեհափառ Հոր ներկայությունը Կանադայում եւ հայտնելով իր շնորհակալությունը, որ հայությունը գործուն մասնակցություն է բերում երկրի բարգավաճման գործին[70]։

Ուրուգվայի Հանրապետության նախագահ Խորխե Բարժե Իբանիեզիի հետ հանդիպմանը Հայոց Հայրապետը բարձր է գնահատել Ուրուգվայի իշխանությունների հոգածությունը հայ համայնքի եւ Հայոց Եկեղեցու հանդեպ։ Փոխադարձաբար կարեւորվել է նաեւ բազմազգ երկրում ազգային-մշակութային արժեքների պահպանումը եւ փոխհարստացումը։ Ուրուգվայի նախագահը հավաստել է նաեւ, որ այս հանդիպումը իր կարեւոր նպաստը պետք է բերի Հայաստանի եւ Ուրուգվայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հետագա ընդլայնմանը եւ զորացմանը[71]։ Ուրուգվայի նախագահ Խոսե Մուխիկան, մատնանշելով Ուրուգվայի Հանրապետությունում բնակվող հայորդիների բերած մեծ ջանքերն ու երկրի առաջընթացի, բարօրության ու բարգավաճման գործում ունեցած ներդրումը, իր մեծ հարգանքն ու սերն է արտահայտել հայ ժողովրդի

---

[69] *«Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 25։*
[70] *«Էջմիածին», 2001, Ե., էջ 21։*
[71] *Տե՛ս անդ, էջ 28։*

նկատմամբ եւ նշել է, որ մեծապես տպավորված է հայ մշակույթով։ Իր հերթին Վեհափառ Հայրապետը բարձր է գնահատել Ուրուգվայի իշխանությունների շարունակական սատարումն ու աջակցությունը հայ համայնքին եւ Ուրուգվայի Հայոց թեմին[72]։

Հավաստելով, որ Մեծ եղեռնից հետո Արգենտինան երկրորդ հայրենիք է դարձել «այստեղ ապաստանած հայերի եւ նրանց այսօրվա սերունդների համար», Վեհափառ Հայրապետը Արգենտինայի Հանրապետության նախագահ Նեստոր Քիրշների հետ հանդիպմանը բարօրություն եւ բարգավաճում է մաղթել այդ հյուրընկալ երկրին։ Նախագահը բարձր է գնահատել երկրի կյանքում արգենտինահայության կարեւոր ներդրումը եւ ունեցած դերը[73]։ Իսկ Արգենտինայի նախագահ տիկին Քրիստինա Կիրշների հետ հանդիպմանը Հայոց Հայրապետը գնահատանքով է անդրադարձել Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը Արգենտինայի Խորհրդարանում եւ Սենատում եւ գոհունակություն է հայտնել նախագահին Արգենտինայի հայ համայնքի վերաբերյալ գնահատանքի խոսքերի համար։

Իսկ Բրազիլիայի փոխնախագահ Միշել Թեմերի հետ հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձել է Հայաստանի եւ Բրազիլիայի միջեւ ամրացող հարաբերություններին։ Հայ համայնքի հանդեպ բարյացակամ վերաբերմունքի եւ մշտապես դրսեւորվող աջակցության համար Վեհափառն իր գնահատանքն է բերել Բրազիլիայի իշխանություններին, հավաստելով, որ դրա շնորհիվ բրազիլահայերը կազմակերպել են իրենց ազգային-եկեղեցական կյանքը եւ ոչ միայն մեծ ներդրում ունեն երկրի առաջընթացի ու բարգավաճման, այլեւ՝ հայ-բրազիլական հարաբերությունների սերտացման շնորհակալ գործում։ Բրազիլիայի փոխնախագահը, ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Բրազիլիա, վստահություն է հայտնել, որ այն մեծապես պիտի նպաստի երկու երկրների ու ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդմանը եւ համագործակցության առավել արգասավորմանը։

Ամենայն Հայոց Հայրապետը համանման հարցեր է քննարկել նաեւ Չիլիի նախագահ Միգել Խուան Պիներայի հետ հանդիպման ընթացքում[74]։

---

[72] *Անդ, էջ 18–19։*

[73] *Անդ, էջ 43։*

[74] *Տե՛ս «Էջմիածին», 2011, ե., էջ 36։*

Այդ ամենը թույլ է տալիս պնդել, որ վերոբերյալ եւ բարձր մակարդակի այլ հանդիպումների ընթացքում մասնակից պետական այրերը գնահատանքով ու հարգանքով են հավաստել Հայոց Հայրապետի եկեղեցաշեն, հայրենաշեն եւ խաղաղարար գործունեությունը, անձնական անուրանալի ներդրումը միջպետական հարաբերությունների ամրապնդման եւ զարգացման, միջեկեղեցական եւ էկումենիկ հարաբերությունների ծավալման գործում։ Պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ հանդիպումների ընթացքում մեծապես կարեւորվել է նաեւ տարբեր երկրներում հայկական համայնքների պահպանման խնդիրը, որը հիմնականում իրականացվում է Հայ Առաքելական Եկեղեցու, ինչպես նաեւ տեղերի հայկական եկեղեցական հաստատությունների միջոցով։

Այդ հանդիպումների ընթացքում բարձր է գնահատվել նաեւ Հայոց Հայրապետի գործուն դերը կրոնների երկխոսության եւ միջկրոնական հարաբերությունների ծավալման գործում։

Փաստերը վկայում են, որ Գարեգին Բ. Կաթողիկոսը կրոնների երկխոսության եւ միջկրոնական հարաբերությունների հիմնախնդիրների լուծման գործընթացի անքակտելի տարրեր է համարել դավանական հանդուրժողականությունը, փոխվստահությունն ու փոխադարձ հարգանքը, ինչպես նաեւ հավասարազորության զգացումը։ Այդ կապակցությամբ Վեհափառը նկատում է, որ կրոնական առաջնորդներից «...յուրաքանչյուրը ցանկանում է հարթված տեսնել իր մտահոգությունները, լուծված՝ իր դժվարությունները։ Սակայն արդի դարի փոխշաղկապված իրականության մեջ դրանք, որքան էլ առանձնակի ու յուրահատուկ, այնքան էլ հարաբերված են նաեւ, ու նրանց կարգավորման բոլոր խնդիրները պետք է առաջնորդվեն միայն խաղաղ ուղիներով, օրինականության, արդարության եւ իրավունքի հարգումով»[75]։ Այդ հոլովույթում Վեհափառ Հայրապետը միանգամայն հիմնավոր վստահեցնում է, որ միջկրոնական գործակցության ոլորտում Հայ Եկեղեցու պատմական փորձը կարող է մեծապես օգտակար լինել խաղաղության ամրապնդման, միջկրոնական տարաձայնությունների հարթման, մշակութային եւ հոգեւոր համագործակցության ոլորտներում արդյունավետ միջոցներ որոնելու եւ ներդնելու գործում։

---

[75] *«Էջմիածին», 2004, Բ.–Գ., էջ 9–10։*

Այս վերջինս կարելի է փաստել կրոնների երկխոսության, միջկրոնական գործակցության, քրիստոնյա եւ իսլամադավան ժողովուրդների փոխհամաձայնության եւ համակեցություն համապատկերում մեծ կարեւորություն ներկայացնող իսլամադավան երկրների ղեկավարների հետ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումների օրինակով։ Հատկանշական է նաեւ այն, որ հարցի կարեւորությամբ թելադրված իսլամադավան երկրների պետական այրերի հետ հանդիպումներին զուգընթաց երկխոսության եւ միջկրոնական հարաբերությունների ծավալման նպատակով Վեհափառը հանդիպումներ է ունեցել նաեւ այդ երկրների հոգեւոր առաջնորդների հետ։

Այդ հոլովույթում Հայոց Նվիրապետը շնորհակալ հոգով իր բարեմաղթանքներն ու օրհնությունն է բերել իսլամադավան հյուրընկալ երկրների քաղաքական ու կրոնական իշխանություններին եւ հավատավոր իսլամ ժողովրդին՝ հայերի նկատմամբ իրենց ազնիվ ու բարի վերաբերմունքի համար, ինչը մեկ անգամ եւս վկայում է, որ «Հավատքի, բարության, կարեկցության ներուժը, որ ընդհանուր է քրիստոնեության եւ իսլամի համար, կարող է եւ պետք է հաշտեցնող հզոր ուժ դառնա»[76]։ Նա վկայել է նաեւ, որ հայ համայնքների նկատմամբ ցուցաբերված այդ բարյացակամ եւ եղբայրական վերաբերմունքը միանգամայն բնականոն ճանապարհով արժանացել է նաեւ հայորդիների սիրուն ու գնահատանքին։

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մոհամմադ Խաթամիի հետ հանդիպման ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուրախությամբ է նշել, որ Իրանի հետ Հայաստանի հարաբերությունները նոր զարգացում եւ առաջընթաց են ապրում եւ մաղթել է, որ դրանք առավել ամրապնդվեն եւ զորանան ի փառս Աստծու եւ ի բարօրության մեր երկու բարեկամ ժողովուրդների։ Նա շեշտել է նաեւ դարերի ընթացքում Իրանի իշխանությունների բարեխնամ վերաբերմունքը Մայր Աթոռի

---

[76] *«Էջմիածին», 2000, ԺԱ., էջ 24։ Փաստերը թույլ են տալիս պնդելու, որ բանակցող հոգեւոր առաջնորդները հանուն «արդար խաղաղության» եւ «ընդունելի համաձայնության» միջկրոնական համագործակցության եւ երկխոսության անհրաժեշտությունը առաջին հերթին տեսնում են այն բանում, որ «Կրոնը իր զինանոցում չունի քաղաքական, տնտեսական կամ ուժային միջոցներ՝ հակամարտության կողմերի վրա ազդելու համար։ Նրա զենքը եւ ուժը Բարձրյալ Արարչի օրհնությամբ սրբագործված խոսքն է., սիրո եւ ճշմարտության խոսքը։ Մեր բարեգութ եւ ողորմած Տերը խրատում է քրիստոնյաներին. «Խաղաղության մեջ եղեք բոլոր մարդկանց հետ», եւ կոչ է անում մուսուլմաններին. «Մարդիկ, խաղաղության մեջ մտեք», անդ։*

հանդեպ եւ գոհունակություն է հայտնել այն ուշադրության եւ հոգատարության համար, որ Իրանի իշխանությունները հարյուրամյակներ շարունակ դրսեւորել են հայ համայնքի հանդեպ՝ հնարավորություն ընձեռելով, որ այն ազատորեն ապրի իր ազգային մշակութային ու հոգեւոր կյանքով։ Կողմերը կարեւորել են նաեւ հոգեւոր առաջնորդների դերն ու առաքելությունը տարածաշրջանային խնդիրների լուծման գործում[77]։

Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի հետ հանդիպման ընթացքում եւս Վեհափառ Հայրապետը բարձր է գնահատել երկու երկրների միջեւ առկա եղբայրական ջերմ հարաբերությունները եւ վստահություն է հայտնել, որ Թուրքմենստանի նախագահի այցը Հայաստան նոր խթան պիտի հանդիսանա հարաբերությունների առավել սերտացման եւ զարգացման համար։ Նա իր գնահատանքն է հայտնել Թուրքմենստանի նախագահին՝ հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար եւ ջերմ վերաբերմունքի համար, որի արդյունքում հայ ժողովրդի զավակները կարողանում են կազմակերպել նաեւ իրենց հոգեւոր ու մշակութային կյանքը։ Այս առիթով Վեհափառը դիմել է Թուրքմենստանի նախագահին՝ հնարավորություն ընձեռել վերականգնելու Թուրքմենբաշիի խորհրդային տարիներին ավերված հայկական եկեղեցին, ինչը կնպաստի Հայ Եկեղեցու լիարժեք գործունեությանը Թուրքմենստանի հայ համայնքի կյանքում եւ նոր մակարդակի կբարձրացնի երկու երկրների միջկրոնական երկխոսությունը։ Ի պատասխան՝ Թուրքմենստանի նախագահը հանձնարարական է տվել հանդիպմանը ներկա Թուրքմենստանի կառավարության ներկայացուցիչներին՝ քննարկելու հարցը եւ դրական լուծում տալու Հայ Եկեղեցու խնդրին։ Նա նաեւ Թուրքմենստան այցելելու հրավեր է ուղղել Ամենայն Հայոց Կաթողիկոսին[78]։

Ի խնդիր ժողովուրդների համար ավելի խաղաղ, ապահով ու բարօր կյանքի կերտման՝ կրոնների եւ մշակույթների երկխոսության դերը կարեւորվել է նաեւ Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպման ընթացքում։ Կողմերը մեծ նշանակություն են վերագրել նաեւ երկու ժողովուրդների փոխայցելություններին եւ շփումներին, որոնք ավելի պիտի զորացնեն փոխվստահության եւ համագործակցության ոգին[79]։

---

[77] *«Էջմիածին», 2004, Թ.–Ժ., էջ 3։*
[78] *«Էջմիածին», 2012, ԺԱ., էջ 4։*
[79] *«Էջմիածին», 2010, Դ., էջ 32։*

Կրոնների երկխոսության եւ խաղաղ համակեցության անուրանալի օրինակ պետք է համարել արաբական երկրների պետական իշխանության ղեկավարների հետ Գարեգին Բ. Կաթողիկոսի հանդիպումները։ Այդ հանդիպումների ընթացքում հայոց բազմաշխատ Հովվապետն առաջնահերթություն է համարել նաեւ միջկրոնական հարաբերությունների եւ կրոնների երկխոսության հարցը։ Հարցի կարեւորությամբ թելադրված պետական այրերի հետ հանդիպումներին զուգընթաց նա հանդիպումներ է ունեցել նաեւ այդ երկրների կրոնական առաջնորդների հետ։ *Վեհափառ Հայրապետը շնորհակալ հոգով իր բարեմաղթանքներն ու օրհնությունն է բերել հյուրընկալ այդ երկրների քաղաքական ու կրոնական իշխանություններին եւ հավատավոր իսլամ ժողովրդին՝ հայերի նկատմամբ իրենց ազնիվ ու բարի վերաբերմունքի համար։ Ի թիվս այլ հարցերի նա հավաստել է, որ այդ բարյացակամ եւ եղբայրական վերաբերմունքն արժանացել է նաեւ հայորդիների սիրուն ու գնահատանքին։*

Հորդանանի Հաշիմյան թագավորության միապետ Աբդալլահ Բ. Հուսեյնի հետ հանդիպման ժամանակ Վեհափառը շնորհակալության ու երախտիքի խոսք է ուղղել Հաշիմյան բոլոր գահակալներին, որոնց հովանու ներքո օսմանցիների ջարդերից ու հալածանքներից մազապուրծ տարագիր հայերը պահպանել են իրենց ազգային ու եկեղեցական ավանդույթները[80]։ Հորդանանի միապետի եւ Հայոց Հայրապետի մեկ այլ հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը շնորհակալությամբ է հիշատակել հայ համայնքի եւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության նկատմամբ Հորդանանի իշխանությունների ցուցաբերած հոգատար վերաբերմունքը եւ այն որակել է որպես ձեւավորված բարեկամական հարաբերությունների լավագույն դրսեւորում[81]։

Անդրադառնալով պատմական հանգամանքների բերումով ձեւավորված հայկական մեծ սփյուռքի եւ զանազան մշակույթների ու կրոնների կողքին ապրելու իրողությանը՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը կրոնական զգացումների չարաշահումների հիման վրա ձեւավորված հակամարտություններից եւ անհանդուրժողականության դրսեւորումներից հասարակությունները զերծ պահելու համար մեծապես կարեւորել է նաեւ տարբեր երկրների հոգեւոր առաջնորդների միջեւ սերտ համագործակցությունը։ Նա հավաստել է նաեւ, որ Հայաստանի եւ Հորդանանի մի-

---

[80] *«Էջմիածին», 2000, Ա., էջ 35։*

[81] *Տե՛ս* http://ter-hambardzum.net/, *11 փետրվարի 2020 թ.։*

ջեւ հարաբերությունները եւ Հորդանանի հայ համայնքի կյանքը կարող են եղբայրության եւ խաղաղ համակեցության լավագույն օրինակը լինել շատ ազգերի համար՝ քրիստոնեություն-իսլամ եւ այլ միջկրոնական հարաբերությունների կառուցման գործում[82]։

Անդրադառնալով հայ համայնքի կարեւոր դերակատարությանը Հորդանանում եւ Մերձավոր Արեւելքի երկրներում՝ թագավոր Աբդալլահ Երկրորդը հույս է հայտնել, որ Հայաստանի հետ կապերի զարգացմամբ կզորանա նաեւ Հորդանանի հայ համայնքը։ Նա վերահաստատել է նաեւ իր պատրաստակամությունը՝ շարունակելու զորակցությունը Հայոց Եկեղեցուն եւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը։ Նա նաեւ մտահոգությամբ է խոսել Մերձավոր Արեւելքի իրավիճակի, քրիստոնեական ներկայության նվազման խնդրի եւ մասնավորապես Սիրիայի հայկական համայնքի մասին եւ պատրաստակամություն է հայտնել անհրաժեշտ զորակցություն ցուցաբերել հայկական քրիստոնեական ներկայության պահպանման ուղղությամբ[83]։

Հայ եւ արաբ ժողովուրդների դարավոր բարեկամության, քրիստոնեություն-իսլամ երկխոսության, Հայ Եկեղեցու միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերությունների հարցերը քննարկվել են նաեւ Լիբանանի Հանրապետության նախագահների հետ Գարեգին Բ. Կաթողիկոսի հանդիպումների ընթացքում։

Նախագահ Էմիլ Լահուդի հետ հանդիպմանը փաստվել է երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը։ Լիբանանի նախագահը բարձր է գնահատել հայերի, որպես Լիբանանի լիարժեք քաղաքացիների կարեւոր ներդրումը երկրի կյանքում[84]։ Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Սլեյմանի հետ հանդիպման ժամանակ կողմերը մեկ անգամ եւս հաստատել են երկու ժողովուրդների բարեկամությունը եւ փաստել են, որ այսօր Հայաստանի եւ Լիբանանի միջեւ հարաբերությունները զարգանում են դարավոր այդ բարեկամության ոգուն համահունչ։ Իր հերթին Լիբանանի նախագահը գնահատանքով է անդրադարձել հայերի պատմական ներկայությանը Լիբանանում եւ երկրի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում կարեւոր ծառայությանը[85]։

---

[82] *Տե՛ս անդ։*

[83] *Տե՛ս անդ։*

[84] *Մանրամասները տե՛ս «Էջմիածին», 2001, Ե., էջ 44–45։*

[85] *Մանրամասները տե՛ս «Էջմիածին», 2011, ԺԲ., էջ 5*

Արդեն Գարեգին Բ. Կաթողիկոսի եւ Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Աունի հետ հանդիպման ընթացքում մեկ անգամ եւս վերահաստատվել է, որ հայ-լիբանանյան սերտ կապերն ունեն պատմական խոր արմատներ՝ ամրորեն խարսխված փոխադարձ վստահության վրա եւ վայելում են երկրի իշխանությունների հարգանքն ու հոգածու վերաբերմունքը։ Նախագահ Աունը մատնանշեց նաեւ Լիբանանի հայկական համայնքի մեծ ներդրումը երկրի կյանքում, տնտեսական, մշակութային, կրթական եւ այլ ոլորտներում։ Կողմերը կարեւորել են նաեւ կրոնների եւ հոգեւոր առաջնորդների խաղաղասիրական առաքելության դերը[86]։

Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար Ալ-Ասադի հետ հանդիպումների ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ուրախությունն է հայտնել, որ երկու երկրների միջեւ բազմադարյա հարաբերություններն անխաթար կերպով, բարեկամական նույն ջերմ զգացումներով շարունակվում եւ առավել ամրապնդվում են նոր համագործակցությամբ եւ իրագործումներով։ Նա բարձր է գնահատել Սիրիայի ժողովրդի հյուրընկալ ոգին եւ իշխանությունների հոգատար վերաբերմունքը սիրիաբնակ հայորդիների նկատմամբ՝ հավելելով, որ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա Սիրիայի եղբայր ժողովրդի աջակցությունը, որ ցուցաբերվեց Մեծ եղեռնից մազապուրծ եղած հազարավոր հայերի հանդեպ։ Հայոց Հայրապետը աշխարհի առջեւ ծառացած հիմնախնդիրների լուծման գործում կարեւորել է նաեւ միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերությունների դերը եւ հոգեւոր առաջնորդների համերաշխ համագործակցությունը ի սեր ժողովուրդների բարօրության։ Բաշար Ալ-Ասադը անդրադարձել է Սիրիայի կյանքում հայ ժողովրդի զավակների կարեւոր ներդրմանը եւ ընդգծել կրոնների կարեւոր առաքելությունը մարդկանց կյանքում[87]։ Երկրորդ հանդիպման ընթացքում եւս Բաշար Ալ-Ասադը մեծապես գնահատել է Սիրիայի ներքին կյանքում իրենց լուրջ ներդրումն ունեցած հայ համայնքի դերը եւ միջեկեղեցական ու միջկրոնական երկխոսությունների զարգացմանն ի շահ գործադրած Նորին Սրբության անձնական ջանքերը[88]։

Կրոնների երկխոսության, միջկրոնական գործակցության եւ քրիստոնյա-իսլամ ժողովուրդների համակեցության համապատկերում մեծ կա-

---

[86] http://ter-hambardzum.net/, *21 փետրվարի 2018 թ.։*

[87] *«Էջմիածին», 2009, Զ., էջ 9–10։*

[88] *«Էջմիածին», 2009, ԺԱ., էջ 21։*

բեւորություն է ներկայացնում նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումը Արաբական Միացյալ Էմիրությունների Բարձրագույն Խորհրդի անդամ, Շարժայի էմիր Շեյխ Սուլթան բին Մոհամմադ ալ Քասիմիի հետ։ Վեհափառը հայ համայնքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի եւ ուշադրության համար իր գոհունակությունն է հայտնել Արաբական Էմիրություններին եւ առանձնապես՝ ալ Քասիմիին՝ ընդգծելով նրա անմիջական աջակցությունը Շարժայում հայկական եկեղեցի հիմնելու եւ կառուցելու գործում։ Վեհափառը նաեւ իր երախտագիտությունն է հայտնել Շարժայի էմիրին՝ Հաղարծինի պատմական վանքի վերանորոգման աշխատանքները հովանավորելու համար։ Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը եւ Շարժայի էմիրը խոսել են նաեւ միջկրոնական երկխոսության կարեւորության, Արաբական Էմիրություններում այլ կրոնների եւ մշակույթների նկատմամբ ցուցաբերվող հանդուրժողականության, ինչպես նաեւ փոխադարձ սիրո եւ հարգանքի անհրաժեշտության մասին, որոնք խաղաղ եւ համերաշխ կյանքի գրավականն են[89]։

Այդ ամենի հիման վրա անդրադառնալով միջկրոնական հարաբերությունների եւ կրոնների երկխոսության ծավալման անհրաժեշտությունը, որպես օրինակ Վեհափառ Հայրապետը վկայակոչել է հայ ժողովրդի հանդեպ արաբ ժողովրդի եղբայրական սիրո եւ բարյացակամության արտահայտությունը եւ հյուրընկալ ոգին[90]։ Նա գոհունակությամբ է փաստել նաեւ այն իրողությունը, որ Մերձավոր Արեւելքի իսլամադավան երկրներում «…հայ ժողովրդի զավակները շարունակում են ապրել նույն եղբայրական մթնոլորտում՝ իրենց մահմեդական դրացիների հետ օրավուր զորացնելով այդ երկրներում կրոնական հանդուրժողականության եւ երկխոսության ոգին»[91]։ Եւ այդ հիման վրա անվերապահ մերժելի եւ դատապարտելի է համարել «…քրիստոնեական ու իսլամական կրոնների դարավոր խաղաղ համակեցությունը վտանգող քաղաքականացված ծայրահեղ իսլամական ռազմական խմբավորումների ու միավորումների գործողությունները Մերձավոր Արեւելքում, որոնք սպառնում են իսպառ ոչնչացնել թե՛ քրիստոնյա-իսլամ համայնքների համակեցության դարավոր ավանդույթը եւ թե՛ քրիստոնեական պատմական ներկայությունը տարածաշրջանում»[92]։

---

[89] *Մանրամասները տե՛ս «Էջմիածին», 2008, ԺԱ., էջ 35։*

[90] http://ter-hambardzum.net/, *21 փետրվարի 2018 թ.։*

[91] *«Էջմիածին», 2017, Գ., էջ 17։*

[92] *«Էջմիածին», 2017, Գ., էջ 17։*

ՀԱՎԵԼՎԱԾ

Համառոտ տեղեկագիր
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն
Հայոց Կաթողիկոսի բարձր մակարդակի հանդիպումների

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԵՒ ՓՈԽՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՏ

Հորդանանի հաշիմյան թագավորության թագավոր Ն. Վ. Աբդալլահ Բին Հուսեյնի հետ («էջմիածին», 2000, Ա., էջ 35–36), երկրորդ անգամ՝ (, 11 փետրվարի 2020 թ.)։

Պաղեստինի ազգային իշխանության նախագահ Յասեր Արաֆաթի հետ («էջմիածին», 2000, Ա., էջ 50–51)։

Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հետ («էջմիածին», 2000, Ե., էջ 9), Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլիի հետ («էջմիածին», 2004, Բ.–Գ., էջ 3–4), երկրորդ անգամ՝ *(«էջմիածին», 2011, Զ., էջ 6), Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլիի հետ («էջմիածին», 2014, Բ., էջ 4), Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի հետ (*http://ter-hambardzum.net/*, 14 մարտի 2019 թ.)։*

Ավստրիայի Հանրապետության նախագահ Թոմաս Կլեստիլի հետ («էջմիածին», 2001, Ժ.–ԺԱ., էջ 29), Ավստրիայի Հանրապետության նախագահ Հայնց Ֆիշերի հետ («էջմիածին», 2005, ԺԲ., էջ 3), երկրորդ անգամ՝ *(«էջմիածին», 2012, Զ., էջ 7)։*

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ («էջմիածին», 2001, ԺԲ., էջ 21), երկրորդ անգամ՝ *(«էջմիածին», 2006, Ժ.–ԺԱ., էջ 6–7), Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Նիկոլա Սարկոզիի հետ («էջմիածին», 2011, Ժ., էջ 8)։*

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ Կրտսերի հետ («էջմիածին», 2001, Ե., էջ 27, A Journey of Service and Friendship: The Ecumenical works of the Armenian Church, the Mother See of Holy Etchmiadzin, during the Pontificate of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, p. 74*)։*

*Լիբանանի Հանրապետության նախագահ գեներալ Էմիլ Լահուդի հետ («էջմիածին», 2001, Ե., էջ 44–45), Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Սլեյմանիի հետ («էջմիածին», 2011, ԺԲ., էջ 5), Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Աունի հետ (*http://ter-hambardzum.net/*, 21 փետրվարի 2018 թ.)։*

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ («Էջմիածին», 2001, Ժ.—ԺԱ., էջ 25), երկրորդ անգամ՝ *(«Էջմիածին», 2005, Բ.—Գ., էջ 15—16), Ռուսաստանի Դաշնության առաջին նախագահ Բորիս Ելցինի հետ («Էջմիածին», 2002, Ժ., էջ 14, Ս. Էջմիածին)։*

Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովի հետ («Էջմիածին», 2002, Զ.—Է., էջ 9), երկրորդ անգամ՝ *(«Էջմիածին», 2004, Թ.—Ժ., էջ 4), Բուլղարիայի Հանրապետության նախագահ Ռումեն Ռադեւի հետ (*http://terhambardzum.net/, *13 փետրվարի 2018 թ.)։*

Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուի հետ («Էջմիածին», 2000, Թ., էջ 16—17), Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուի հետ («Էջմիածին», 2001, Ժ.—ԺԱ., էջ 26), Ռումինիայի նախագահ Տրայան Բասեսկուի հետ («Էջմիածին», 2006, Ժ.—ԺԱ., էջ 8), Ռումինիայի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Կրին Անտոնեսկուի հետ («Էջմիածին», 2012, Ը., էջ 6—7)։

Ուկրաինայի Հանրապետության նախագահ Լեոնիդ Կուչմայի հետ («Էջմիածին», 2002, Ժ., էջ 15)։

*Լիտվայի Հանրապետության նախագահ Ռոնալդաս Պասկասի հետ («Էջմիածին», 2003, Թ., էջ 132), Լիտվայի Հանրապետության նախագահ Վալդաս Ադամկուսի հետ («Էջմիածին», 2006, Դ., էջ 24), Լիտվայի Հանրապետության նախագահ Գիտանաս Նաուսեդայի հետ (*http://terhambardzum.net/, *20 մայիսի 2022 թ.)։*

Ուրուգվայի Հանրապետության նախագահ Խորխե Բարժե Իբանիեզի հետ («Էջմիածին», 2004, Ե., էջ 28), Ուրուգվայի նախագահ Խոսե Մուխիկայի հետ («Էջմիածին», 2011, Ե., էջ 18—19)։

Արգենտինայի Հանրապետության նախագահ Նեստոր Քիրշների հետ («Էջմիածին», 2004, Ե., էջ 43), Արգենտինայի Հանրապետության նախագահ տիկին Քրիստինա Կիրշների հետ («Էջմիածին», 2011, Ե., էջ 31)։

Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության թագուհի Նորին Մեծություն Էլիզաբեթ Երկրորդի հետ («Էջմիածին», 2004, Զ., էջ 16), Ուելսի արքայազն Չարլզի հետ («Էջմիածին», 2013, Ե., էջ 6)։

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մոհամմադ Խաթամիի հետ («Էջմիածին», 2004, Թ.—Ժ., էջ 3)։

Էստոնիայի Հանրապետության նախագահ Առնոլդ Ռյույտելի հետ («Էջմիածին», 2004, ԺԱ.—ԺԲ., էջ 14)։

Լեհաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեխ Վալենսայի հետ («Էջմիածին», 2005, Դ., էջ 172), Լեհաստանի Հանրապետության նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկու հետ («Էջմիածին», 2011, Է., էջ 4–5)։

Ֆինլանդիայի Հանրապետության նախագահ Տարյա Հալոնենի հետ («Էջմիածին», 2005, Թ., էջ 158–159)։

Ղազախստանի Հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաևի հետ («Էջմիածին», 2006, Թ., էջ 18)։

Հնդկաստանի Հանրապետության նախագահ Աբդուլ Քալամի հետ («Էջմիածին», 2007, Բ.–Գ., էջ 15–16), Հնդկաստանի փոխնախագահ Բհստիոն Սինգհ Շեխավատի հետ («Էջմիածին», 2005, Ժ.–ԺԱ., էջ 4)։

*Հունաստանի Հանրապետության նախագահ Կարոլոս Պապուլիասի հետ («Էջմիածին», 2007, Զ.–Է., էջ 10–11), Հունաստանի Հանրապետության նախագահ Պրոկոպիոս Պավլոպուլոսի հետ (*http://ter-hambardzum.net/*, 6 նոյեմբերի 2019 թ.)։*

Մոլդովայի Հանրապետության նախագահ Վլադիմիր Վորոնինի հետ («Էջմիածին», 2008, ԺԱ., էջ 13)։

Կիպրոսի Հանրապետության նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասի հետ («Էջմիածին», 2009, Է., էջ 5–6)։

Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար Ալ-Ասադի հետ («Էջմիածին», 2009, Զ., էջ 9–10), երկրորդ անգամ *(«Էջմիածին», 2009, ԺԱ., էջ 21)։*

Խորվաթիայի Հանրապետության նախագահ Ստեպան Մեսիչի հետ («Էջմիածին», 2009, Ե., էջ 11)։

Սերբիայի Հանրապետության նախագահ Բորիս Տադիչի հետ («Էջմիածին», 2009, Է., էջ 8)։

Լատվիայի Հանրապետության նախագահ Վալդիս Զադլերսի հետ («Էջմիածին», 2009, ԺԲ., էջ 7), երկրորդ անգամ *(«Էջմիածին», 2011, Զ., էջ 47)։*

Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևի հետ («Էջմիածին», 2010, Դ., էջ 31–32)։

Սլովենիայի Հանրապետության նախագահ Դանիլո Թյուրկիի հետ («Էջմիածին», 2010, Ժ., էջ 7–8)։

Շվեյցարիայի Համադաշնության նախագահ տիկին Միշելին Կալմի-Ռեյի հետ («Էջմիածին», 2011, Գ., էջ 8–9)։

Բրազիլիայի փոխնախագահ Միշել Թեմերի հետ («էջմիածին», 2011, Ե., էջ 17)։

Չիլիի նախագահ Միգել Խուան Պինեռայի հետ («էջմիածին», 2011, Ե., էջ 36)։

Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի հետ («էջմիածին», 2012, ԺԱ., էջ 4)։

*Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ («էջմիածին», 2018, ԺԱ., էջ 24–25)։ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախկին նախագահ Յոհակիմ Գաուկի հետ (*http://ter-hambardzum.net/*, 20 հոկտեմբերի 2017 թ.)*, երկրորդ անգամ՝ *(*http://ter-hambardzum.net/*, 16 սեպտեմբերի 2019 թ.)*

*Իտալիայի Հանրապետության նախագահ Սերջիո Մատարելլայի հետ (*http://ter-hambardzum.net/*, 31 հուլիսի 2018 թ.)։*

*Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Անգելա Մերկելի հետ (*http://ter-hambardzum.net/*, 25 օգոստոսի 2018 թ.)։*

*Արաբական Միացյալ Էմիրությունների Գերագույն խորհրդի անդամ, Շարժայի կառավարիչ Նորին Մեծություն Շեյխ Սուլթան Բին Ահմեդ Ալ Քասիմիի հետ (*http://ter-hambardzum.net/*, 19 մայիսի 2019 թ.)։*

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*ՄԱԿ-ի նախագահ Քոֆի Անանի հետ ՄԱԿ-ի կենտրոնակայանում (*A Journey of Service and Friendship: The Ecumenical works of the Armenian Church, the Mother See of Holy Etchmiadzin, during the Pontificate of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, p. 73*), ՄԱԿ-ի նախագահ Պան Քի Մունի հետ («էջմիածին», 2007, ԺԱ., էջ 54)։*

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ս. Դիարայի հետ («էջմիածին», 2008, Ժ., էջ 6)։

ՄԱԿ ներկայացուցիչների հետ («էջմիածին», 2003, Է., էջ 123)։

ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատար Փիթեր Նիկոլաուսի հետ («էջմիածին», 2004, Թ.–Ժ., էջ 210)։

Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն Յուկիյա Ամանոյի հետ («էջմիածին», 2012, Դ., էջ 17)։

Միգրացիայի միջազգային կազմակերպության գլխավոր տնօրեն Բրանսոն Մաք-Քինլիի հետ («Էջմիածին», 2000, Ժ., էջ 45)։

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնի հետ («Էջմիածին», 2001, Ա., էջ 21),

ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ռաֆայել Էստրելայի հետ («Էջմիածին», 2001, Ե., էջ 121)

ԵԱՀԿ գործող նախագահ Միրչա Ջոանայի հետ («Էջմիածին», 2001, Բ.—Գ., էջ 15)։

ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերեն դը Բրիշամբոյի հետ («Էջմիածին», 2008, ԺԲ., էջ 140),

ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ադրիան Սեւերինի հետ («Էջմիածին», 2001, Ժ.—ԺԱ., էջ 147), ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ ժոաո Սոարեշի հետ («Էջմիածին», 2010, Գ., էջ 10)։

ԵԽԽՎ գլխավոր քարտուղար Բրունո Հայերի հետ («Էջմիածին», 2004, Է.—Ը., էջ 173), ԵԽԽՎ նախագահ Ռենե Վան Դեր Լինդենի հետ («Էջմիածին», 2005, Է.—Ը., էջ 175), երկրորդ անգամ *(«Էջմիածին», 2007, Զ.—Է., էջ 12), ԵԽԽՎ նախագահ Լուիս Մարի դե Պյուչի հետ («Էջմիածին», 2008, Զ.—Է., էջ 161)*

Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդիի հետ («Էջմիածին», 2004, Թ.—Ժ., էջ 209)

Եւրախորհրդի պատվիրակության հետ («Էջմիածին», 2003, Ժ.—ԺԱ., էջ 220)

*Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ (*http://ter-hambardzum.net/*, 17 հունիսի 2022 թ.)։*

Եվրոպական ժողովրդական կուսակցության նախագահ Վիլֆրիդ Մարթենսի հետ («Էջմիածին», 2010, Գ., էջ 8)

Միջուկային էներգիայի գծով միջազգային գործակալության (ՄԱԳԱՏԷ) տնօրեն Մոհամմադ էլ Բարադեյի հետ («Էջմիածին», 2005, Է.—Ը., էջ 174)

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ («Էջմիածին», 2001, Ժ.—ԺԱ., էջ 150—151)։

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԵՒ ՓՈԽՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՏ

Կիպրոսի ներկայացուցիչների պալատի նախագահ Սպիրոս Կիպրիանուի հետ («Էջմիածին», 2001, Բ.—Գ., էջ 15), Կիպրոսի ներկայացուցիչների պալատի նախագահ Դեմիտրիս Սիլուրիսի հետ («Էջմիածին», 2012, Ե., էջ 15)։

Ռուսաստանի Դաշնության պետական դումայի խոսնակ Գենադի Սելեզնյովի հետ («Էջմիածին», 2001, Զ.—Է., էջ 18), Ռուսաստանի Դաշնության պետական դումայի նախագահ Բորիս Գրիզլովի հետ («Էջմիածին», 2004, ԺԱ.—ԺԲ., էջ 210), Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի փոխնախագահ Գեորգի Բոոսի հետ («Էջմիածին», 2005, Դ., էջ 172), Ռուսաստանի Դաշնության դաշնային ժողովի դաշնության խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովի հետ («Էջմիածին», 2002. Ե., էջ 123), երկրորդ անգամ *(«Էջմիածին», 2004, Թ.—Ժ., էջ 211),* երրորդ անգամ *(«Էջմիածին», («Էջմիածին», Ռուսաստանի Դաշնության դաշնային ժողովի դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի հետ («Էջմիածին», 2012, Է., էջ 4—5)։*

*Ֆրանսիայի Սենատի նախագահ Քրիստիան Բոնսըլեի հետ («Էջմիածին», 2001, ԺԲ., էջ 9), Ֆրանսիայի Հանրապետության Սենատի նախագահ Ժերար Լարշեի գլխավորած պատվիրակության հետ (*http://terhambardzum.net/*, 25 ապրիլի 2021 թ.)։*

Սիրիայի ժողովրդական ժողովի նախագահ Աբդ ալ-Կադեր Կադդուրայի հետ («Էջմիածին», 2001, Զ.—Է., էջ 36), Սիրիայի Արաբական Հանրապետության ազգային ժողովի նախագահ Մահմադ ալ-Աբրաշի հետ («Էջմիածին», 2009, ԺԱ., էջ 21)։

Ֆինլանդիայի խորհրդարանի փոխխոսնակ Սիրկա Լիսա Անտիլայի հետ («Էջմիածին», 2001, Ժ.—ԺԱ., էջ 148—149)։

Բուլղարիայի խորհրդարանի նախագահ Օգնյան Գեջիկովի հետ («Էջմիածին», 2002, Զ.—Է., էջ 9)

Լեհաստանի Սենատի նախագահ Լոնգին Պաստուշիակի հետ («Էջմիածին», 2002, Ժ., էջ 141), Լեհաստանի Հանրապետության սենատի մարշալ Բոգդան Բորուսեւիչի հետ («Էջմիածին», 2006, ԺԱ.—ԺԲ., էջ 180—181)։

Արգենտինայի փոխնախագահ եւ սենատի նախագահ Դանիել Սիոլլիի հետ («Էջմիածին», 2004, Ե., էջ 43)։

Լատվիայի Հանրապետության Սաեյմայի նախագահ տիկին Իեգրիդա Ուդրեի հետ («Էջմիածին», 2005, Բ.—Գ., էջ 208)։

Բելոռուսի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչների պալատի նախագահ Վլադիմիր Կոնոպլյովի հետ («Էջմիածին», 2005, Բ.—Գ., էջ 212—213)։

Բելգիայի թագավորական Սենատի նախագահ տիկին Անն-Մարի Լիզինի հետ («Էջմիածին», 2005, Դ., էջ 179), Բելգիայի թագավորական Սենատի նախագահ Արման դը Դեկերի հետ («Էջմիածին», 2009, Ժ., էջ 5)։

ԱՄՆ Կոնգրեսի խոսնակ Նենսի Փելոսիի հետ («Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 24—25)։

*Շվեյցարիայի համադաշնության ազգային խորհրդի նախագահ Քրիստին Էգերզեգի-Օբրիստի հետ («Էջմիածին», 2007, ԺԱ., էջ 158), Շվեյցարիայի համադաշնության ազգային խորհրդի նախագահ Դոմինիկ դը Բյումանի հետ (*http://ter-hambardzum.net/*, 7 փետրվարի 2018 թ.)։*

Չեխիայի Սենատի նախագահ Պրշեմիսլ Սոբոդկայի հետ («Էջմիածին», 2008, Թ., էջ 167—168), Չեխիայի խորհրդարանի պատգամավորների պալատի փոխնախագահ Պրշեմիսլ Սոբոդկայի հետ («Էջմիածին», 2010, Գ., էջ 8)։

*Վրաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահ Դավիթ Բաքրաձեի հետ («Էջմիածին», 2009, Բ., էջ 180), Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի հետ (*http://ter-hambardzum.net/*, 7 ապրիլի 2022 թ.)։*

Խորվաթիայի Հանրապետության խորհրդարանի նախագահ Լուկա Բոբիչի հետ («Էջմիածին», 2011, Գ., էջ 6)։

Ուկրաինայի Գերագույն ռադայի նախագահ Վլադիմիր Լիտվինի հետ («Էջմիածին», 2011, Է., էջ 3)։

Լիբանանի Հանրապետության խորհրդարանի նախագահ Նաբիհ Բըրրիի հետ («Էջմիածին», 2011, Ժ., էջ 7)։

Ռումինիայի Հանրապետության Սենատի նախագահ Ֆիլիպ Պետրուի հետ («Էջմիածին», 2012, Ը., էջ 7), Ռումինիայի Հանրապետության խորհրդարանի պատգամավորների պալատի նախագահ Վալերիու Շտեֆան-Զգոնեայի հետ («Էջմիածին», 2013, Դ., էջ 9)։

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի փոխնախագահ Անտյե Ֆոլմերի հետ («Էջմիածին», 2001, Ժ.—ԺԱ., էջ 146), Գեր-

մանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի փոխնախագահ Վոլֆգանգ Թիրզեի հետ («էջմիածին», 2012, Ժ., էջ 7)։

Հունաստանի խորհրդարանի նախագահ Վանգելիս Մեյմարակիսի հետ («էջմիածին», 2014, Բ., էջ 3), Հունաստանի խորհրդարանի փոխնախագահ Յարղոս Սուռլասի հետ («էջմիածին», 2005, Ժ.—ԺԱ., էջ 178)։

*Սերբիայի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Մայա Գոյկովիչի հետ (*http://ter-hambardzum.net/*, 9 փետրվարի 2016 թ.)։*

*Շվեդիայի Թագավորության խորհրդարանի նախագահ Անդրեաս Նորլենի հետ (*http://ter-hambardzum.net/*, 27 օգոստոսի 2019 թ.)։*

*Լիտվայի Հանրապետության խորհրդարանի՝ Սեյմասի խոսնակ Վիկտորաս Պրանցկետիսի հետ (*http://ter-hambardzum.net/*, 4 հոկտեմբերի 2019 թ.)։*

*Տաջիկստանի Հանրապետության Մաջլիսի օլի Մաջլիսի Նամայանդագոն նախագահ Շուքուրջոն Զուխուրովի հետ (*http://ter-hambardzum.net/*, 5 նոյեմբերի 2019 թ.)։*

*Գվատեմալայի Հանրապետության Կոնգրեսի առաջին փոխնախագահ Ֆելիպե Ալեխոս Լորենզանայի հետ (*http://ter-hambardzum.net/*, 6 դեկտեմբերի 2019 թ.)։*

Իտալիայի Հանրապետության խորհրդարանի փոխխոսնակ Լամբերտո Դինիի հետ («էջմիածին», 2004, Թ.—Ժ., էջ 207)։

Չինաստանի ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական մշտական ժողովի փոխնախագահ Սյու Ցզյալուի հետ («էջմիածին», 2006, Ժ.—ԺԱ., էջ 178—179)։

*Մոլդովայի Հանրապետության խորհրդարանի նախագահ Զինաիդա Գրեչանիի հետ (*http://ter-hambardzum.net/*, 24 փետրվարի 2020 թ.)։*

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐԻ ԵՒ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏՆԵՐԻ ՀԵՏ

Հորդանանի վարչապետ Աբդու-Ռաուֆ Ռավադրեի հետ («էջմիածին», 2000, Ա., էջ 36—37)։

Կանադայի վարչապետ ժան Կրեթյենի հետ («էջմիածին», 2001, Ե., էջ 21)։

Ռուսաստանի Դաշնության Կառավարության նախագահ Միխայիլ Կասյանովի հետ («էջմիածին», 2004, Բ.—Գ., էջ 3), Ռուսաստանի Դաշնության փոխվարչապետ Իլյա Կլեբանովի հետ («էջմիածին», 2001, Զ.—Է.,

էջ 38–39), Ռուսաստանի Դաշնության փոխվարչապետ Ալեքսանդր Ժուկովի հետ («էջմիածին», 2010, Է., էջ 4)։

Լիբանանի Հանրապետության վարչապետ Ռաֆիկ Հարիրիի հետ («էջմիածին», 2004, Դ., էջ 130)։

*Վրաստանի Հանրապետության վարչապետ Զուրաբ Նագաիդելիի հետ («էջմիածին», 2005, Բ.–Գ., էջ 210), Վրաստանի Հանրապետության վարչապետ Բիձինա Իվանիշվիլիի հետ («էջմիածին», 2013, Ա., էջ 12–13), Վրաստանի Հանրապետության վարչապետ Գեորգի Գախարիայի հետ (*http://ter-hambardzum.net/*, 15 հոկտեմբերի 2019 թ.)։*

Կանադայի վարչապետ Սթիվըն Հարփերի հետ («էջմիածին», 2006, Բ.–Գ., էջ 170)։

Բելառուսի Հանրապետության վարչապետ Սերգեյ Սիդորսկու հետ («էջմիածին», 2006, Ժ.–ԺԱ., էջ 9)։

Բուլղարիայի Հանրապետության վարչապետ Սերգեյ Ստանիշեւի հետ («էջմիածին», 2007, ԺԱ., էջ 62)։

Սիրիայի Արաբական Հանրապետության վարչապետ Նաջի Օդրիի հետ («էջմիածին», 2009, ԺԱ., էջ 21)։

Լեհաստանի Հանրապետության վարչապետ Դոնալդ Ֆրանցիշեկ Տուսկի հետ («էջմիածին», 2010, Գ., էջ 10–11)։

Չեխիայի վարչապետ Յան Ֆիշերի հետ («էջմիածին», 2010, Ե., էջ 12)։

Ռումինիայի վարչապետ Վիկտոր Պոնտայի հետ («էջմիածին», 2012, Ը., էջ 7)։

Թուրքմենստանի փոխվարչապետ Խիդիր Սապարլիեւի հետ («էջմիածին», 2010, Դ., էջ 19–20)։

Իրաքի փոխվարչապետ Ռաուշ Նուրի Շաուեյսի հետ («էջմիածին», 2012, Թ., էջ 12)։

*Սինգապուրի վարչապետ Լի Սյեն Լունի հետ (*http://ter-hambardzum.net/*, հոկտեմբերի 2019 թ.)։*

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՒ ՓՈԽԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Սլովակիայի ԱԳ նախարար Էդուարդ Կակայի հետ («էջմիածին», 2000, Բ., էջ 22)։

Վրաստանի ԱԳ նախարար Իրակլի Մենաղարաշվիլիի հետ («էջմիածին», 2001, Բ.–Գ., էջ 22), Վրաստանի ԱԳ նախարար Սալոմե Զուրաբիշ-

վիլիի հետ («էջմիածին», 2004, Է.—Ը., էջ 175), Վրաստանի ԱԳ նախարար Գելա Բեժուաշվիլիի հետ («էջմիածին», 2006, Ա., էջ 154)։

Էստոնիայի ԱԳ նախարար Թոմաս Հենդրիկ Իլվեսի հետ («էջմիածին», 2001, Դ., էջ 41)։

Լատվիայի Հանրապետության ԱԳ նախարար Ինդուլիս Բերզինշի հետ («էջմիածին», 2001, Ժ.—ԺԱ., էջ 150)։

*Բելոռուսի Հանրապետության ԱԳ նախարար Սերգեյ Մարտինովի հետ («էջմիածին», 2003, Ժ.—ԺԱ., էջ 220),*երկրորդ անգամ՝ *(«էջմիածին», 2012, Դ., էջ 16)։*

Բուլղարիայի Հանրապետության ԱԳ նախարար, ԵԱՀԿ գործող նախարար Սոլոմոն Պասսիի հետ («էջմիածին», 2004, Բ.—Գ., էջ 184)։

Դանիայի Թագավորության ԱԳ նախարար Պեր Ստիզ Մյուլերի հետ («էջմիածին», 2004, Է.—Ը., էջ 177—178)։

Նորվեգիայի Թագավորության ԱԳ նախարար Յան Պետերսոնի հետ («էջմիածին», 2004, Թ.—Ժ., էջ 213)։

Չինաստանի ժողովրդական Հանրապետության ԱԳ նախարար Լի Չժաոսինի հետ («էջմիածին», 2004, Թ.—Ժ., էջ 213—214)։

Արգենտինայի ԱԳ, միջազգային առեւտրի եւ պաշտամունքի նախարար Ռաֆայել Անտոնիո Բիելսայի հետ («էջմիածին», 2005, Է.—Ը., էջ 176)։

Լիբանանի ԱԳ եւ Սփյուռքի նախարար Ֆաուզի Սալլուխի հետ («էջմիածին», 2006, Է.—Ը., էջ 180)։

Լեհաստանի ԱԳ նախարար Աննա Ֆոտիգայի հետ («էջմիածին», 2007, Բ.—Գ., էջ 197)։

Ռուսաստանի Դաշնության ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ («էջմիածին», 2007, Դ., էջ 155), Ռուսաստանի Դաշնությանառաջին փոխարտգործնախարար Վյաչեսլավ Տրուբնիկովի հետ («էջմիածին», 2001, Ժ.—ԺԱ., էջ 150)։

Չեխիայիհանրապետության ԱԳ նախարար Կարել Շվարցենբերգի հետ («էջմիածին», 2008, Զ.—Է., էջ 159)։

ԱՄՆ Պետքարտուղարի տեղակալ Դանիել Ֆրիդի հետ («էջմիածին», 2008, Ժ., էջ 147)։

Սինգապուրի ավագ նախարար Լի Կուան Յուի հետ («էջմիածին», 2009, Թ., էջ 9—10)։

Արաբական Միացյալ Էմիրությունների արտաքին գործերի նախարար Անվար Մուհամմեդ Գարգաշի հետ («էջմիածին», 2009, ԺԲ., էջ 6)։

Ավստրիայի եվրոպական ու միջազգային հարցերի դաշնային նախարար Միխայել Շպինդելեգերի հետ («էջմիածին», 2010, Զ., 10 էջ)։

Չինաստանի ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի նախարար Յան Զիեչիի հետ («էջմիածին», 2011, Բ., էջ 5)։

Կիպրոսի Հանրապետության ԱԳ նախարար էրատո Կոզակու-Մարկուլիսի հետ («էջմիածին», 2012, Դ., էջ 14)։

Ուրուգվայի Արևելյան Հանրապետության ԱԳ նախարար Լուիս Ալմադրո Լեմեսի հետ («էջմիածին», 2012, Ե., էջ 12)։

Արգենտինայի Հանրապետության ԱԳ նախարար Հեկտոր Մարկոս Թիմերմանի հետ («էջմիածին», 2012, Թ., էջ 11)։

Էլ-Քուվեյթի նահանգապետ Շեյխ Ալի ալ-Տաբեր ալ-Սաբահի հետ («էջմիածին», 2013, ԺԱ., էջ 25)։

*Հունաստանի ԱԳ նախարար Նիկոս Կոցիասի հետ (*http://terhambardzum.net/*, 9 մարտի 2017 թ.)։*

Ուկրաինայի Հանրապետության ԱԳ փոխնախարար Դմիտրի Տկաչի հետ («էջմիածին», 2000, Ե., էջ 48), Ուկրաինայի Հանրապետության ԱԳ փոխնախարար Կոնստանտին Ելիսեեւի հետ («էջմիածին», 2008, Դ., էջ 140)։

Հունաստանի փոխարտգործնախարար Գրիգորիս Նիուրիսի հետ («էջմիածին», 2001, Զ.–Է., էջ 30)։

Իտալիայի ԱԳ փոխնախարար Ֆամիանո Կրուչիանելիի հետ («էջմիածին», 2006, Ժ.–ԺԱ., էջ 178)։

РЕЗЮМЕ

Верховный Патриарх и Католикос Всех Армян Гарегин II осуществляет плодотворную деятельность как в сфере решения общенациональных проблем (взаимоотношения между Арменией и армянской диаспоры, международного признания и осуждения Геноцида армян, справедливого решения Карабахской проблемы и т. д.), так и в сфере экуменического движения, межцерковного и межрелигиозного сотрудничества.

Так как Армянская Церковь всегда руководствовалась интересами нации и родины, Его Святейшество выражал свое отношение к общенациональным проблемам именно с этой позиции. В этом контексте одной из наиважнейших

сфер деятельности Католикоса Гарегина II были встречи с руководителями и высокопоставленными представителями государственной власти разных стран, в ходе которых обсуждались также вышеупомянутые общенациональные проблемы, а также вопросы касающиеся экуменического движения, межцерковного и межрелигиозного сотрудничества.

Закономерным результатом этой многогранной деятельности Католикоса Гарегина II стало заслуженное международное признание.

SUMMARY

During his pontificate, His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, has been very fruitful both in solving national issues (relations between Armenia and the Armenian Diaspora, international recognition and condemnation of the Armenian Genocide, just resolution of the Karabakh conflict, etc.), and in ecumenical, inter-church and inter-religious relations.

As His Holiness emphasized, in all of these activities, the Armenian Church had been guided by the interests of our nation and Motherland and expressed her opinion on matters of national concern. In this context, one of the most important spheres of Catholicos Karekin II's activities were his meetings with the leaders and high-ranking state officials of different countries for raising awareness and improving the image of Armenia in the international arena. The tireless efforts of His Holiness Karekin II have resulted in his well-deserved international recognition.

Doi: 10.56737/2953-7843-2022.10-118

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ ՀԳ տնօրեն

ԱՐԱՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՒ ՊԱՏՊԱՆՈՒՄ[1]

ՄՈՒՏՔ

Հետադարձ հայացք նետելով Ամենայն Հայոց Հայրապետի անցած ուղուն՝ դժվար է առանձնացնել մի ոլորտ, որն առավել ընդգրկուն է կամ առավել գնահատված, քան մնացածը։ Ինչո՞ւ։ Որովհետեւ Վեհափառ Հայրապետի հետ առնչություն ունեցող կամ նրա ուշադրության կենտրոնում գտնվող բոլոր բնագավառները խաչված են միմյանց տեսանելի եւ անտեսանելի բազում թելերով։ Հաշվի առնելով այս հանգամանքը՝ այստեղ փորձել ենք ուրվագծել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի եւ հրատարակչական բաժնի գործունեությունը Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի կաթողիկոսության շրջանում։

Հետազոտական աշխատանքը կատարելիս օգտվել ենք նյութին վերաբերող՝ վերջին տասնամյակներում հրապարակված որոշ հոդվածներից, որոնք նշված ուղղությունները խորքային ու ամբողջական ներկայացնելու մասնակի փորձեր են[2]։ Մինչդեռ մանրակրկիտ ուսումնասիրությունը փաստում է, որ վերջին երեսուն տարիներին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ եւ օրհնությամբ իրականացվել են մի շարք կառուցվածքային եւ բովանդակային փոփոխություններ, որոնք նոր հարթակ են դարձել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական գործունեության եւ տպագիր ժառանգության պահպանության համար։ Որո՞նք են այդ փոփոխությունները, թիրախային ի՞նչ ուղղություններ են առանձնացված, ինչպե՞ս են կազմակերպվում աշխատանքները, ի՞նչ պահանջ-

---

[1]* *Ստացվել է՝ 9.10.2022, գրախոսվել է՝ 23.10.2022։ Էլ. հասցե՝* grigoryan_maya@mail.ru։

[2] *Տե՛ս «Պատմության փառահեղ մի էջ»։ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված հոբելյանական շնորհավորանքների, գործունեության վերաբերյալ հոդվածների ժողովածու, կազմ.՝ Գ. քհն. Վարդանյան, խմբ.՝ Ա. քհն. Պողոսյան, Ս. Էջմիածին, 2020, 800 էջ։*

ներ են առաջադրվում ներկա դարաշրջանում եւ այլն, հարցադրումներ, որոնց պատասխանների փնտրտուքը պահանջում է ոչ միայն տվյալ բնագավառի խորքային ուսումնասիրություն, այլեւ համապատասխան ժամանակաշրջանի դիտարկում։ Առանց այդ միջավայրի ուսումնասիրության անհնար է վեր հանել տվյալ ոլորտի առջեւ ծառացած խնդիրները եւ հաղթահարել մարտահրավերները։

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1999–2022 ԹԹ.)

Առաջին հայկական տպարանը տարածաշրջանում հիմնադրվել է 1771 թ. Վաղարշապատում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, իսկ առաջին գիրքը տպագրվել է 1772 թ.[3]։ Սկզբնական շրջանում տպարանը նախապատվությունը տվել է միայն գրքերի հրատարակությանը։ 1868 թվականից հետո Մայր Աթոռի տպարանում, «Արարատ» ամսագրի հրատարակությամբ, մեկնարկել է մամուլի տպագրությունը։ Վերջինիս հաջորդել է «Դպրոց» ամսագիրը (1874–1876 թթ.), որը լույս է տեսել Սբ. Գայանե վանքում՝ Վահան վրդ. Բաստամյանցի ջանքերով[4]։

Մայր Աթոռում տպարանի հիմնադրումը, ավելի ուշ նաեւ բուռն զարգացումը միանշանակ առնչվում էր տարածաշրջանում սկիզբ առած եւ զարգացող մշակութային, կրթական, գիտական քաղաքականությանը։ Այն ուներ նաեւ քաղաքական ու հասարակական ետնախորք՝ միտված երկրի ներսում հայ ժողովրդի կարգավիճակի բարելավմանը։

Տպարանի գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել գործուն եւ ոչ գործուն փուլերի՝ կապված երկրի քաղաքական, տնտեսական ու հասարակական առաջնահերթությունների հետ, բայց անգամ ոչ գործուն տարիներին տպարանը ընթերցողի սեղանին է դրել բովանդակալից եւ արժեքավոր հրատարակություններ։

---

[3] *Տպարանի գործունեության մասին տե՛ս* Ա. Սմբատյան, *Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը եւ Մայր Աթոռի տպարանը, Ս. Էջմիածին, 1973, 184 էջ,* Վ. Դեհրիկյան, *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, Մասն Գ։ Սուրբ Ղազարից Սուրբ Էջմիածին (18-րդ դար), Երեւան, 2016, էջ 283–463։ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն». հրատարակությունների մատենագիտություն (1771–1920), կազմ.՝ Մ. Գրիգորյան, Ս. Պետոյան, Գ. Գրիգորյան եւ այլք, պատ. խմբ.՝ Գ. Տեր-Վարդանյան, խմբ., առաջաբ., ծան.՝ Գ. Գրիգորյան, Ս. Էջմիածին, 2021, էջ 5–37։*

[4] Վ. Ե. Վրդ. Բաստամեանց, *Տարեգրութիւն։ Ս. Էջմիածին. 1872–1880 թթ., աշխատասիրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Էջմիածին, 2018, էջ 161–166։*

1830-ական թվականներից հետո Ս. Էջմիածնի տպարանն սկսում է աշխույժ գործունեությունը մինչեւ Ի. դարի երկրորդ տասնամյակը։ Տպագրական սարքավորումների կատարելագործումը, մատչելիությունը, գրավաճառ ցանցի ընդլայնումը, հասարակության կրթական, մշակութային առաջընթացը ստեղծում են նպաստավոր պայմաններ՝ հարստացնելու Մայր Աթոռի տպագրությունների քանակն ու անվանաշարքը։

Միանշանակ է նաեւ, որ այս տպարանի բոլոր հրատարակությունները՝ գիրք կամ պարբերական, բոլոր ժամանակներում համահունչ են Մայր Աթոռի գործունեության հիմնական ուղղությունների տրամաբանությանը եւ, առհասարակ, նրա որդեգրած գաղափարների ոգուն։ Միշտ էլ Սբ. Էջմիածինը դիտարկվել է որպես համայն հայության հոգեւոր կենտրոնը, որի խոսքը եւ քարոզը վճռորոշ եւ ազդեցիկ են եղել հավատացյալ հայի համար։ Այդ ամենի փոխանցողը եւ տարածողը առաջին հերթին տպարանն է իր արտադրանքով։

Տպարանի, ինչպես նաեւ Սբ. Էջմիածնի մշակութային այլ կառույցների գործունեությունն արմատապես փոխվում է, երբ ՀՍԽՀ պետական իշխանության եւ կառավարման բարձրագույն մարմինը՝ Հայաստանի հեղափոխական կոմիտեն, 1920 թ. դեկտեմբերի 17-ին հրատարակում է հանրապետության տարածքում գործող բոլոր ազգերի հոգեւոր կենտրոնների մշակութային, կրթական հաստատությունները պետականացնելու մասին դեկրետը՝ «Դեկրետ հոգեւոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնների պետականացման մասին» վերնագրով[5]։ Նման քաղաքականությունը շարունակությունն էր Խորհրդային Ռուսաստանում արդեն սկսված գործընթացի, ինչը շատ ծանր հետեւանք է ունենում Հայ Առաքելական Եկեղեցու համար[6]։

Խորհրդային տարիներին տպարանը շարունակում է գործել ընդհատումներով, տալիս է սահմանափակ տպագիր արտադրանք։ Բացի այդ, առկա էին նաեւ գաղափարային ճնշումներ։ 1944 թ. հունվա-

---

[5] *Հ.Ս.Խ.Հ. դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ I. 1920 թ. նոյեմբերի 29—1921 թ. փետրվարի 18, Էջմիածին, տպ. Գիտական ինստիտուտի, 1921, էջ 16։*

[6] Ե. Տեր-Մինասեան, *Տեղեկագիր Էջմիածնի գիտական ինստիտուտի (5 փետրուարի—1921—1 յունիսի 1922), «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», Վաղարշապատ, 1921—1922, թ. Ա.—Բ., էջ 327,* Հ. Սուքիասեան, *Եկեղեցու սեփականության բռնագրավումը Խորհրդային Հայաստանում (1920 թ. դեկտեմբեր-1921 թ. փետրվար), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երեւան, 2014, թ. 1, էջ 95—102։*

րից Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր տեղակալ Գեւորգ արք. Զորեքչյանի ջանքերով սկսվում է «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը, սակայն մինչեւ 1962 թ. սեպտեմբեր ամիսը ամսագրի առաջին էջին կամ նշվում էր Հայպետհրատի տպարան, կամ միայն ամսագրի խմբագրության հասցեն։ 1962 թ. սեպտեմբերյան համարից սկսած ամսագրի էջերում նշվում է «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան»[7]։

Տպարանի անվան հիշատակումները հաճախակի են դառնում 1970-ական թվականներից, սակայն այս շրջանում էլ Մայր Աթոռն աչքի չի ընկնում հրատարակությունների «առատությամբ»։ Մինչեւ 1991 թ. տպագրվում է ընդամենը 3 տասնյակ անուն գիրք։

Պատկերը հիմն ի վեր փոխվում է 1990-ական թվականներին՝ կապված երկրի քաղաքական, հասարակական եւ մշակութային մի շարք փոփոխությունների հետ։ Չնայած սոցիալ-քաղաքական ծանր վիճակին, Վազգեն Առաջին, հետագայում նաեւ Գարեգին Առաջին Կաթողիկոսների տնօրինությամբ Սուրբ Էջմիածնում գրահրատարակչական գործը վերակազմավորվում է. շարունակվում է «Էջմիածին» կրոնագիտական ամսագրի հրատարակությունը, տպագրվում են շուրջ 150 անուն գրքեր, ինչպես նաեւ «Բեմ եկեղեցւոյ» (1994—1995 թթ.) երկշաբաթաթերթը՝ որպես «Էջմիածին» ամսագրի հավելված։

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ժառանգություն ստանալով արդեն իսկ որոշակի գործունեություն ծավալող տպարան, շարունակում է նախորդների ուրվագծած ճանապարհը՝ քաջ գիտակցելով տպագիր խոսքի եւ նյութի ազդեցությունը։

Սբ. Էջմիածնի հրատարակչական գործունեությունը ներկայացնելիս պետք է անպայման հաշվի առնել այն նախադրյալները, որոնք նպաստեցին, որ տպագրական գործը դառնա կայուն կառուցվածք եւ բովանդակություն ունեցող գործընթաց։

Նախ, շատ կարեւոր էր երկրի սոցիալ-քաղաքական վիճակը։ Երկարատեւ պատերազմից, շրջափակումից, տնտեսական ճգնաժամից հետո հնարավորություն է ստեղծվում հաստատել «պայմանական» խաղաղություն, քիչ թե շատ կայուն տնտեսական հարաբերություններ, ինչն էլ խթանում է մշակութային, գիտակրթական կյանքի կայու-

[7] *Տե՛ս «Էջմիածին», 1962, թ., տիտղոսաթերթի դարձերես։*

նացումն ու զարգացումը[8]։ Ստեղծված քաղաքական-տնտեսական նոր իրավիճակը հնարավորություն է տալիս կարգավորելու պետություն-եկեղեցի հարաբերությունները, ինչի արդյունքում եկեղեցուն են վերադարձվում պատմականորեն նրան պատկանող մի շարք գործառույթներ։ Ազգ—պետություն—եկեղեցի փոխհարաբերությունները, որոնք ունեն փիլիսոփայական ենթաշերտեր, թելադրում են հաշվի առնել ազգահոգեբանական յուրահատկությունները։ Պետությունն ու եկեղեցին, հավատարիմ պատմական ավանդներին, կրկին հանդես են գալիս որպես երկմիասնություն՝ սերտորեն փոխկապակցված երեւույթներ, իրենց կնիքն են դնում ազգային ինքնության, հոգեբանության եւ հոգեկերտվածքի վրա՝ դառնալով ազգային ինքնագիտակցության կարեւոր բաղադրիչներ[9]։

Նոր ձեւավորված քաղաքական, տնտեսական հարաբերությունները որոշակիորեն նպաստում են, որ Հայ Առաքելական Եկեղեցին դառնա հանրային կյանքի կարեւոր ու անբաժանելի մասը։ Իրարահաջորդ քաղաքական-հասարակական իրադարձությունները ստիպում են կամ հնարավորություն են տալիս վերարժեւորել, վերագնահատել մի շարք հիմնախնդիրներ, որոնք խիստ անկյունաքարային էին ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար։ Եկեղեցին, որի գործառույթները սահմանափակված էին խորհրդային տարիներին, ձերբազատվում է բոլոր կապանքներից եւ վերստանձնում իր կարեւոր առաքելությունը ազգանպաստ խնդիրների լուծման ճանապարհին։

Էական նշանակություն ուներ Հայ Առաքելական Եկեղեցու կրթական գործառույթի ընդլայնումը[10]։ 1874 թ. հիմնադրված Գեւորյան հոգեւոր ճեմարանը շարունակում էր իր գործունեությունը, սակայն միայն այս կենտրոնը բավարար չէր նոր ժամանակների պահանջներին համապա-

---

[8] Ա. ԱԲՂ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, *Ժամանակի ոգով, «Էջմիածին», 1999, Ժ.—ԺԱ., էջ 130—132,* Ա. ՔԱԼԱՇՅԱՆ, *Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ազգ-կրոն-եկեղեցի փոխհարաբերության մասին, «Էջմիածին», 2011, Ը., էջ 25—52։*

[9] Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, *Հայ եկեղեցու դերն ու նշանակությունը հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման գործում, «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի», 2021, հտ. 8, էջ 226։*

[10] Բ. ԱԲՂ. ԳԱԼՍՏԱՆՅԱՆ, *Վեհափառ Հայրապետի մանկավարժական գործունեությունը, Էջմիածին, 2001, Ը., էջ 21—30,* Ա. ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ, *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեությունը հոգեւոր-կրթական ոլորտում, «Էջմիածին», 2014, թ. ԺԱ., էջ 39—59։*

տասխան կրթական գործընթաց կազմակերպելու համար[11]։ 1990 թ. իր գործունեությունն է սկսում Սեւանի Վազգենյան դպրանոցը, որը հիմնադրվել էր Ամենայն Հայոց Վազգեն Ա. Կաթողիկոսի տնօրինությամբ եւ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի նախաձեռնությամբ[12]։ 1993 թ. իրենց գործունեությունն են սկսում Հայորդյաց տները, որոնց թիվը գնալով ավելանում է՝ ընդգրկելով ողջ Հանրապետության տարածքը։ 2009 թվականի սեպտեմբերի 1-ից դռներն է բացում Էօրնեկյան հանրակրթական դպրոցը, իսկ 2013 թվականից՝ Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանը։ Բոլոր այս բարեփոխումները միտված էին Հայ Առաքելական Եկեղեցու գաղափարները, խոսքը հասարակությանը, հատկապես մատաղ սերնդին հասու դարձնելու համար։ Այդ խոսքը փոխանցողի առաքելությունը կրկին ստանձնում է Մայր Աթոռի տպարանը, որի արտադրանքը առաջին հերթին պետք է ծառայեր հիշյալ կառույցների սաների կրթությանն ու դաստիարակությանը։

Բոլոր այս բարեփոխումները հիմք են դառնում վերաիմաստավորելու Սբ. Էջմիածնի հրատարակչական գործունեությունը, որի առաջին եւ կարեւոր քայլը 2006 թ. ապրիլին Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի կազմավորումն էր[13]։ Բաժինը գործունեությունը սկսում է 2006 թ. ապրիլից, սակայն դա չի նշանակում, թե մինչ այդ Մայր Աթոռի հրատարակչական գործունեությունը դադարեցված էր կամ մասամբ էր իրականացվում։ Վեհափառ Հայրապետի կողմից այս բաժնի ստեղծումը միտված էր առաջին հերթին իրականացվող լայնածավալ աշխատանքները համակարգելուն եւ ավելի նպատակային դարձնելուն, ավելի կոնկրետ.

ա. Յուրաքանչյուր տարի մշակել ծրագիր, որը հնարավորություն կտա իրականացնել թիրախավորված գործունեություն՝ ի նպաստ Հայ Առաքելական Եկեղեցու գաղափարների եւ հայացքների ամրապնդման ու տարածման։

---

[11] «Հանդէս տօնախմբութեան անուան Վեհ. Հայրապետի եւ նաւակատեաց բացման ճեմարանի Ս. Էջմիածնի», «Արարատ», Վաղարշապատ, 1874, Թ., էջ 342։

[12] «Սեւանի Վազգենյան դպրանոցը», «Քրիստոնյա Հայաստան»։ Բացառիկ, 2004, Հոկտեմբեր, էջ 4։

[13] Ղ. ՔՀՆՅ. ՄԱՅԻԼԵԱՆ, Հրատարակչական բաժինը, «Քրիստոնյա Հայաստան»։ Բացառիկ, 2009, էջ 20, «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն», «Քրիստոնյա Հայաստան»։ Բացառիկ, 2021, էջ 82–84։

բ. Համակարգել Մայր Աթոռի այլ ստորաբաժանումների գործառույթները հրատարակչական ոլորտում։

դ. Առավել արդյունավետ ու ընդգրկուն ներկայացնել հայագիտական եւ կրոնագիտական կարեւորություն ու գիտական արժեք ունեցող աշխատությունները։

Սույն նյութի շրջանակում փորձեցինք պարզել, թե քանի տպագրություն է ունեցել Մայր Աթոռի տպարանը վերջին տասնամյակներում, սակայն վերջնական թվաքանակ հնարավոր չէ ներկայացնել, քանի որ տպագիր տեսականին ներկա պահին թույլ չի տալիս ամփոփել արդյունքը[14]։ Ներկայացնենք միայն որոշ վիճակագրական տվյալներ։ Ըստ Գաբրիել քհն. Վարդանյանի՝ 2006–2019 թթ. ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հրատարակվել է 323 անուն գիրք եւ իրականացվել են բազմաթիվ վերահրատարակություններ[15]։ Մեկ այլ վկայությամբ՝ 1999–2004 թթ. ընթացքում տպագրվել է հարյուրից ավելի գիրք[16]։ Ըստ Աստղիկ Ստամբոլցյանի՝ 2006 թ. կազմավորված բաժինը մինչեւ 2021 թ. հրատարակել է շուրջ 500 գիրք[17]։

Առավել ընդգրկուն եւ հստակ է Մայր Աթոռի տպարանի արտադրանքի տեսականին՝ գիրք, թերթ, ամսագիր, մանր տպագրություններ։ Տեսականու նկատմամբ նկատելի է հստակ կողմնորոշում՝ ամրագրված Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից. հրատարակված բոլոր նյութերը ի սպաս դնել Հայ Առաքելական Եկեղեցու գաղափարների տարածմանը, հայ ժողովրդի մատաղ սերնդի կրթական եւ դաստիարակչական գործի կազմակերպմանը[18]։ Առաջնորդվելով այս ծրագրով՝ վերջին 24 տարիների ընթացքում լույս են տեսել մեկնողական, դավանաբանա-

---

[14] Նշենք, որ 2021 թ. լույս տեսավ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն» մատենագիտությունը, որի շնորհիվ հստակեցվեց 1772–1920 թթ. ընթացքում գրատպության այս ակութում տպագրված նյութերի քանակը։ Տե՛ս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն. հրատարակությունների մատենագիտություն 1772–1920, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2021, 743 էջ։ Հուսանք առաջիկայում Մայր Աթոռում կնախաձեռնեն հրատարակությունների մատենագիտության կազմումը, որի արդյունքում կարող ենք թվային ստույգ տվյալներ ունենալ։

[15] «Պատմության փառահեղ մի էջ», Ս. Էջմիածին, 2020, էջ 23։

[16] «Մայր Աթոռի հրատարակչական գործունեությունը վերջին հինգ տարիներին», «Քրիստոնյա Հայաստան»։ Բացառիկ, 2004, թ. 21, էջ 12։

[17] Ա. Ստամբուլցյան, Հավատն է մեր ծառայության, մեր զինվորության գլխավոր զենքը, «Քրիստոնյա Հայաստան»։ Բացառիկ, 2021, էջ 14։

[18] Ա. Քհն. Պողոսյան, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեությունը հոգեւոր-կրթական ոլորտում, «Էջմիածին», 2014, ԺԱ., էջ 39–40։

կան, հակաճառական, հայրաբանական, Հայ Եկեղեցու ծեսը ներկայացնող գրքեր, գրքույկներ, տոնախոսական քարոզթերթիկներ։ Կազմվել եւ հրատարակվել են հայրաբանական գրականության արժեքավոր երկերի բնագրեր, կարեւորվել է Հայ Եկեղեցու պատմությանը նվիրված աշխատությունների վերահրատարակումը, օտար լեզուներից եւ գրաբարից թարգմանությունների, հայագիտական, եկեղեցագիտական, մեկնողական գրականության տպագրությունը, քրիստոնեական բարոյագիտական, ուսուցողական գրքույկների լույս աշխարհ գալը։ Տպագրվել են աստվածաբանական արժեքավոր ուսումնասիրություններ։ Հանրության սեփականությունն են դարձել քրիստոնեական բարոյախրատական գրականության բազմաթիվ գանձեր եւ այլ երկեր։

Մայր Աթոռի հրատարակչությունը համակարգում է 1944 թ. առ այսօր տարեկան տասներկու համարով հրապարակվող «Էջմիածին» կրոնագիտական-հայագիտական ամսագրի եւ 1997 թ. հրապարակվող «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթի խմբագրությունների աշխատանքները։ Բացի այս պարբերականներից, տպագրվել են նաեւ այլ անուններ, որոնք ներկա շրջանում առկա են Մայր Աթոռի Մատենադարանում՝ «Information Service» *(Ս. Էջմիածին, 2000 թ., պահպանվել է միայն 3-րդ համարը),* «Mother See: Newsletter of Holy Etchmiadzin» *(Ս. Էջիածին, 2001–2006 թթ.), «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին։ Տեղեկագիր» (Ս. Էջմիածին, 2018)։*

Թվային տեխնոլոգիաների արդի դարաշրջանում, երբ տեղեկատվությունը հասանելի է յուրաքանչյուր պահի, իսկ ընթերցանության մեջ գերակշռում է էլեկտրոնային ձեւաչափը, Մայր Աթոռի հրատարակչական բաժինը շարունակում է իր գործունեությունը՝ գիտակցելով, որ թղթային գիրքը չի կորցրել իր մրցունակությունը նույնիսկ տեղեկատվության հարափոփոխ աշխարհում։ Պարզապես վերակազմակերպվում են որոշ աշխատանքներ, որոնք առավել դյուրին են դարձնում նյութի տպագրությունը, դարձնում այն ավելի գրավիչ ու հասանելի։ Համահունչ քայլելով արդի դարաշրջանի պահանջներին՝ 2022 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հրատարակչական բաժինը, համագործակցելով «SOS *Արեւելքի քրիստոնյաներ» (*SOS Chrétiens d'Orient*) հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ, նախաձեռնել է 250-ամյա տպարանի սարքավորումների արդիականացման գործընթաց, որը պետք է ընթանա մի քանի փուլով։ Ավարտին նախատեսվում է վերազինել տպարանը՝ համալ-*

րելով թե՛ տպագրական եւ թե՛ կազմարարական անհրաժեշտ նորագույն ու ժամանակակից սարքավորումներով։ Վստահ ենք, որ առաջիկայում Մայր Աթոռի վերազինված տպարանը կհամալրի տպագիր նյութերի շարքերը նորանոր հրատարակություններով։

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ «ՎԱՂԵ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Մայր Աթոռի Մատենադարանն ունի դարերի պատմություն։ Պատմական տարբեր շրջափուլերում Մատենադարանն ունեցել է վերելքներ ու վայրէջքներ, թալանվել ու նորից վերակազմավորվել է, բայց միշտ մնացել է հայերեն ձեռագիր, հետագայում նաեւ տպագիր ժառանգության հարուստ եւ կարեւոր կենտրոն։ Շատերը կարող են ենթադրել, որ այստեղ պահպանվել են միայն սուրբ գրքեր ու քրիստոնյա հայրերի աստվածաբանական-դավանաբանական աշխատություններ, սակայն Ս. Էջմիածնի Մատենադարանը եղել է եւ է հայերեն գրավոր մշակութային ժառանգության հավաքատեղի՝ անկախ ձեւից ու բովանդակությունից[19]։

Հոգեւոր այս կենտրոնի համար վճռորոշ էր 1920 թ. դեկտեմբերի 17-ին ՀԽՍՀ Հեղկոմի դեկրետը, որով բոլոր մշակութային հիմնարկությունների հետ մեկտեղ պետականացվում է նաեւ Ս. Էջմիածնի մատենադարանը՝ հանձնվելով Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի տնօրինությանը։ 1921 թ. փետրվարի 5-ի հրամանագրով Էջմիածնի կրթամշակութային հաստատությունների (մատենադարան, թանգարան, տպարան եւ այլն) պետականացված ցանցի հիման վրա ստեղծվում է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը՝ առաջին գիտական հաստատությունը այդ ժամանակվա Հայաստանում[20]։

Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի՝ 1922 թ. մարտի 6-ի կարգադրությամբ Վաղարշապատ են վերադարձվում պատերազմի տարիներին ապահովության համար Մոսկվա փոխադրված հայերեն ձեռագրերը, դրանք այստեղ միացվում

---

[19] *Մատենադարանի պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս* Գ. ՂԱԶԱՐՅԱՆ, *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մատենադարանի տպագիր գրականության բաժինը 19–20-րդ դարերում, «Էջմիածին», 1994, Ը., էջ 82–87,* Գ. ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, *Մայր Աթոռի մատենադարանը, «Արարատ», Վաղարշապատ, 1901, Ա., էջ 18–25։*

[20] Ա. ՁԱՔԱՐՅԱՆ, *Էջմիածնի գիտական ինստիտուտի գործունեությունը, «Արվեստագիտական հանդես», 2022, 1, էջ 278–289։*

են մինչ այդ՝ 1915–1921 թթ. ընթացքում հավաքված 1730 ձեռագրերին։ Շուտով Մատենադարան են մուտք գործում նաեւ Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Երեւանի գրական թանգարանի եւ այլ վայրերի ձեռագրական հավաքածուները։ Զգալի քանակությամբ ձեռագրեր են հավաքվում նաեւ Էրզրումից, Նոր Նախիջեւանից, Դոնի Ռոստովից, Աստրախանից եւ այլ վայրերից։ 1930 թ. Ի. Ստալինի հրամանով գրադարանի հավաքածուն բաժանվում է պետական տարբեր հաստատությունների։ 1939 թ. Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ մատենադարանը էջմիածնից տեղափոխվում է մայրաքաղաք եւ տեղավորվում Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի նորակառույց շենքում, իսկ 1959-ին՝ տեղափոխվում նոր շենք։

Հակառակ Մատենադարանի համար կործանարար այս պատմական իրադարձություններին եւ որոշումներին, այնուամենայնիվ, անգամ խորհրդային տարիներին Մայր Աթոռում ձեւավորվում է եւ գրադարան, եւ ձեռագրապահոց եւ արխիվատուն։ Վերջիններս համալրվում են Մայր Աթոռի, առանձին գիտաուսումնական հաստատությունների եւ անհատ հրատարակիչների կողմից տպագրված եւ նվիրաբերած գրականությամբ ու վավերագրերով։

Այս գործընթացն աշխուժանում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու նրա հաջորդների օրոք։ 2000 թ. հունիսի 26-ին Վազգեն Ա. եւ Գարեգին Ա. երջանկահիշատակ հայրապետների անձնական գրադարանների հիման վրա Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետեւողական ջանքերի շնորհիվ բացվում է «Գարեգին Ա.» հայագիտական եւ աստվածաբանական գիտական կենտրոնը՝ իր արժեքավոր գրադարանով։ 2007 թ. օգոստոսի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռի տարածքում տեղադրվում է Մատենադարանի ապագա շենքի հիմնաքարը, իսկ 2009 թ. սեպտեմբերի 22-ին կատարվում է հիմնարկեքի արարողությունը[21]։ Շատ կարճ ժամանակամիջոցում Մայր Աթոռում վեր է խոյանում Մատենադարանի նոր շենքը, որի պաշտոնական բացումը տեղի է ունենում 2012 թ. հոկտեմբերի 18-ին՝ հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մասնակցությամբ՝

---

[21] *«Վաչէ եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի հիմնօրհնեք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, «Էջմիածին», 2009, Թ., էջ 11–12։*

Ս. Էջմիածնի Մատենադարանի լոնդոնաբնակ բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյանների, ինչպես նաեւ բազմաթիվ գիտնականների, բարձրաստիճան պաշտոնյաների եւ բազմաթիվ հյուրերի։ Մատենադարանը, ի գնահատություն եկեղեցասեր եւ հայրենանվեր բարերարների, կոչվեց «Վաչե եւ Թամար Մանուկյան»[22]։

Մատենադարանի բազմահարուստ ֆոնդի հիմքը «Գարեգին Ա.» աստվածաբանական եւ հայագիտական կենտրոնում կազմավորված գրադարանն է, սակայն հետագա տասը տարիների ընթացքում արված նվիրատվությունների, ձեռքբերումների շնորհիվ 2022 թ. այն կազմում է ավելի քան 100 000 միավոր։

Վեհափառ Հայրապետի հրամանով նորաբաց Մատենադարան են տեղափոխվում Մայր Աթոռի ենթակայության ներքո գործող գրադարաններում առկա մինչեւ 1930 թ. հրատարակված բոլոր գրքերը, բացառությամբ Վեհարանում ձեւավորված հին եւ հնագույն շրջանի հավաքածուի։

Տարիներ շարունակ համարվելով սոսկ Հայ Եկեղեցու գահակալների անձնական գրադարան եւ չունենալով համապատասխան շենքային պայմաններ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եղած գրադարանը, ըստ էության, փակ էր հասարակության լայն զանգվածների համար։

Համալիրի ընձեռած պայմանները, տեխնիկական բոլոր անհրաժեշտ միջոցներով զինված լինելը հնարավորություն է տալիս հայ եւ այլազգի գիտնականներին, հոգեւորականներին ու պարզապես ընթերցասեր հանրությանը իրենց ուսումնասիրություններն ու աշխատանքները կատարելու, օգտվելու Մայր Աթոռի մատենադարանի հարուստ ժառանգությունից, ինչպես նաեւ կապ հաստատելու այլ մատենադարանների, գրադարանների ու գրապահոցների եւ թանգարանների հետ։

Այսօր մատենադարանի կրոնական եւ հայագիտական գրականությունից օգտվում են ոչ միայն Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսանողներն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանները, այլեւ՝ երեւելի գիտնականները, տարբեր կրթական հաստատությունների ուսանողներ, ինչպես նաեւ՝ պարզապես ընթերցողներ։

---

[22] Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում բացվեց «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանը, «Էջմիածին», 2012, Ժ., էջ 135–136, Ա. Բոջոյան, Գարեգին Ա. աստվածաբանական-հայագիտական կենտրոնը եւ Մայր Աթոռի գիտական ձեռնարկումները, «Էջմիածին», 2009, ԺԱ., էջ 122–128։

Մայր Աթոռի Մատենադարանի գործառույթները տարբեր են՝ գրադարանային, թանգարանային, գիտական, կրթական եւ այլն։ Այս բոլոր գործառույթների մեկտեղումը հնարավորություն է տալիս կառույցին վերաճել սոսկ գրադարան համարվելու իրողությունից եւ հասարակության համար դառնալ գիտակրթական կենտրոն, ուր առկա հարուստ հավաքածուները եւ դրանցից օգտվելու ավանդական ու էլեկտրոնային հնարավորությունները գրավիչ պայմաններ են ստեղծում ընթերցողների համար։

Մատենադարանի ֆոնդերի համալրումն իրականացվում է շնորհիվ այն նվիրատվությունների, որոնք աշխարհի տարբեր վայրերից կատարվում են կաթողիկոսարանին, միաբանությանը, ինչպես նաեւ անմիջապես մատենադարանին։ Նվիրատուները անհատներ են, ՀՀ եւ Արցախի Հանրապետության գիտակրթական, մշակութային կառույցներ, սփյուռքահայ գործիչներ, Սփյուռքում գործող կառույցներ, կազմակերպություններ եւ այլն։ Նվիրատվությունների մեջ պետք է տարբերակել Վեհարանից ստացվող գրականությունը եւ անմիջապես Մատենադարանին արված նվիրատվությունը, որը իրականություն է դառնում բացառապես տնօրենության ջանքերի, ձեռք բերվող համագործակցային կապերի, այլ կառույցների հետ պարբերաբար տարվող բանակցությունների արդյունքում։

Համալրված գրականության մեջ առանձնանում են հայերեն հնատիպ գրքերը, որոնց ձեռքբերման ու պահպանության համար Մատենադարանում ստեղծված են բոլոր պայմանները։ Մատենադարանի տնօրենության հետեւողական աշխատանքի արդյունքում հնատիպ հավաքածուն շարունակում է ավելանալ հիմնականում նվիրատվությունների արդյունքում։ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ 2016 թվականից առանձնակի հոգածության ներքո են առնվել 1512—1850 թթ. ընթացքում տպագրված բոլոր գրքերն ու պարբերականները։ Մատենադարանի գլխավոր առաքելություններից է հավաքել այս գրքերը, պահպանել խնամքով ու ուշադրությամբ, միաժամանակ հասանելի դարձնել աստվածաբանությամբ, հայագիտությամբ, Հայաստանի եւ տարածաշրջանի պատմությամբ հետաքրքրվող ընթերցողներին։

Մատենադարանում պահվում է կրոնական, աստվածաբանական, հայագիտական, պատմական գրականություն՝ շուրջ 50 լեզուներով։ Կառույցի գլխավոր առաքելությունն է մեկտեղել գրքերը, պահպանել խնամքով, հասանելի դարձնել ընթերցողներին։ Գրքերն այստեղ

պահվում են օդաջերմալուսային եւ խոնավության ընդունված չափորոշիչների համաձայն։ Ամբողջ շենքը հսկվում է ժամանակակից հակահրդեհային համակարգերով, իսկ գրապահոցներն օժտված են ժամանակակից հրդեհաշիջման եւ օդի խոնավության ապահովման համակարգերով։

Հարուստ է ոչ միայն Մայր Աթոռի Մատենադարանի գրքային, այլեւ պարբերական մամուլի հավաքածուն, ուր ներառված են Հայաստանում եւ արտերկրում տպագրված հայերեն եւ օտարալեզու թերթեր ու ամսագրեր, որոնց հաշվառման եւ գրանցման ուղղությամբ աշխատանքներն սկսվել են 2021 թ.։ Ավարտվել է մամուլի ամբողջ հավաքածուի փաստացի հաշվառման եւ գրանցման գործընթացը, որի արդյունքում ստեղծվել է Մատենադարանում առկա բոլոր պարբերականները ներառող գրացուցակ՝ համապատասխան մատենագիտական տվյալներով. այն հասանելի է Մայր Աթոռի Մատենադարանի կայքէջում[23]։ Էլեկտրոնային գրացուցակի համալրման աշխատանքներին զուգահեռ իրականացվում են հետազոտական աշխատանքներ, ինչի արդյունքում պարզվել է, որ որոշ պարբերականների առանձին համարներ պահպանվում են միայն Մայր Աթոռի Մատենադարանում, իսկ որոշ անուններ նորահայտ են եւ առ այսօր չեն արձանագրվել մատենագիտական ցանկերում։

Մայր Աթոռի Մատենադարանը, լինելով հայերեն տպագիր նյութի պահպանության կարեւորագույն ակութներից մեկը, ուշադրություն է դարձնում տարբեր գիտական, մշակութային, կրթական կառույցների հետ համագործակցային կապերի հաստատմանը։ Համագործակցության շնորհիվ կառույցը համալրվում է նոր գրականությամբ, միեւնույն ժամանակ իր հերթին այլ կառույցներին տրամադրում է Մայր Աթոռի հրատարակություններից։ Պարբերաբար կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, գիտաժողովներ, իրականացվում է փորձի փոխանակում։ Ավելին, լինելով հոգեւոր կենտրոն՝ Ս. Էջմիածնի Մատենադարանը համախմբում եւ համակարգում է գրադարանային ոլորտի ներկայացուցիչներին՝ փորձելով գտնել տարաբնույթ խնդիրների լուծման ուղիները։

2014 թ. Մատենադարանում որոշվեց աշխույժ գրափոխանակություն սկսել հանրապետության եւ արտերկրի նմանատիպ կառույցների հետ։

---

[23] *Պարբերականներ* https://etchmiadzinlibrary.am/hy/magazine *(28.01.2023 թ.)։*

Գրափոխանակության գործընթացն առավել դյուրությամբ կազմակերպելու համար Մատենադարանի տնօրենի առաջարկությամբ եւ Վեհափառ Հայրապետի հրամանով ստեղծվում է գրափոխանակության հանձնաժողով։ Արդեն 2014 թ. գրափոխանակության համար Մատենադարանը հարաբերություններ է սկսում ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հետ, որը շարունակվում է նաեւ հետագա տարիներին։

2014 թ. «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով հայկական գրադարանների երրորդ միջազգային համաժողովի ընթացքում Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ Մատենադարանի տնօրեն Տ. Արարատ քահանա Պողոսյանը եւ Հայաստանի ազգային գրադարանի նախկին տնօրեն Տիգրան Զարգարյանը ստորագրում են փոխըմբռնման հուշագիր, որով նախանշվող համագործակցության շրջանակներում երկու կառույցները որոշում են իրենց նպաստը բերել հայագիտության պահպանման, զարգացման ու տարածման, երիտասարդ սերնդի դաստիարակության եւ ազգային-հոգեւոր արժեքների մասին իրազեկման կարեւոր գործին, խթանել հայագիտական կենտրոնների հետ հարաբերությունների ամրապնդումն ու խորացումը, իրականացնել հայ տպագիր ժառանգության եւ փաստաթղթերի թվայնացման, թվային գրադարանի ստեղծման, թվայնացման միջոցով վտանգված նյութերի երկարաժամկետ պահպանության ծրագրեր։

Համագործակցության շրջանակներում Մայր Աթոռի Մատենադարանը ներգրավվում է «Հայ պարբերական մամուլի համահավաք գրացուցակ»-ի եւ հայ հնատիպ ու վաղ շրջանի գրքերի համահավաք շտեմարանների ձեւավորման աշխատանքներում։ Հետագա տարիներին համագործակցության եւ գրափոխանակության շրջանն ավելի է ընդլայնվում՝ ընդգրկելով նաեւ մարզային եւ համայնքային տարբեր գրադարաններ եւ կրթական հաստատություններ։

Մատենադարանի գիտահետազոտական գործառույթը ենթադրում է կառուցում առկա հավաքածուների, Հայ Առաքելական Եկեղեցու, հայ տպագրության պատմության եւ հայագիտական տարաբնույթ հարցերի ուսումնասիրություն, հնատիպ գրքերի գիտական անձնագրերի կազմում, համապատասխան թեմաներով էլեկտրոնային շտեմարանների ստեղծում եւ ձեւավորում, ուսումնասիրությունների հիման վրա հոդվածների, զեկույցների պատրաստում, մատենագիտությունների եւ տարաբնույթ գրքերի, գրավոր տեղեկանքների կազմում, գիտաժողովների կազ-

մակերպում եւ մասնակցություն (նաեւ հանրապետական եւ միջազգային տարբեր գիտաժողովների), շնորհանդեսների կազմակերպում։

Գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար ընդգրկվում են ինչպես ներքին, այնպես եւ արտաքին ուժերը, գիտական միտքն ու ներուժը, նյութական միջոցները։ Մատենադարանի իրականացրած գիտական գործունեությունը միտված է Մայր Աթոռի դերի ու նշանակության ամրապնդմանը, աշխատակիցների՝ տարբեր գիտահետազոտական եւ գիտամեթոդական աշխատանքների ներգրավվածությանը։ Ահա ինչու շատ կարեւոր է Մատենադարանը դիտել որպես առանձին գիտական համակարգ։

Գործունեության տասը տարիների ընթացքում Մայր Աթոռի Մատենադարանը բազմիցս հանդես է եկել գիտական նախագծերով, որոնց մեջ առանձնահատուկ են գիտաժողովները, որոնք կազմակերպվում են գրեթե յուրաքանչյուր տարի բարձր մակարդակով, եւ որոնց մասնակցում են տարբեր ոլորտների գիտնականներ եւ գործիչներ։ Յուրաքանչյուր գիտաժողովի ավարտին տպագրվում է առանձին հոդվածների ժողովածու, ուր ներառված նյութերը ծառայում են գիտական նոր ձեռքբերումներին։ Գիտաժողովների շարքն ընդհատվեց համավարակի, այնուհետեւ 44-օրյա պատերազմի պատճառով, սակայն հավատարիմ իր սկզբունքներին՝ Մայր Աթոռի Մատենադարանը վերականգնում է արդեն ավանդույթ դարձած գործելաոճը. 2022 թ. հոկտեմբերի 6-ին կայանում է «Ս. էջմիածինը՝ գրքի հանգրվան» գիտաժողովը՝ նվիրված Մայր Աթոռ Ս. էջմիածնի Մատենադարանի հիմնադրման 10-ամյակին[24]։

Նշենք նաեւ, որ Մատենադարանի աշխատակիցներն իրենց հերթին պարբերաբար մասնակցում են Հայաստանում եւ Արցախում կազմակերպված տարբեր գիտաժողովների՝ ներկայացնելով ոչ միայն Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի մշակութային ժառանգությունը, այլեւ հայ գրավոր մշակութային ժառանգությունն ընդհանրապես։

Կառույցի գիտական գործունեության առանցքում որոշիչ դեր ունեն պարբերաբար կազմակերպվող շնորհանդեսները, որոնց ժամանակ ներկայացվում են ինչպես Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տպագրած գրքերը, այնպես եւ այլ կառույցների կամ անհատների տպագրություն-

[24] Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Սուրբ էջմիածինը՝ գրքի հանգրվան, «Քրիստոնյա Հայաստան», 2022, թ. 19, հոկտեմբեր Ա., էջ 5։

ները։ Հայագիտական, կրոնական, աստվածաբանական, բանասիրական բնույթի արժեքավոր հրատարակությունները ներկայացնում են Հայ Եկեղեցուն առնչվող տարաբնույթ հարցեր, հայ ժողովրդի գրական-մշակութային ժառանգությունը։ Բոլոր շնորհանդեսները կազմակերպվում են Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ։

Մայր Աթոռի Մատենադարանի գիտական գործառույթները չեն սահմանափակվում միայն գիտաժողովներով եւ շնորհանդեսներով։ Այս շարքում խիստ կարեւորվում են պարբերաբար կազմակերպվող առկա եւ համացանցային համաժողովները, որոնք է՛ւ սեփական ձեռքբերումները այլոց փոխանցելու արդյունավետ միջոց են, է՛ւ ոլորտում առկա տեղեկատվությանը տիրապետելու հրաշալի հարթակ։ Մայր Աթոռի Մատենադարանի աշխատակիցները հանդես են գալիս նիստ-պարապմունքներով՝ ներգրավելով գրադարանային ոլորտի ներկայացուցիչների եւ տարբեր կառույցների մասնագետների, նաեւ մասնակցում են տարաբնույթ դասախոսություն-քննարկումների, բանավեճերի, կլոր սեղանների, քննարկումների, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու նոր ծանոթություններ, համագործակցային կապեր, ներկայացնելու տարբեր խնդիրներ, փորձելով գտնել այդ խնդիրների լուծումները։ Որոշ աշխատակիցներ դասավանդում են Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում։ Նրանք ընդգրկվում են համապատասխան բուհերի, ինչպես նաեւ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» մասնագիտությամբ ավարտական քննական հանձնաժողովների կազմի մեջ, հանդես են գալիս որպես մագիստրոսական թեզերի ղեկավարներ եւ ընդդիմախոսներ։

Մայր Աթոռի Մատենադարանը կրոնի, աստվածաբանության, հայոց պատմության, գրականության, մշակույթի, հայագիտության վերաբերյալ տեղեկատվություն պարունակող խոշորագույն կառույցներից է։ Ամբողջ տեղեկատվությունն ամբարված է Մատենադարանի հավաքածուներում եւ սպասարկվում է ընթերցողներին ըստ պահանջի։ Այդ տեղեկատվությունը հավաքագրվում է գիտական-հետազոտական ամենօրյա աշխատանքի արդյունքում։

Մայր Աթոռի Մատենադարանը գիտահետազոտական կենտրոն է։ Ասվածի վառ վկայությունն են աշխատակիցների՝ Մայր Աթոռի եւ

Հանրապետության գիտական ամսագրերում տպագրած գիտական ուսումնասիրությունները։ Բացի հոդվածներից, իրականացվում են խմբագրական եւ հետազոտական աշխատանքներ։ Մայր Աթոռի Մատենադարանի գիտական գործունեությունը սերտորեն առնչվում է կառույցում պահպանվող արժեքավոր տպագիր ժառանգությանը, որի ուսումնասիրությունը նոր լույս է սփռում դեռեւս անլուծելի թվացող հարցադրումների վրա։

Մայր Աթոռի Մատենադարանը չի սահմանափակվում միայն վերոնշյալ գործառույթներով։ Այն պետության եւ հասարակության մի մասն է եւ ժողովրդի համար կարեւոր իրադարձությունների մասնակիցը։ Դրա վառ վկայությունն է այն, որ 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում աշխատակիցների ջանքերով Հայոց բանակի զինվորներին ուղարկվում է շուրջ 1500 օրհնված խաչ, մատենադարանականներն այցելում են Յոլչանի անվան արյունաբանական կենտրոն եւ արյուն հանձնում Արցախյան պատերազմում վիրավորված զինծառայողների համար, մասնակցում առաջնագծի համար քողարկող ռազմական ցանցեր պատրաստելու գործին։

Մատենադարանի գործունեությունն ընթանում է ժամանակի պահանջներին համահունչ։ ԻԱ. դարում տեղեկատվական միջոցների բուռն զարգացման արդյունքում «թվայնացված գիրք», «թվային գրադարան» հասկացությունները իրենց լայն կիրառությունն են գտել մեր կենցաղում, եւ առանց թվային գրադարանների այսօր դժվար է պատկերացնել կրթական գործի կազմակերպումը, գիտահետազոտական աշխատանքների կատարումը եւ տեղեկատվության որոնումն ու օգտագործումը։ Այդ պատճառով Մատենադարանը նպատակադրվել է թվայնացնել իր հավաքածուները։

2018 թ. փոքրիկ փորձ է արվում գրքային ֆոնդը եւ ընթերցողների սպասարկման գործընթացը ավտոմատացնելու ուղղությամբ, որի արդյունքում կազմված էլեկտրոնային քարտարանը թույլ է տալիս արագ կատարել անհրաժեշտ տեղեկատվության որոնումն ու սպասարկումը։ Դա, սակայն, լոկ տեղային հասանելիություն ուներ եւ համատեղելի չէր ստանդարտացման միջազգային կազմակերպության ընդունած համաձայնագրերի հետ, ինչի հետեւանքով այլ գրադարանների էլեկտրոնային քարտարաններից եւ փաստաթղթերից օգտվելը, բնականաբար, հնարավոր չէր։ Ուստի թվայնացման շրջանակներում նախատեսվում է ստեղծել

մի քարտարան, որ կհամապատասխանի ստանդարտացման միջազգային կազմակերպության ընդունած համաձայնագրերին։ Տարիների աշխատանքն այսօր ունի տեսանելի եւ շոշափելի արդյունք։

Մատենադարանը կիրառում է «Կոհա» (Koha) *գրադարանային համակարգը, որը լայն տարածում ունի ողջ աշխարհում։ Այն համատեղելի է գրադարանագիտության եւ տեղեկատվական գիտության բնագավառներում ընդունված եւ գործող միջազգային չափանիշներին, աշխատում է բազմալեզու միջավայրում։ Համակարգի միջոցով ընթերցողները հնարավորություն ունեն առանց Մատենադարան այցելելու ստուգել իրենց անհրաժեշտ գրքերի առկայությունը, առցանց պատվերներ կատարել՝ առավել արդյունավետ դարձնելով Մատենադարանի սպասարկման գործընթացը*[25]*։*

2018 թվականից սկսած՝ Մատենադարանը Հայաստանի ազգային գրադարանի եւ ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի հետ ընդգրկվել է հայ հնատիպ գրականության միասնական քարտարանի ստեղծման գործընթացներում՝ տրամադրելով այն գրականության թվայնացված ձեւաչափերը, որոնց եզակի օրինակները պահպանվում են միայն մատենադարանում եւ բացակայում են համընդհանուր քարտարանից։

Շարունակվում են լրիվ բնագրային շտեմարանների կազմման եւ ձեւավորման աշխատանքները։ Նորագույն սարքերի ձեռքբերման շնորհիվ արագացավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանի գրքերի թվայնացման եւ ընթերցողների սպասարկման գործընթացը։

Ներկայումս Սուրբ Էջմիածնի Մատենադարանի պահոցների թվայնացման հիմնական աշխատանքներն ուղղված են բնագրային շտեմարանի կազմմանը։ Էջ առ էջ թվայնացվում է առկա գրականությունը՝ առաջին անհրաժեշտության եւ բացառիկության սկզբունքով՝ անշուշտ, նախապատվություն տալով կրոնական եւ հայագիտական գրականությանը։ Կատարված աշխատանքները պահպանվում են մատենադարանի տվյալների շտեմարանում՝ ինչպես անմշակ, այնպես եւ մշակված տարբերակներով։ Հետագայում՝ համապատասխան ծրագրային ապահովում ունենալու պարագայում, արագորեն ամբողջացնելու համար։ Թվայնացման շնորհիվ հնարավոր է Մատենադարանի գրքային պաշարից օգտ-

[25] Մ. Գրիգորյան, *Էլեկտրոնային շտեմարանները՝ գրադարանների զարգացման հարթակ, Մրցունակ կրթության եւ գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում։ Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երեւան, 2022, էջ 98–107։*

վել ցանկացողներին արագ եւ արդյունավետ կերպով տեղեկատվություն տրամադրել աշխարհի ցանկացած վայրում, ցանկացած ժամանակ։

Թվայնացման շնորհիվ հասանելի են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագրերը «Արարատ» եւ «Էջմիածին» պարբերականները, որոնցից կարելի է օգտվել ազատ օգտագործման սկզբունքով։ Աշխատանքներ են տարվում նաեւ Մայր Աթոռի Մատենադարանում առկա պարբերականների թվայնացման եւ էլեկտրոնային գրացուցակի ստեղծման ուղղությամբ։ Հայերեն եւ օտարալեզու պարբերականների համար ստեղծվել են առանձին էլեկտրոնային գրացուցակներ, որոնց մեջ պարբերականները դասավորված են խիստ այբբենական կարգով։

*Մայր Աթոռի Մատենադարանն ունի իր կայքէջը, որի բովանդակային եւ տեխնիկական համալրման աշխատանքները կրում են ամենօրյա բնույթ։ Աշխույժ կերպով գործարկվում է Մատենադարանի Դիմագիրքը (*Facebook*), որտեղ լուսաբանվում են Մատենադարանում կազմակերպվող միջոցառումները։ Սպառիչ պատասխաններ են տրվում ընթերցողների եւ հանրության ուղարկած բազմապիսի նամակներին։*

РЕЗЮМЕ

Первопрестольный Св. Эчмиадзин, идя навстречу требованиям времени, в течении веков сохранил приверженность созданию и сохранению армянской печатной литературы, благодаря чему до нас дошли ценные образцы. Благодаря отеческому вниманию Католикоса Всех Армян Гарегина II этот духовный центр по сей день выполняет исторически унаследованные функции. Ярким свидетельством этого являются издательский отдел Святого Эчмиадзина и матенадаран «Вече и Тамар Манукян», созданные под непосредственным руководством Его Святейшества по заранее разработанному плану. Учреждая эти два важных центра, Католикос Всех Армян Гарегина II ставил задачу решить все проблемы армянского печатного наследия, от создания до сохранения.

SUMMARY

The Mother See of Holy Etchmiadzin, in spite of the changes and demands of time, has throughout the centuries adopted a policy of creating and preserving the Armenian printed heritage, thanks to which valuable samples have survived. Thanks to the daily care and patronage of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, this spiritual center still performs its historically inherited functions.

The Publishing department and "Vatche and Tamar Manoukian" Matenadaran (library) of the Mother See of Holy Etchmiadzin, established under the direct management of His Holiness Karekin II according to a prearranged plan and purpose, are vivid testimony to this. By creating these two important centers, the Catholicos of All Armenians solved all the problems of the Armenian printed heritage, from creation to preservation.

СОДЕРЖАНИЕ

Редакционная 5

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Слово **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** на конференции, организованной по случаю десятилетия основания матенадарана «Вече и Тамар Манукян» Первопрестольного Святого Эчмиадзина 7

Слово **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** произнесенное на встрече с участниками 92-го съезда Всеармянского благотворительного союза 10

Слово **ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН,** по случаю 92-го съезда Всеармянского благотворительного союза 13

ПРОПОВЕДИ

Проповедь **АРХИМАНДРИТА ГАРЕГИНА АМБАРЦУМЯНА**, произнесенная во время Св. Литургии в церкви Св. Гаяне 16

50-ЛЕТИЕ СВЯЩЕННИЧЕСКОГО РУКОПОЛОЖЕНИЯ ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II

ТИГРАН МАНСУРЯН — Долгих лет Патриарху Всех Армян 21

ГАГИК АРУТЮНЯН — Крест Его Святейшества 24

РУБЕН МИРЗАХАНЯН — Преданный служитель образования 28

ГЕВОРГ ДАНИЕЛЯН — Всенациональный предводитель 32

ГАГИК ГАЗИНЯН — Из недр памяти 40

ВАРДАН ДЕВРИКЯН — Полувековой непрерывный путь духовного и преданного служения 44

НАРЕК САРГСЯН — Строительная деятельность Его Святейшества Гарегина II 55

ИЕРОМОНАХ АСОГИК КАРАПЕТЯН — Эпизод из начала 50-летнего священства Патриарха Всех Армян 58

АВЕТИС КАЛАШЯН — Встречи на высшем уровне Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса Всех Армян 76

МАЙЯ ГРИГОРЯН — От создания до сохранения 118

CONTENTS

Editorial 5

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS,** on the occasion of the conference dedicated to the 10th anniversary of the establishment of "Vatche and Tamar Manoukian" Matenadaran 7

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS,** at the meeting with the participants of the 92nd General Assembly of the Armenian General Benevolent Union 10

Message of **HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS,** on the occasion of the 92nd General Assembly of the Armenian General Benevolent Union 13

SERMONS

Sermon delivered by **ARCHIMANDRITE KAREKIN HAMBARDZUMYAN** during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery 16

50th ANNIVERSARY OF HIS HOLINESS KAREKIN II'S PRIESTLY ORDINATION

TIGRAN MANSURYAN — Longevity to the Armenian Patriarch. 21

GAGIK HARUTYUNYAN — His Holiness' cross… 24

RUBEN MIRZAKHANYAN — The education enthusiast. 28

GEVORG DANIELYAN — The nationwide leader 32

GAGIK GHAZINYAN — In memory twists 40

VARDAN DEVRIKYAN — A half-century uninterrupted spiritual service and dedication 44

NAREK SARGSYAN — Karekin II: Construction activity of His Holiness 55

REV. FR. ASOGHIK KARAPETYAN — An episode from the beginning of the 50-year priesthood of the Catholicos of All Armenians 58

AVETIS KALASHYAN — High-level meetings of His Holiness Karekin II, Supreme Patriarch and Catholicos of All Armenians. 76

MAYA GRIGORYAN — From creation to preservation 118

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական 5

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
խօսքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանի հիմնադրման տասնամեակին նուիրուած գիտաժողովին. . . 7

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
խօսքը Հայկական բարեգործական ընդհանուր միութեան 92-րդ համագումարի մասնակիցների հետ հանդիպմանը 10

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
խօսքը Հայկական բարեգործական ընդհանուր միութեան 92-րդ համագումարի առիթով 13

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ քարոզը՝
խօսուած Ս. Գայանէ վանքում մատուցուած Ս. Պատարագին 16

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ –50

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆ – Երկար օրեր Հայոց Հօր 21

ԳԱԳԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ – Վեհափառի խաչը... 24

ՌՈՒԲԷՆ ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆ – Կրթութեան նուիրեալը. 28

ԳԷՈՐԳ ԴԱՆԻԷԼԵԱՆ – Համազգային առաջնորդը. 32

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆԵԱՆ – Յիշողութեան ոլորաններում 40

ՎԱՐԴԱՆ ԴԵԻՐԻԿԵԱՆ — Հոգեւոր սպասաւորութեան ու նուիրումի կէսդարեայ շարունակուող ուղի 44

ՆԱՐԵԿ ՍԱՐԳՍԵԱՆ — Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի շինարարական գործունէութիւնը 55

Տ. ԱՍՈՂԻԿ ԱԲՂՅ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ — Մի դրուագ Ամենայն Հայոց Հայրապետի 50-ամեայ քահանայագործութեան սկզբից 58

ԱՒԵՏԻՍ ՔԱԼԱՇԵԱՆ — Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր մակարդակի հանդիպումները 76

ՄԱՅԵԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ — Արարումից մինչեւ պահպանում 118

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գէորգեան հոգեւոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխաւորութեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal “Etchmiadzin”

Էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374–10) 517–276

Ստորագրուած է տպագրութեան՝ 15.11.2022 թ.

ՄԵԾ ԱՂՕՆ ՄՐԲԸ
ՄԻԱԾՆԻ
ՏՊԱՐԱՆ

ՄԵԾՐ ԱՂՕՆ ՄՐԲԻ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ